

2259

491-99-5  
U-13

1910

2010

42002

12/114

Պ. Ա. Բ Ե Գ Ե Ռ Ե

495  
6-ԿԲ

491.542-5

Ա-13

Այ

# ՏԱՐՐԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ԿԱՆՈՒՆԵՐՈՎ  
ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ ԵՒ ԲԱՌԱՑՈՒՅՆԿԱՎ

1004  
1004



ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿԱԾ ԵՒ ՀՆԴԱՐՁԱԿԱԾ

ԹԻՖԼԻՍ  
ԷԼԵՔՏՐԱՆԱԿԱՆ ՏՊԱՐԱՐԱԿԱՆ ՈՐ. և ԱՐԱՆԵԱՆԻ ՊՈԼԵԱ. 7.  
1910

## Յ Ա. Ռ Ա. Զ Ա. Բ Ա. Ն

Այս երրորդ տպագրութեան ոէջ աւելացած են մի քանի քերականական ուսումնաբներ, որ առաջին (1907 թ.) և երկրորդ (1908 թ.) տպագրութիւնների ոէջ կարեոր չէինք համարել, ծխական գպրոցների համար: Սրանով գասագրքիս նիւթը սիկողմից բոլորովին համապատասխան է դառնում Դպրոցական նախագծի մէջ դրած քերականութեան ծրագրին, միւս կողմից գալիս է բաւականութիւն տալու գասագիրքս գործածող շատ ուսուցիչներից ցուցումներին՝ նիւթը փոքր ի՞նչ ընդարձակելու և մօտեցնելու պետական գպրոցների ստորին գասարանների ուսուաց և զուի քերականութեան ծաւալին: Այս փոփոխութեանը բնականարար հատեկանութեան ծաւալին: Այս փոփոխութիւններ նիւթի գասաւորութեան և են և թեթև փոփոխութիւններ նիւթի գասաւորութեան բացատրութեան նկատմամբ:

Առաջին հատուածը, որ երրորդ պատրաստականի դասընթացն է, վերաբերում է գլխաւորապէս ուղագրութեան, որի համար կարելի է օգտուել և մեր «Ուղղագրական յօդւածներից», «Գայլ և գայլի պատահարներ» (Թիֆլիս. 1908 թ.):

Երրորդ հատուածի մէջ աւելուցած նիւթով ամբողջանում են մի կողմից բառերի տեսակներն ըստ նշանակութեան, միւս կողմից նախադասութեան անդամները կամ խօսքի մասերը: Դա առջին գասարանի դասընթացն է, միայն «ասացուածի» (Փրազի) ուսումը կարելի է պահել երրորդ գասարանի համար:

Երրորդ հատուածն ընդարձակուելով՝ բաժանուած է երկուուի: Երրորդի մէջ ուսուաց լւզուի վարժապետների ցանկութեան համար՝ առաջ է դրուած հայցական հոլովի ուսումը և աւելացած են ծանօթութիւններ սակրայի և յատկութեան և ստիճանների մասին, ինչպէս և գոյականի լրացումները:

Չորրորդ հատուածի մէջ աշխատել ենք տալ շարահիւսութեան (սինտաքսիսի) ամփոփ ուսումնա աւելացնելով գլխաւորապէս հուլվականի սշանակութիւնն ու գործածութիւնները և նախադասութիւնների տեսակները: Դրանով համառօտ ծաւալով ամբողջանում թիւնների տեսակների չեն, այս ծաւալը նոյն իսկ աւելի է և ոչ պակաս:

## ԱՐԱՋԻՆ ՀԱՏՈՒԱԾ

ՀՆՁԻԻՆ, ՏԱՐ ԵՒ ՎԱՆԿ

ԼԵԶՈՒԻ ԲԱՂԱԴՐԻՉ ՄԱՍԵՐԸ

1.

Խօսելիս մեր մաքերն ենք յայտնում ուրիշներին բառերով: Խօսքը կամ նախադասութիւնը մտածութեան արտայայտութիւնն է բառերով:

Խօսքը կազմում է մի կամ մի քանի բառից: Օրինակ՝ զնացի մի բառ և մի խօսք է. իսկ նև այսօր զնացի զրունելու չորս բառ և մի խօսք է:

Բառը կազմում է մի կամ քանի վանկից: Օրինակ՝ պատ բառը միավանկ է, իսկ քաղաք բառը երկու վանկանի: Ամեն վանկ արտասնւում է մի անդամից, մի շնչով: Միավանկ բառերն ուրեմն արտասնւում են մի անդամից, իսկ բազմավանկ բառերն արտասնւում են վանկ վանկ, այսինքն բանի վանկ կայ բառի ոէջ, բառն այնքան մասի է բաժանւում: Օրինակ՝ դասարան երեք վանկանի բառն արտասնւում է՝ դաս-աս-ըան:

Վանկը կազմում է մի կամ մի քանի հնչիւնից: Օրինակ՝ արա-ըած բառի առաջնակը՝ ա մի հնչիւն է, երկրորդ վանկը՝ իսկ երկու հնչիւն է, իսկ երրորդ վանկը՝ բած երեք հնչիւն է:

Հնչիւնները լեզուի ամենապարզ բաղադրիչ մասերն են, որոնք նոր մասերի չեն վերածւում:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԻՆ:—Որոշել թէ ամեն խօսք քանի բառից է կազմուած, ամեն բառ՝ քանի վանկից և ամեն վանկ՝ քանի հնչիւնից:  
Օրինակ՝ Մեզնից շատ առաջ կար մի թագաւոր:—Մի խօսք կազմուած վեց բառից: Առաջին բառ մեզնից, երկու վանկանի՝ մեղնից: Առաջին վանկ մեղ, կազմուած երեք հնչիւնից՝ մ, ե, զ: Երկրորդ վանկ նից, կազմուած երեք հնչիւնից՝ ն, ի, ց: Երկրորդ բառ շատ, միավանկ. կազմուած երեք հնչիւնից՝ շ, ա, ա: Երրորդ բառ առաջ, երկու վանկանի՝ ա-ռաջ: Առաջին վանկ ա, կազմուած մի հնչիւնից և այն:

2. *ՏԱՐԵՐ ԵՒ ՈՒՐԻՇ ԼՇԱՆՆԵՐ*

Ամեն բան, որ ասում, խօսում ենք, կարելի է նշանակերով գրել և կարդալ: Հնչիւնների նշանագրերն ասում են զիր կամ տառ: Հնչիւններն արտասահման են և լսում, իսկ տառերը գրում կամ տպում են և կարդացում:

Ամեն տառ ունի երկու ձև՝ մեծատառ (գլխատառ, գլխագիր) և փոքրատառ:

Տառերի սովորական շաբաթ կոչւում է այբուբեն։  
Հայոց լեզուի այբուբենն ունի 38 տառ, որ են՝

Ա.ա Բ.բ Գ.գ Դ.դ Ե.ե Զ.զ Է.է Ը.ը Ժ.ժ Խ.խ Լ.լ  
Խ.խ Ծ.ծ Կ.կ Հ.հ Զ.զ Ղ.ղ Ճ.ճ Մ.մ Յ.յ Ն.ն Շ.շ Ո.ո Չ.չ Պ.պ  
Զ.զ Ռ.ր Ս.ս Վ.վ Տ.տ Ց.ց Խ.խ Փ.փ Ք.ք Օ.օ Ֆ.ֆ:

Այս տառերից զատ կայ նաև և նշանագիրը, որ կազմուած է Եւ տառերի միութիւնից:

Բացի տառերից կան և հետևեալ նշանները, որոնք  
առանձին գործածութիւն ունին.

1. Վերջակէտ (*s*), միջակէտ (*z*), ստորակէտ (*t*), բութ (*'t*):
  2. Շեշտ (*'c*), հարցական նշան (*"c*), բացագանչական նշան կամ երկար (*"'*):
  3. Զակերտ (*«z*), փակագիծ (*z*), գիծ (*—*), ենթամնայ (*z*)

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ. — Վերնագիրները սովորաբար տպւում են մեծատառով։ Գլխատառով սկսւում են՝ գրուածքի, տողագլուխների ու ոտանաւորների տողերի սկզբի բառերը, ինչպէս և վերջակէտից յետոյ եկող առաջին բառերը։

**ԶԱՅՆԱԻՈՐ ԵՒ ԲԱՂԱՁԱՅՆ ՏԱՌԵՐ**

Վանկը կազմւում է մի կամ մի քանի հնչիւնից:

Զայնաւոր կոչւում են այն հնչիւնները, որոնք մենակ, առանց ուրիշ հնչիւնի, կարող են վանկ կազմել. իսկ բաղադրայն ասւում են այն հնչիւնները, որոնք մենակ չեն. կարող վանկ կազմել, վանկի էական մասը ձայնաւորն է. առանց ձայնաւորի վանկ չկայ: Բաղաձայնները մենակ կամ ուրիշ բաղաձայնների հետ կցւում են որևէ ձայնաւորի առաջից կամ ետևից և միասին կազմում են մի վանկ: Օրինակ՝ ազատ բառի առաջին վանկը մի հնչիւն է՝ ա ձայնաւոր. իսկ երկրորդ վանկը երեք հնչիւն է՝ միջին ա ձայնաւոր, որին առաջից միացած է զ բաղաձայնը, իսկ ետևից տ բաղաձայնը:

Զայնաւոր և բաղաձայն հնչիւնների նշաններն ևս  
ասւում են ձայնաւոր և բաղաձայն տառեր։

Զայնաւոր հնչիւններն են՝ *w*, *t*, *v*, *b*, *o*, *ու*:

Ու հնչիւնի համար առանձին տառ չկայ այբբենա-  
րսնում, այլ գրւում է ու երկտառով։ Իսկ է և օ հնչիւն-  
ների համար կան նաև եւ և ու տառերը։

Բաղաձայն տառերն են՝ բ, դ, դ, դ, թ, ժ, լ, ի, ծ,  
կ, հ, ձ, ղ, ճ, մ, յ, ն, շ, չ, պ, ջ, ո, ս, կ, տ, ր, ց, ւ,  
փ, ք, ք:

Ի (1) տառը բաղաձայն է վ հնչիւնով, բայց ի տառից յետոյ երբեմն ու ձայնաւորի հնչիւն ունի, ինչպէս հարիւր, միւս բառերի մէջ։

Յ տառը բառերի սկզբում ունի հ տառի հնչիւն, օրինակ՝ յանցանք (=հանցանք). բառերի վերջում գրում է ա և ո ձայնաւորներից յետոյ և սովորաբար անձայն է մնում, ինչպէս ծառայ, կրօայ, յետոյ:

#### 4. Յ ԿԻՍԱԶԱՅՆ ԵՒ ԵՐԿԲԱՐԲԱՌՆԵՐ

Յ տառը բառերի միջում, երբեմն և վերջում, ա և ո ձայնաւորներից յետոյ կէս ի ձայնաւորի նշան է և կոչում է կիսաձայն, օրինակ՝ փայտ, այծ, հայ, գոյն, լոյս ծառայական, գոյութիւն բառերի մէջ:

Յ կիսաձայնի հնչիւն ունին նաև և տառը ա, օ ձայնաւորներից առաջ (կեանք, եօթը) և ի տառը և (=ու) ձայնաւորից առաջ (իւր, միւս):

Երբ մի կիսաձայն և մի ձայնաւոր միանում և իւրի մի վանկ են արտասանուում, կազմում են երկրարրառ, Եռկրարրառներն են՝ այ (այս, պայծառ, հայ), ոյ (լոյս, գոյն), եա (սեսեակ, կեանք), եօ (եօթը, արդեօք), իւ (իւր, հիւսիս):

Բացի սրանցից՝ բառամիջում երկու ձայնաւորի մէջ ա և ո ձայնաւորներից յետոյ միշտ գրում է յ կիսածայնը, որ արուասանութեամբ միանում է յաջորդ ձայնաւորին և նրա հետ միասին մի երկրարրառ է կազմում: Օրինակ՝ հրամա-յական, ծառա-յութիւն, գոյութիւն, շոյել:

#### 5. ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

1. Բ ձայնաւորը բառերի սկզբում և վերջում գրում է (ընծայ, ընկնել, տունը), իսկ միջում սովորաբար չի գրում. օրինակ՝ արտասանում ենք զըտնել, լըց-

նել բայց գրում ենք սովորաբար զըտնել, լցնել: Երբեմն նել բառերի սկզբում ևս սկ, սպ, ստ, սթ, շկ, շպ, շտ, զը, զզ բաղաձայններից առաջ լսում է ը ձայնաւորը, բայց սովորաբար չի գրում: Օրինակ՝ արտասանում ենք՝ Այն մարդն ալասում է քեզ, բայց գրում ենք՝ Այն մարդն ալասում է քեզ:

2. Տ ողագարձ: Երբ բառն ամբողջ չի տեղաւորում տողի վերջում, մի մասր տակի տողն ենք տանում, կամ տողագարձ ենք անում: Այդ ժամանակ տողի վերջում գրում է ենթամնայ (-) նշանը:

Տողագարձ անելու համար պէտք է բառերը կանոնաւոր կերպով վանկ վանկ վարտասանել և ամբողջ վանկը կամ վերի տողում գրել կամ տակի տողը անց կացնել: Միավանկ բառերը և երկրարրառները կարելի չէ բաժանել, ուստի յ կիսաձայնը յաջորդ ձայնաւորից անբաժան է մնում:

Տողագարձի ժամանակ ը ձայնաւորը միշտ գրում է իրարուց բաժանուած վանկերի մէջ, ինչպէս զըտնել քաղ ցըր:

ՎԱՐԺՈՒԹԻՒՆԵՐ: — 1. Օրինակ՝ թագաւոր, թագաւոր: Թագաւոր, տարի, ծաղիկ, բաժակ, զիշեր, ամիս, ազատել, ուրախ, իրկուն, աղաչանք:

2. Օրինակ՝ պարտիզան, պարտիզ-պան: Պարտիզան, սաստիկ, կարմիր, թռոնիկ, երկու, վախկոտ, աղբիւր, եղբայր, տախտակ, ազգական:

3. Օրինակ՝ մտնել, մըտնել: Մտնել, գտնել, կտաւ, գրկարաց, շրջապատել, բռնել, պնդել, թնդանօթ, երկնքից, տղմոտ, խփեց, սպասել, զգալ, զբոնել, մանր, ծանր, քաղցր, բարձր, աստղ, արկդ:

4. Օրինակ՝ զարթնել, զարթնել: Զարթնել, վարձկան, որսկան, տրտմել ընկնել, խրտնել, Պարսկաստան, Հնդկաստան:

5. Օրինակ՝ երկել (=երեւել), երեւել,  
երել, տերեից, վերեռում, թեթևութիւն, պարզել, թեաւոր,  
արեածաղիկ, ձևական:

6. Օրինակ՝ հրամայել, հրամայել:

Հրամայել, հրամայող, հրամայական. վայել, փայփայել,  
խնայել, կայարան, կայուն, երկնային, ծովային, գնայի, կարդայի,  
խաղաինք, զարմանայինք, դողայիք. ծառայութիւն, ծառայելով,  
քահանայութիւն, հայեացք:

7. Օրինակ՝ շոյել, շոյել:

Շոյել, գոյական, գոյութիւն, յարգոյապատիւ, հայհոյանք,  
հայհոյել, հոյակապ:

3. Ո և Ո ձայնաւորներ: Ո տառի բուն հնչիւնն  
է օ. բայց բառերի սկզբում սովորաբար արտասանւում է  
իբրև վո (վօ), և այդ գէպքում ամեն անգամ երբ վո (վօ)  
է լսում, գրւում է միայն ո տառով, ինչպէս՝ ողորմել,  
ոլորել, ոզի, ոտ, որդի բառերի մէջ: Բացառութիւն կազ-  
մում են՝ ով, ովլիանոս, ովսաննա, ովսզիս բառերը, ո-  
րոնց սկզբի ո՞ն արտասանւում է իբրև օ, և վո՞մակ բառը:

Օ տառով գրուող բառերը համեմատաբար սակաւա-  
թիւ են: Տես Ուղղագրական բառացուցակը:

ՎԱՐԺԻԹԻՒՆՆԵԲ: — 1. Որդեսկ, լսիր հօրդն խրատը: Պա-  
տուիր քո հօրն ու մօրը: Մօր, մօրական, մօրաքոյր, մօրեղբայր:  
Հօր, հօրական, հօրեղբայր, հօրաքոյր: — Հոր, ջրհոր: — Այսօրուայ-  
փուշը, էգուցուայ նուշը: Անդ հեռու ալկոր հայր ունիմ սգաւոր,  
որ միակ իր որդուն սպասում է օրէցօր: Բարօրութիւն, կէսօր,  
միջօրէ: — Արի ապրենք եղբօր պէս: Եղբօրորդի, հօրեղբօր: — Խոս-  
քը մնիրը տունը մնիրը: Խօսել, խօսակցութիւն, անխօս, ստախօս,  
զուարձախօս: — Գիշերը թաց աչքիս քունը մօտ չի գալիս: Մօտիկ,  
մօտենալ: — Ծոյլ երեխան դեռ չի վեր կացել, աղօթքն արել: Ա-  
ղօթել, աղօթարար: — Ծոյլ տղայի կօշիկները շունն է տարել մըր-  
մըռալով: Կօշկակար: — Ուսումնարանը սիրուն է իր խելօք, ժիր  
մասուկներով: Խելօքանալ, խելօքութիւն: — Ուրիշ շատ տղայք  
կան աղբատ ու անօգնական, նորա հայր ու մայր չունին. սև չոր  
հացի կարօտ են: Օգնական, օգնել, օգնութիւն, — կարօտ, անկարօտ:

2. Անտառի խորքում մի ճօճ կար կապած: Ճօճել, ճօճա-  
նակ: — Երկուշարթի հաց կը թխեմ, երեքշարթի լոշ կը թրջեմ:  
Ով մեզանից եօթը գիւղի անուն տայ վրայ վրայ, շուտ շուտ,  
գդալով նա ուտի: Եօթներորդ, եօթանասուն, եօթանասներորդ,  
եօթանասուն և եօթը: — Պօղոսը մեծ զօրքով գնաց, իր հօրն  
աղատեց գերութիւնից: Զօրք, զօրութիւն, զօրեղ, զօրաւոր,  
զօրանալ, զօրանդէս, զօրապիտ, անզօր, մեծազօր, լիազօր,  
հզօր, — զօռ (զօր) անել, զօռով, (զօրով): — Ծանօթ անձանօթ  
նրան յարգում են: Ծանօթանալ, ծանօթութիւն: — Կենդանիներից  
մըն է ամենից օգտակարը: Օգուտ, անօգուտ, օգտել: Դէհ, քաշե-  
ցէք, սիրուն եղներ, առաջ տարեք արօրը: — Ցուրտն ու տաքը,  
կոշտն ու կակուզը բոլոր մարմնով եմ շօշափում: Շօշափելիք:

3. Պառաւն իր բերնի պատառը նրա հետ կիսեց, սիրով յօ-  
ժար նրա հետ կիսեց: Յօժարել, յօժարութիւն, սիրայօժար: Օ՛լս,  
օլս, արդեօք կարժանանամ այն օրին: — Այս ճրագը շատ աղօտ  
լոյս է տալիս: — Եկ, աբեղածագ, թող արտ ու արօտ, օրօրէ  
տղիս, քնի է կարօտ: Արօտատեղ: Օրօր ասել, օրօրոց, օրօրան:  
Դաշտը ծածկուեց ոչխարների հօտերով: Ոչխարի հօտ, վարդի  
հօտ: — Ջաղացը եթէ յանկարծ կտրէ ձայնը, լոէ, սառչի, — ինչպէս  
մի թունդ թնդանօթից՝ ջաղացպանը վեր կը թռչի: Անօթ,  
թնդանօթ: — Առաջին դու խօսք ականջիս հասած, դու սիրոյ բաղ-  
ցիկ առաջին յօդուած: Այդ յօդուածը դեռ չենք կարդացել: Յօդ:  
Այսօր տօն է ծննդեան, աւետի՛ս: Տօնել, տօնախմբութիւն: — Դրօ:  
շակները ծածանւում են:

4. Այսօր շատ տօթ է: Քաշիր, եղը, ուսիդ մատաղ. ճիպտին  
արա, բջիր, հօտաղ: Արտար բարձրացաւ ցօղուն արձակեց ու հաս-  
կեր բռնեց, Արտերը ծածկուեցան ոսկեզօծ հասկերով: Օծել, ոս-  
կեզօծել: Այս մարդ, վեր կաց, սառը ջրով լուացուիր, գօտիդ կապէ,  
գերանդիդ առ, գաշտ հասիր: — Նարօտ բերէք կանաչ-կարմիր,  
կապէնք վկերն երկուսին: — Նապաստակը ցատկելով մտաւ ցօղա-  
թաթախ կանաչկուտը: Յօդ, ցօդել: — Գիւղումը կար մի ծղնօտա-  
ծածկ տանիքով տուն: Ծղոտ: — Ակսեց առատօրէն անձրէ տեղալ:  
Օրէն, օրէնք, անօրէն, մարդկօրէն: — Տեսնում է յանկարծ իր ա-  
ռաջ կանգնած մի տարօրինակ մարդ: Օրինակ, անօրինակ: —

5. Նա հիմա ազատ թագունի գառած՝ առօք ու փառօք ճա-  
շի է նստած: — Ծուռ ակօսը մեծ եղնից է լինում: — Զարանձի

այծերը տմումբացրին ձիգ մօրուքները:—Եկ, զնանք զբօսնելու: Զբօսանք: Մի թաղաւոր կար, անունն էր Պոօշ:—Պոօշ (շըրթունք):—Անօթի (քաղցած) փորով ման է՝ դալիս:—Պաշտօնեան ճանապարհ ընկաւ իր մեծի հրամանը կատարելու: Պաշտօն, անպաշտօն, պաշտօնապէս —Քրիստոս քօղն երեխն, հրեշտակները չորս դին, երկնքէն իջաւ, խաչապաշտից տները մտաւ: Թօղարկել:—Զատիկն արելուսով, Զրօրհնէրը ճրագլուսով: Օրէնեւ, տնօրհն էր, մեռոնօրհնէր:

6. Բողկի նօրն է լաւ:—Առաւոտեան զուարթ բացուած ծաղիկները կէսօրին թօշնեցին, թառամեցին:—Այսօր կրօնի դաս չունինք:—Յօնքը (ունք) շինելու տեղ աշքը հանեց: Այդ գիրքն ով է յօրինել:—Հասարակութեան մէջ յօրանջին ամօթ է:—Թօթափեցէք ճեր ոտքերի փոշին: Իրօք այդպէս է: Համառօտ խօսել, կարձառօտ գրել: Զանդակները դօղանջում են: Նրանց վասողը հատաւ: Նրանք վաղօրօք (սախօրօք) պատրաստութիւն էին տեսել:

4. Ե և ի ձայնաւորներ: Ե տառի բուն հնչիւնն է է. բայց բառերի սկզբում սովորաբար արտասանուում է իբրև յև (ու) երկբարբառ, ինչպէս՝ եզ, եկ, եղթայր բառերի մէջ:

Բառերի վերջում միշտ գրւում է միայն է տառը, օրինակ՝ մարգարէ, բազէ, ըռպէ, եթէ, ուտէ, խմէ: Մնացած դէպքերում լուվ գրւուղ բառերը համեմատաբար սակաւաթիւն են: Տես Ուղղ. բառացուցակը:

ՎԱՐԺՈՒԹԻՒՆԵՐ: 1. Ի սէր Աստուծոյ, ինայեցէք: Մէր, ընկերասէր, մարգասէր, ջանասէր: Սէր (կաթի):—Կատուն եկաւ վիշտիկ, վիշտիկ, հազար նազով ինչպէս հարսիկ: Զիզի քարը տես, տես, պսպղում է ոսկու պէս: Այսպէս այդպէս, այնպէս, նոյնպէս վերջապէս:—Դէպի մւր, ինձ ասա, թոչում ես այդպէս արագ:—Այս դէպքից յետոյ ծերր տուն դարձաւ:—Դու պատմէ, թէ ինչպէս ասատ անտէր ու խեղճ եմ ես. միշտ լալով, ողբալով կեանքս մաշուել, եղել կէս: Նա տէր ու տիրական չունի: Անտէր, տանուտէր, տէրտէր, պարտքատէր. տէրութիւն: Կէսօր:—Նրա խոփը գէմ առաւ քարին: Նրա դէմն առնելու հնար չկար: Նա դէմքը ծածկեց: Դէսք, ընդպէմ. տիրագէմ, թիսագէմին:—

Գօտին կազեց մէջը: Մէջ, գեղամէջ, մէջտեղ:—Նրանց մէջ վէճ ու կոփւ է սկսում:—ինչո՞ւ չշահնենք մէկ մէկու սիրտ թէկուց ցամաք հացով: Տասնումէկ, քսանեմէկ եր սունեմէկ:—Նա երեխաներից մէկի թէկիցն էր բռնել, մէկէլին շալակն առել:

2. Փայլուն արեւ արդէն մայր ժամաւ:—Դու լինչ պիտի տաս իմ այսքան աշխատանքի փոխարէն:—Աղուէսի դունչը խաղողին չհասաւ, ասաց՝ խակ է:—Պաս օրր իւղի տեղ ձէթ են բանեցնում:—Այ թէ լաւ արին, ծերուկ դու անգէտ: Երախտագէտ տգէտ, գրագէտ, հնարտգէտ: Գութանին եօթ զոյգ գոմէշ էին լծած: Զաղացաքարերը որ պտառում են, ամքողջ շէնքը գորդում է: Մէկնալիր վրագ, շէնք ու շնորհքից: Տնաշէն, քարաշէն, փայտաշէն, շէնանալ, շէն դիւդ, շէն տուն: Իմ մայրը շատ բարի էր, շատ անձնանուէր: Նուէր: Հրէս եկաւ եղրայր:

3. Ուր էր գէթ մի ժամ, մի րոպէտ տեսնէի նրան:—Իմ ունեցած չունեցածս այս տունն ու պարտէղն է: Դու պէտք է կատարես հօրդ պատուէրոր:—Պէտք, անակէտք, պէտքական:—Նա այսօր միծ հրաւերը ունի: Հոռաւէր:—Թիթենեները, բղէզնին ու կրէտները թոշում էին ծառերի շուրջը: Բոլորը մէկէն յարձակուեցին նրա վրայ:—Կօշկակար Մատթէոսն ու Թագէոսը շատ պատուէրներ էին ստանուած: Մենք տուն չունինք, ոչ ապաւէն էս լայն արձակ աշխարհնում:—Պէտք է օրէնքով դատաստան անել, որպէս զի արդարութիւն լինի: Մարդկօրէն բնականօրէն, օրէնսդիր, անօրէն:

4. Մարդ չպէտք է ուրիշին անէծք տայ:—Ինչո՞ւ ես այդպէս խոճուած ու խէթ խէթ նայում:—Այսօր մեր գպրցում հանդէս կար: Զօրահանդէս: Մենաք չպիտի վլէժ առնենք ուրիշներից: Վրէժինդրութիւն:—Շնորհակալ եմ, ուղուէս պարոն, որ ինձ չիս մոռացել, թէպէտ իմ միտու չէ, թէ մենք երբ ենք բարեկամ եղել: Ակսիցին գողալ, երերուել եղէգնի պէս:—Բարձր ժայռերից՝ փրփրած, կատաղած մի ջրվէժ էր իջնում: Գահավէժ անել:—Ինչո՞ւ մենք չենք հալածում քէնն ու ոխը մեր սրտից: Օրէնքքայի անիծում է նա (կոյրը) իր աշխարհ գալը: Գիւղացին իր պարտէզից շան չունեցաւ այն տարին: գիտէր ինչո՞ւ, —բարի էշը չիմանալով գործի լաւն ու գէշը թոչուների ետևից վազգելով անդամագար՝ կոխուակ էր պարտէզի ամեն բանը իշարար: Գէշ(=վատ), գադար, կոխուակ էր պարտէզի ամեն բանը իշարար: Գէշ(=վատ), գէշանալ, գէշութիւն: Գէշ=լէշ, դիակ, գիշատիչ:

5. Նա իր վրան էր առել իւր բոլոր գէնք ու զրահները: Անզէն, սպառագէն:—Փուշն արդէն յոյսը հատած, ճանկ ու ատամ սուր պատրաստած, կողքն վառ ով որ անց է կենում, քաշում է փէշն ու հարցում, թէ չմն տեսել մէկն ու մէկին, էն իրը ճային կամ չղջիկին:—Մէգ, մառախուղ պատեց երկիրը:—Ո՞ր է. ասաց, ի՞նչ է կորել. դուրս կանչեցէք՝ գայ ասպարէզ:—Նրանց խոտի դէզն այրուեց:—Ի՞նչ գէր են այս խոզերը, Գէրութիւն, գիրութիւն, գէրանալ, գիրանալ:—Եկէք, գահինսիր, ծովը ձգեցէք կախարդ պառաւին ու էս հրէշին: Նա էլ մեր հին ծէսերը չի բանեցնում:—Նրա վէրքն անբուժելի է,

6. Մայր, մէր, սանամէր,—հայր, հէր,—եղբայր, ախպէր,—վայր ընկնել, վէր ընկնել,—գայլ, գէլ,—ժար, ժէռ,—ծայր, ծէր—ծայն, ծէն:—Վրայ, վրաս, վրէս.—տղայ, տղադ, տղէդ,—երեխայ, երեխայր, երեխէր,—տղայ, տղայր, տղէք:—Այս, արդ, այն,—էս, էդ, էն, էսպէս, էդպէս, էնպէս,—այծ, էծ:

5. Յ բաղաձայն. Բառերի սկզբում յ տառն արտասանւում է իբրև հ բաղաձայն: Յ ով սկսուող բառերը սակաւաթիւ են: Տես Ուղղ. բառացուցակը:

ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ:—1. Ամբողջ օրը խաղում ես. ի՞նչպէս է, որ չես յոգնում: Յոգնութիւն, յոգնակի:—Մէկէլ յանկարծ հիւանդացաւ սիրուն թռչնակը, էլ չերգեց և լոեց յաւիտեան: Յանկարծակի, յաւիտենական:—Յովսէփը Յովհաննէսի հետ յետ դարձաւ քաղաքից: Յետադէմ, յետի ոտներ, յետին անգամ: Այս դէպրէց յետոյ շատ օրեր չանցան, պառաւի այծերն էլի մօտ նկան: Յունիսը մեզ խոտ է տալիս, իսկ յուլիսը առատ ցորեն: Դեկտեմբերին ձիւն է գալիս, յունուարին ծածկում սար ու ձոր: Էն առանց քեզ էլ կարող եմ ստանալ ինձնից ֆրկութիւն դու բնաւ մի յուսալ: Յոյս յուսահատութիւն, Յուսիկ:—Քեզ հրամայում են պատուաւոր խօսքով, որ իսկոյն գնաս քո յօժար կամքով: Շուտով սառ հողի տակ կը պառկեմ այստեղ մենակ՝ թողնելով հօրս սրտում միշտ ցաւալի յիշատակ: Յիշել, յիշողութիւն:—Մեր զօրքերը յաղթեցին թշնամուն: Յաղթական, յաղթութիւն, անյաղթ:

2. Դասարանի յատակը տախտակած է: Անյատակ ծով:—Ո՞ր յօդուածն է այժմ ձեր դասը:—Յակորը շատ յամառ տղայ է: Յամառութիւն, յամառել:—Նա գիշեր ցերեկ աշխատում է. և ի՞նչ է

վարձքը, —չոր հացի փշրանք, անպէտք ցնցրտիք, յարդէ անկողին:—Մեր տունը երկու յարկանի է: Յարկ, վերնայարկ:—Մարդ յաճախի իր ստուերից էլ է վախենում:—Քո արածը մեծ յանցանք է: Յանցաւոր:—Նա յագենալ ասածը չգիտէ: Յագենալ, անյագ (անկուշա):—Առ այս մորթին, ինձ համար մի գտակ կարի ինձ յարմար: Յարմարուել, յարմարութիւն:—Զմեռն եկաւ և ամեն ինչ յափշտակեց ու տարաւ: Յափշտակութիւն:—Այսօր ես ձեզ կանչել եմ, որ վերջին կամքս ամենքիդ յայտնեմ: Յայտնի, անյայտ:—Ո՞վ կը յանդգնէր նրա վրայ յարձակուել: Յանդուզն, յարձակում:

3. Այն ժայռի տակից մի յստակ աղրիւր է բղխում խոխոջելով:—Երկինքը մթնից, յորդ անձրև թափեց: Յորդանալ, յորդութիւն, յորդառատու:—Յովսանն ինչքան ցանկանում էր հարստանալ, չէր յաջողում: Յաջող, յաջողակ:—Թագաւորը որ ծերացաւ, մօտեցաւ մահուան, չգիտէր, թէ ով կը յաջորդէր իրեն: Յաջորդ, յաջորդաբար:—Մարդիկ պէտք է միմեանց յարգեն: Յարգանք, յարգել, յարգելի, յարգոյ:—Ինչնու ես ընկերիդ յիմար ասում: Յիմարութիւն, յիմարանալ:—Պառաւը խեղճ ալկոորին շատ յանդիմանեց: Յանդիմանութիւն:—Քրիստոս յարեսւ ի մեռելոց: Յարութիւն:—Մասիսի գագաթը յաւերժական ձիւնով ծածկուած է:

4. Իմ ժառանգն ով է, ում պիտի յանձնեմ ես իմ կարողութիւնը: Յանձն առնել:—Ինչնու ես զուր տեղը յուզւում: Յուզմունք:—Յոպովն ինքը հոտած է, հենց գիտէ՝ բոյնն է հոտած:—Նա խոր յոգոց (յոգոց) հանելով հեռացաւ յուշիկ քայլերով: Յուշարձան, յուշարար:—Յիսուս մկրտուեց Յորդանան գետում: Բայց նոքա միշտ յիշյեղուկ, պղտոր ջրով եզերքին դարիւ դարիւ խելովն փախչում էին լալագին: Յեղափոխել յեղաշրջել:—Եղայրը յիսուս տարեկան էր, երբ մեռաւ: Նրա յուղարկաւորութիւնը կատարեցին մեծ հանդիսով:—Յատուկ ինդրում եմ՝ չմոռանաս:

6. Վ հնչիւնը գրւում է վ և տառերով և ու երկտապով:

1. Վ գրւում է բառերի սկզբում և ո ձայնաւորից յետոյ. օրինակ՝ վազել, վնաս, —ծով, խռովել:

2. Ի (լ) գրւում է ա, ե, ի, ը ձայնաւորներից յետոյ. օրինակ՝ ագռաւ, ցաւել, տերել, երեւել, թեթևութիւն, (=տերեւ, երեւել, թեթեւութիւն), թիւ, հիւանդ, շիւարել:

3. Ու վ հնչիւնով զըւում է բառերի մէջ բաղաձայնից յետոյ և ձայնաւոսից առաջ. օրինակ՝ նուէր, պատուէր, ստուէր, Աստուած, յօդուած, խօսուեցաւ, զուարթ:

Այս վ հնչիւն ունեցող ուշի տեղ միայն և (երբեմն և վ) տառով գրողներ ևս կան:

Երբ վ հնչիւն ունեցող ու ից առաջ լսւում է ը ձայնաւորը տողագարձի ժամանակ, ինչպէս և ոտանաւորների մէջ, գրում են լւ ձեռով, ինչպէս՝ զըւարթ, զըւալթ, նըւէր, նըւէր, գտնրւել: Նոյնպէս զըւում են՝ ծըւծուալ, սըւսուալ, կամ՝ ծըւծըւալ սըւսըւալ:

7. Բ, Գ, Դ տառերը յաճախ արտասանուում են ինչպէս փ, վ, թ, ց, չ, կամ պ, կ, տ, ծ, օրինակ՝ որբ, ծագել, որդի, վարձ, արջ բառերի մէջ:

8. Ղ տառը բաղաձայններից առաջ սովորաբար արտասանուում է իրբ իս, ինչպէս նորայր, որբ, աղջիկ:

ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐԻ:—1. Ով որ չունի կարգ ու կանոն, նա ասուում է անկիրթ մարդ. կարգ կանոնը մանկանց համար են գովական սիրուն զարդ: Կարգին, կարգել, կարգաւորել,—մարդութիւն, մարդիկ, — զարդարել, զարդարանք:—Ընդունեցէք, խնդրեմ, իմ յարգանքները:—Ընդունել, ընդունարան, — ինդիր, խնդրուածք, — յարգելի:—Կատուն դունչը սրբեց թաթիկներով: Սուրբ, սրբութիւն:—Գաբրիէլը չուխայ չունի, միշտ անում է սուգ ու լաց: Սուլ, սգաւոր:—Մանիքը թելեր հաստ ու բարակ, որ ես հոգամ իմ ցաւեր:—Հոգս, հոգացողութիւն, ա հոգ:—Օձի գլուխը որ ցաւի, ճանապարհի մէջտեղում կը առողի: Ճանապարհորդ, ճանապարհուել, — մէջ մէջը միջին որչորդ:—Մէկի օձիքից (եալից) բոնել: Արեւ յաղի: ո մպերին, շողըը ձգեց սարերին: Զիգ, ձգել:

2. Միայն խեղճ որբը ստքերը բորիկ, ակլոր ու քաղցած, մի տան պատի տակ մնաց կուչ եկած: Խեղճութիւն, խեղճիկ, — քաղց, — որբանաւ, որբութիւն: Ամեն մարդ իր մեռելի վրայ է ողբում: Ողբ, ողբաձայն:—Սագիկ մագիկ, իմ սիրունիկ, ուր ես գնում կամաց կամաց, ձագուներդ չորս կողմդ առած: Ես կը խընդրեմ իմ մայրիկիս, որ ժողովէ քո փետուրներ և ինձ համար

անխելք, յետ դարձիր գնա, ոսկի ձկնիկին իմ կողմից ասամ, որ էլ չեմ ուզում մնալ գեղջուկ կին: Ծերունին դարձեալ ծովի ափ գնաց: Այս անգամ տեսաւ ծովը վրդովուած: Շնորհաւոր գեղջկուհի: Վիզը զարդարած էր մարդարիտներով:—Բախտն ու խելքը յաջողութեան և ընդունակութեան պէս միմեանցից անբաժան պէտք է լինին:—Օգնութեանդ փոխարէն ես քեզ՝ իբրև ջանքիդ վարձ՝ կը տամ մի զոյգ եւի—Ասա ինձ, ով ես, նողկալի էակ. ինչո՞ւ ես չնթուել դու արդ թիվ տակ, ագուալի նման կոռում անդագար:—Բնի մօտ, կտուրի ամենաբարձր տեղը, լարի նման ձըդուած և մի ոտը վեր ծալած՝ կանգնած էր որձակ արագիլը: Որձ, որձաքար:—Արագիլները սաւառնում էին մարդագետնի վրայ:

8. Սարդը տան մի անկիւնը քաշուած իր ցանցն էր հիւսում ձանձերին թակարդի մէջ ձգելու համար:—Մեղուն տպոզաց, տըզտպացին ձագիրը. արջը չքաշեց իր բրդոտ թաթերը, ողջ բոյնը քանդեց, ձագիրը ջարդեց, խորիսիը հանեց, լափեց, լափլփեց:—Այ դու անպիտան կենդանի, ինչ իրաւունքով և ո՞ր օրէնքով համարձակուել ես իմ մարդուր ջուրս քո պիղծ բերանով այդպէս պղտորել աւազով, ցեխով և հազար տեսակ աղբով: Պղծել, պըղծութիւն, աղբանց:—Ա՛ս, Աստուած, ի՞նչ է մեղքս:—Խաբերայ, ես ձեզ լաւ եմ ճանաչում:—Ո՛չ, սուտ ես խօսում, անարժան որդի, խաբութիւն, խաբուսիկ:—Խնցորդը կանգնեց գարբնոցի դիմաց, գարձաւ հետնանքով երկաթին ասաց. «Ի՞նչ ես հաւաքել աշխարհը գլխիդ, անձունի մետաղ, գոեհիկ, կոպիտ»: Հեգնել, հեգնութիւն. աշխարհը, աշխարհական:—Նրա աչքերը գիշերն էլ լոյս են տալիս ճրագի նման: Ճրագու:—Պէտք է ամեն բան առաջ ստուգել և ապա խօսել:—Ընկերութեան մէջ խարդախութիւնից վատրան չկայ:—«Եղբայր արձագանք», մուրճն ասաց մի օր, «քո ձայնն ինչո՞ւ է իմից զօրաւոր»: Արձագանք, (արձագանք:)—Առիւծը երգուում էր, որ վերադարձին որսից ամենքին հաւասար բաժին կը հանէ: Մենք պէտք է մեր հին տունը շուտով նորոգենք:—Կարմն անառիկ բերդ էր համարւում:

9. Հ տառը մի քանի բառի մէջ ո բաղաձայնից յետոյ սովորաբար չի արտասանուում, ինչպէս՝ շնորհ, շնորհք. աշխարհ, աշխարհք. խոնարհ, խոնարհել, արձամարթել, ճանապարհ:



# ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՒԱԾ

## ԲԱՌ, ԽՕՍՔ ԵՒ ԱՍԱՅՈՒԱԾ

6.

### ԲԱՌԵՐԻ ԻՄԱՍՏԸ

Ամեն բառ ունի մի նշանակութիւն կամ իմաստ:

Մի և նոյն բառը տեղին նայելով կարող է յաճախ մի քանի նշանակութիւն ունենալ կամ տարբեր տարբեր առումն երով գործածուել: Օրինակ՝ Այս մարդը սրտի (իսկական իմաստով) հիւանդութիւն ունի: Նա սրտով (քաջ) մարդ է: Մարդու աչք: Պահարանի աչք:

Նոյնանիշ ասւում են այն բառերը, որոնք բոլորովին նոյն նշանակութիւնն ունին. օրինակ՝ գնալ, երթալ այտ, թուշ:

Համանիշ ասւում են այն բառերը, որոնք նշանակութեամբ իրար նման կամ մօտիկ են. օրինակ՝ զարմանալ, հիանալ, զմայլել:

### ԲԱՌԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՀՍՏ ԿԱԶՄՈՒԹԵԱՆ

7. ՊԱՐԶ, ԲԱՐԴ ԵՒ ԱԺԱՆՅԱԿԱՆ ԲԱՌԵՐ.

Բարդ ասւում են այն բառերը, որոնք կազմուած են երկու բառից. օրինակ՝ թանքաման, մարդասէր կազմուած են թանք և աման, մարդ և սէր բառերից:

Ածանցական ասւում են այն բառերը, որոնք կազմուած են մի բառից կամ արմատից և մի ածանցից,

այսինքն մի անհշանակ մասնիկից, որ գրուելով բառի կամ արմատի վրայ սկզբից կամ վերջից՝ նոր բառի նշանակութիւն է տալիս նրան. օրինակ՝ գործ բառից կազմուում են՝ գործել, գործիչ, գործաւոր, անգործ, — զոհ բառից՝ զոհութիւն, դժգոհ, — գիտութիւն, տգիտութիւն:

Պարզ ասւում են այն բառերը, որոնք ոչ բարդ են, ոչ ածանցական: Օրինակ՝ մայր, մարդ, ծեծ, շարժ:

Արմատ ասւում է բառերի այն պարզ մասը, որ մենակ չի գործածուում իբրև առանձին բառ, այլ ածանցների հետ միացած, կամ ուրիշ բառերի ու արմատների հետ բարդուած: Օրինակ հի արմատից, որ իբրև բառ չի գործածուում, կազմուում են՝ հիանալ, հիացում, հիասքանչ, հիասթափուել:

Յօդակապ Ա: — Բարդ և ածանցական բառերի երկու բաղադրիչ մասերի մէջ սովորաբար մտնում է ա ձայնաւորը, որ կոչւում է յօդակապ. օրինակ՝ ազգասէր, զանգակատուն: Երբ երկրորդ բաղադրիչ մասը ձայնաւորով է սկսում, յօդակապ չի դրւում. օրինակ՝ ազգօգուտ, արքայորդի, ջրանցք:

Ջայնափոխութիւն: — Բառակազմութեան ժամանակ երբ բառն աճում է, այսինքն ետեկից նոր վանկ կամ վանկեր են աւելանում, վերջին վանկի է, ի, ու ձայնաւորները և եա, եայ, ոյ երկբառբառները սովորաբար փոխուում են:

1. Է դառնում է ի, օրինակ՝ սէր, սիրել, հանդէպ, հանդիպել, վէպ, վիպասան:

2. Ի և ու դառնում են ը կամ գուրս են ընկնում. օրինակ՝ բժիշկ, բժշկել, բժշկել, ամիս, ամսական. լուծ, լլծել, լծել. անասուն, անասնական:

3. Եա դառնում է եւ օրինակ՝ մատեան, մատենագիր:

4. Եայ դառնում է է. օրինակ՝ գործունեայ գործունէութիւն. քրիստոնեայ, քրիստոնէական:

5. Ոյ դառնում է ու. օրինակ՝ ծոյլ, ծուլանալ, ողջոյն, ողջունել:

ՈՒՂԱԳՐՈՒԹԻՒՆ.—Բարդ բառերի երկրորդ բաղադրիչ մասն երբ սկսւում է ը, օ, վ, յ տառերով, բառերի միջում ևս պահում են այդ տառերը: Օրինակ՝ դասընկեր, նորընծայ, հատընտիր, հիւրընկալ, խոչընդոտ, նախընթաց, —ազգօգուտ, բարօրութիւն, անօգնական, բացօթեայ (օթեան բառի արմատից), անօրէն, ջրօրհնէք, —գրավաճառ, զօրավար, կառավարել, լուսավառ, արագավազ, բազմավաստակ, անփաս, անվարձ, այսպէս և թովուալ, ճլվալ, ծլվալ և այլն, —անյատակ, բազմայաղթ, սեայօն (յօնք, ունք բառից), անյագ, քաջայայտ (յայտ, յայտնի), սիրայօժար և այլն:

Ա. ծանցներ, որոնք է-ով են գրւում.

1. Հք,—մեռնօրհնէք, արժէք, կողաէք:
2. Իշտ,—ծաղկաւէտ, խոտաւէտ, հոտաւէտ:
3. Եղէն,—կանաչեղէն, մսեղէն, արծաթեղէն:
4. Ռէն,—հայերէն, ոռւսերէն, յունարէն:

## ԲԱՐԵԲԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ՆՇԱՆԱԿՈՒԹԵԱՆ

8. Ա. Ա. ՐԿԱՅ, ՅԱՏԿԱՆԻՇ, ՊԱՐԱԳԱՅ.

Առարկայ ասելով հասկացւում է՝ ամեն ինչ որ կայ, բնութեան մէջ ինքնուրոյն գոյութիւն ունի, կամ մենք մտածում ենք, թէ ինքնուրոյն գոյութիւն ունի: Բնութեան մէջ ինքնուրոյն գոյութիւն ունեցող բաները ասւում են թանքացական կամ ֆիզիկական առարկաներ. զրանք նիւթական բաներ են և ընկնում են մեր զգայարանների տակ: Օրինակ՝ դասարանում տեսնում ենք՝ սեղան, աթոռ, զրասեղաններ, նստարաններ, պատեր, դռւու, յատակ, ա-

շակերտներ և այլն: Իսկ այն առարկաները, որ մենք մտածում ենք իրեւ ինքնուրոյն գոյութիւն ունեցող բաներ, ասւում են վիրացական առարկաներ. զրանք նիւթական չեն և չեն ընկնում մեր զգայարանների տակ. այլ միայն մտքով իմանում ենք, թէ կան: Օրինակ՝ քաջութիւն, հիւանդութիւն, չարչարանք, փառք:

Ամեն առարկայ ունի իր ստորովկիները կամ յատկանիշները, որոնք չեն մտածում իրեւ ինքնուրոյն գոյութիւն ունեցող, այլ իրեւ առարկայից անբաժան, առարկայի բնութեան մէջ մշտալէս կամ ժամանակաւոր կերպով գոյնուած մի որպիսութիւն, զործողութիւն կամ դրութիւն: Օրինակ՝ փողոցում տեսնում ենք մի ձի, այդ ձին կարող է լինել սպիտակ կամ սև, կանգնած կամ վագող, գէր կամ վախտ ևայլն, և մենք ասում ենք՝ սպիտակ ձի, վագող ձի, գէր ձի ևայլն: Սպիտակ, վագող, գէր ևն. ձիու յատկանիշներն են:

Ինչպէս առարկաներն ունին իրենց զանազան յատկանիշները, նոյնպէս և յատկանիշները կարող է ունենալ իր առանձին յատկանիշները կամ պարագաները. օրինակ՝ սպիտակ ձին կարող է լինել շատ սպիտակ, քիչ սպիտակ, բոլորովին սպիտակ. վագող ձին կարող է լինել՝ արագ վագող, առաջ վագող, յիտ վագող: Շատ, քիչ, բոլորովին, արագ, առաջ, յիտ՝ ոչ թէ առարկայի, ձիու, յատկանիշներն են, այլ նրա յատկանիշների յատկանիշը կամ պարագան:

ՎԱՐԺՈՒԹԻՒՆ:—Դիտել առարկաներ, նրանց յատկանիշները և յատկանիշի պարագաները: 1. Թուղթ, —սպիտակ թուղթ, շատ սպիտակ թուղթ:—Աշակերտ, —ջանասէր աշակերտ, —չափազաց ջանասէր աշակերտ:—Քար, —պինդ քար, խիստ պինդ քար:—Թուղթը սպիտակ է, —թուղթը շատ սպիտակ է:—Աշակերտը ջանասէր է, —աշակերտը չափազանց ջանասէր է:—Քարը պինդ է:

2. Զուր, —հոսող զուր, —դանդաղ հոսող զուր. —Զուրը հոսող է. զուրը դանդաղ հոսող է: Զի, —վագող ձի, արագ վագող ձի. —ձին վագող է, —ձին արագ վագող է:

3. Երեխայ, —քնած երեխայ, լիորը քնած երեխայ, —երեխան քնած է, —երեխան խորը քնած է:

## ԳՈՅԱԿԱՆ, ԱՇԱԿԱՆ, ՄԱԿԲԱՅ.

**Գոյական** կոչւում են այն բառերը, որոնք ցոյց են տալիս որևէ առարկայ, լինի մարդ, կենդանի, թէ մի ուրիշ բան։ Օրինակ՝ աշակերտ, ծի, քաղ։

**Ածական** ասւում են այն բառերը, որոնք ցոյց են տալիս առարկայի յատկանիշ, այսինքն ինչպիսի, քանի, որքան, որը և այլն լինելը, Օրինակ՝ ջանասէր (աշակերտ), կարսիր (ծի), սինդ (քաղ), շատ (մարդ)։

Թիւ ու համարք ցոյց տուող ածականներն ասւում են թուական. օրինակ՝ մէկ, երկու, երեք, չորս ևայլն. կամ առաջին, երկրորդ երրորդ, չորրորդ, հինգերորդ ևայլն։

**Մակբայ** կոչւում են այն բառերը, որոնք ցոյց են տալիս յատկանիշի յատկանիշ կամ պարագայ։ Օրինակ՝ շատ ջանասէր (աշակերտ), արագ վազող (ծի), խիստ պինդ (քաղ)։

Միևնոյն բառը, երբ առարկայի յատկանիշ է ցոյց տալիս, ածական է. օրինակ՝ խիստ մարդ, սաստիկ քամի. իսկ երբ յատկանիշի յատկանիշ է ցոյց տալիս, մակբայ է. օրինակ՝ խիստ բարի (մարդ), սաստիկ պինդ (քամի)։

## ՅԱՏՈՒԿ ԵՒ ՀԱՍՏՐԱԿ ԱՆՈՒՆ

**Յատուկ** անուն ասւում են այն գոյականները, որոնք ցոյց են տալիս մի հատ առարկայ առանձին վերցրած, այս ինչ կամ այն ինչ առարկան միայն։

**Հասարակ** անուն ասւում են այն գոյականները, որոնք կարող են տրուել թէ նոյն տեսակի բոլոր առարկաներին և թէ նրանցից մէկին միայն։ Օրինակ՝ երասխ և գետ բառերից երասխ յատուկ անուն է, իսկ գետ հասարակ անուն. Երասխ կոչւում է գետերից մէկը միայն

առանձին վերցրած. իսկ գետ կարող են կոչուել թէ բոլոր նոյն տեսակի գնացկան ջրերը և թէ նրանցից մէկը, այս ինչ կամ այն ինչ գետը։ Այսպէս հասարակ անուն են՝ վանք, լեռ, աշխարհ, թագաւոր, իսկ էջմիածին, Մասիս, Հայաստան, Տիգրան յատուկ անուն են։

ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ. — Յատուկ անուններն ու նրանցից անբաժան մականունները և իբրև յատուկ անուն առնուած բառերը սկսւում են գլխատառով։ Յատուկ անուն են.

1. **Աստուած** բառը և նոյն իմաստով առնուած բառերը՝ Արարիչ, Տէր, Նախախնամութիւն.

2. **Հեթանոսական** աստուածների անունները՝ Արամազդ, Վահագն, Անահիտ.

3. **Անձերի** անունները՝ Ներսէս, Յովսէփ, — Աշոտ Երկաթ, Մեծն Տիգրան, Ղազար Փարպեցի, Արտաշէս Երկրորդ.

4. **Աշխարհագրական** անունները՝ Մասիս, Եփրատ, Իուսոսատան, Երևան, Սև ծով, Ալպեան լեռներ.

5. **Գրուածքների** անունների առաջին բառերը. օրինակ՝ Նա շաբաթ. Երեկոները եկեղեցում «Լոյս զուարթ» էր երգում. Կարգացել ես Ծերենցի «Երկունք իններորդ դարու» վէպը։

**Հասարակ** անունների վերջում առ և ո տառերից յետոյ գրւում է անձայն յ. ինչպէս՝ փեսայ, ծառայ, երեկոյ։

**Յատուկ** անունների վերջում առ ձայնաւորից յետոյ յ չի գրւում Աննա, Եւրոպա. իսկ ո ձայնաւորից յետոյ գրւում է՝ Յարոյ, Մարոյ, կամ թէ օ տառով են վերջանում Յարօ, Մարօ։

ՎԵՐՈՒԹՈՒԹԻՒՆ. — Որոշել անունները և նրանց տեսակները բառերի տակը գիծ քաշերով և գլխին զբելով հ. ա. (հասարակ անուն), յ. ա. (յատուկ անուն). Օրինակ՝ «Երկու աղախին (հ. ա.), Աննան (յ. ա.) և Կատարինէն (յ. ա.), քաղաք (հ. ա.) էին գնում։ Նրանցից ամեն մէկը մի կողով (հ. ա.) ինձոր (հ. ա.) էր տանում»։

## ԱՆՈՒԱՆ ԹԻՒԾ

Անուան թիւը երկու տեսակ է՝ եզակի և յոգնակի: Եզակին ցոյց է տալիս մի առարկայ. իսկ յոգնակին՝ մէկից աւելի նոյն տեսակի առարկայ: Օրինակ՝ ծառ եզակի է, իսկ ծառեր՝ յոգնակի:

Յոգնակին կազմւում է եզակի թուի վրայ աւելանալով միավանկ անուններին սովորաբար եղ մասնիկը (քար, քարեր), իսկ բազմավանկներին՝ ներ (քաղաք, քաղաքներ): Բազմավանկների վերջի անձայն յ-ն դուրս է ընկնում (ծառայ, ծառաներ): Միավանկ անունների մէջ ի, ու ձայնաւորները սովորաբար փոխւում են ը ձայնաւորի, որ չի դրւում. օրինակ՝ զիրք, զըրքեր, զրքեր. ջուր, ջըրեր, ջըրը: ՎԱՐԺՈՒԹԻՒՆԵՐ: — Կազմել հետևեալ անունների յոգնակին.

1. Օր, հաց, փայտ, պատ, ձեռք, բառ:
2. Միս, գիր, վիզ, գին, գիծ, բիժ, թուղթ, շուն, թուզ. սուր, գուր, գունդ:

3. Փողոց, պարտէզ, դպրոց, դասարան:

4. Փեսայ, քահանայ, սատանայ, գաթայ:

5. Սևանող (սևանողեր), անձրևաջուր, զօրպունդ, քարաժայուն, դասագիրք:

6. Մատ (մատներ), ոտ, ձեռ, ակ, գառ, եղ, դուռ, մուկ, լեռ, թռու:

## ԱՆՈՒԱՆ ՅՈՒԵՐԸ

Յօդերն են՝ ըս, ըդ, ըն կամ ը (ձայնաւորի վրայ ս, դ, ն,), որոնք մենակ չեն գործածւում, այլ միշտ դըրւում են մի անուան վրայ վերջից, որի հետ և միացած են գըրւում: Օրինակ գիրքըս, գիրքըն, գիրքըն կամ գիրքը (սովորական գըրւութեամբ գիրքս, գիրքն, գիրքն, կամ գիրքը), — գօտիս, գօտին, գօտին: — Յօդերից առաջ անձայն

յ-ն դուրս է ընկնում. ինչպէս՝ տղայ, տղաս, տղադ, տղան: Յօդերը դրուելով անուան վրայ՝ լրացնում են նրա իմաստը՝ վրան աւելացնելով իրենց նշանակութիւնները, որ են:

1. Ս (ըս)՝ իմ, մեր, — այս, — ես, մենք:

2. Դ (ըդ)՝ քո, ձեր, — այդ, — դու, դուք:

3. Ն (ըն), ը՝ իւր, նրա, իրենց, նրանց. — այն. կամ թէ անուան ընդհանուր անորոշ իմաստը որոշում է, այսինքն մասնաւորում է՝ ցոյց տալով խօսողին ծանօթ, յայտնի տուարկայ: Օրինակ՝ նա զիրք կարդաց. (անորոշ է մնում, թէ ինչ գիրք): Նա զիրքը կարդաց (ծանօթ, յայտնի գիրքը): Նա զիրքս կարդաց (=իմ զիրքը): Գիշերս ես չեմ քնել (=այս զիշեր): Մեղաւորս չիմացայ՝ ինչ անեմ (ես մեղաւոր, ես որ մեղաւոր եմ):

ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ: — Որոշել անունները՝ տակերը գիծ քաշելով և, եթէ յօդ ունին, յօդերի տակ իրկու գիծ քաշելով: Օրինակ՝ ձեր Յովհաննէսն այսօդ եղարկ գրում էր պարտէզում:

## ԴԵՐԱՆՈՒԽ

ԴԵՐԱՆՈՒԽ ասւում են այն բառերը, որ դրւում են անունների տեղ: Օրինակ՝ Տիգրանը պարապում է. նա դեռ դասերը չի պատրաստել ասացուածի մէջ նա դերանուն է և դրուած է Տիգրան անուան տեղ:

Խօսողն ասւում է առաջին դէմք, իր խօսակիցը՝ երկրորդ դէմք. իսկ այն անձը կամ իրը, որ ոչ խօսողն է և ոչ իր խօսակիցը, կոչւում է երրորդ դէմք:

Խօսողն իր անուան տեղ դնում է ես, որ կոչւում է առաջին դէմքի գերանուն, եզակի ես, յոգնակի մենք. իր խօսակցի անուան տեղ դնում է եզակի՝ դու, յոգնակի՝ դուք. իսկ մի ուրիշ առարկայի անուան տեղ դնում է եզա-

կի՝ սա, դա, նա, ինքը, այս, այդ, այն, յոգնակի՝ սրանք, որանք, նրանք, իրենք, որոնք բոլորը երրորդ դէմքի դերանուն են:

ՈՒՂԱԳՐՈՒԹԻՒՆ: Դերանունների վերջում ա, ո ձայնաւորներից յետոյ անձայն յ չի գրւում՝ սա, դա, նա, սրա, դրա, նրա, քո, —սոքա, դոքա, նոքա, սոցա, դոցա, նոցա:

#### 14. ԲԱՅ ԵՒ ԽՕՍՔ

Խօսքը կամ նախաղասութիւնը բառերով արտայատուած մտածութիւնն է, որի մէջ մի ստորոգում է լինում, այսինքն մի առարկայի վերագրւում է մի յատկանիշ: Օրինակ՝ նապաստակը վախկոտ է մի խօսք է, որով նապաստակին վերագրւում է վախկոտ յատկութիւնը, կամ թէ հաստատւում է, որ վախկոտ յատկութիւնը է, կայ նապաստակի մէջ:

Խօսքը կազմւում է մի կամ մի քանի բառից:

Այն բառերը, որոնք մենակ, առանց ուրիշ բառի, խօսք են կազմում, կոչւում են բայ. օրինակ՝ զնացի, տեսայ, եկայ մի մի բայ և մի մի խօսք են:

Առանց բայի խօսք չկայ և միայն բայն է խօսք կազմում, որովհետև միայն է ցոյց տալիս ստորոգում: Օրինակ՝ Տիգրանը այսօր հաց բառերը խօսք չեն կազմում, այսինքն մտածութիւն չեն յայտնում, այլ միայն հատհատ իմաստներ: Հարկաւոր է մի բայ, որ այդ բառերից խօսք կազմուի. օրինակ՝ Տիգրանը այսօր հաց զնեց կամ Տիգրանը այսօր հաց թխեց: Գնեց, թխեց բայերը մենակ ևս կազմում են մի մի խօսք:

Ամեն բայ մենակ մի խօսք է կազմում, որովհետև ցոյց է տալիս, թէ մի առարկայի վերագրւում է մի յատկանիշ (գործողութիւն, դրութիւն):

Առարկան, որին վերագրւում է յատկանիշը, իմացւում է բայի դէմքից. յատկանիշը, որ վերագրւում է առարկային, իմացւում է բայիմաստից. իսկ յատկանիշի վերագրուելը առարկային նրանով է արտայայտում, որ Ամեն բայ ունի բայիմաստ և դէմք՝ միացած մի բառի մէջ:

Բայիմաստը ցոյց է տալիս եղելովթիւն, այսինքն գործողութիւն, գործողութիւն և դրութիւն, կամ թէ

1. Անել, լինել, օրինակ՝ նա սիրտ արեց: Լինում է, չի լինում մի թագաւոր: Տանը մարդ կայ: Նա այստեղ է:

2. Մի բան անել, մի բան լինել, օրինակ՝ Պօղոսը զրեց: —ի՞նչ արեց: —Քրեխան մեծացաւ: —ի՞նչ եղաւ: —Մեծացաւ:

3. Մի դրութեան մէջ լինել, օրինակ՝ նա նստած է:

Բայի դէմքը ցոյց է տալիս անող կամ եղող առարկայի գաղափար, որին վերագրւում է բայիմաստը:

Դէմքը երեք է. առաջին լէմք, երր անող կամ եղող առարկան խօսող անձն է (ես, մենք). երկրորդ լէմք, երր անող կամ եղող առարկան ոչ խօսողն է և ոչ խօսակիցը, այլ մի ուրիշ առարկայ (նա, ինքը, նրանք, իրենք): Օրինակ՝ խօսողն ինքն իւր համար ասում է՝ զնացի (1-ին դէմքի բայ. բայիմաստը, այսինքն գնալու գործողութիւնը, վերագրւում է խօսողին). խօսակցի համար ասում է՝ զնացիր (2-րդ դէմքի բայ. բայիմաստը վերագրւում է խօսակցին). իսկ մի ուրիշ առարկայի համար՝ զնաց (3-րդ դէմքի բայ):

Բայի դէմքից անբաժան է և բայի դէմքի թիւը:

Թիւը երկու է՝ եղակի և յոգնակի: Բայը եղակի է, երբ դէմքը մի առարկայ է ցոյց տալիս բայը յոգնակի է, երբ դէմքը մէկից աւելի առարկայ է ցոյց տալիս: Օրի-

նակ՝ զնաց եղակի է (նա մենակ զնաց). զնացին յոգնակի է (նրանք բոլորը գնացին):

Բայերի դէմքն ու թիւը համապատասխան են դերանունների դէմքին ու թուին. այս պատճառով բայերը որոշելու համար՝ պէտք է բառերի հետ գնել գերանուններից՝ մէկը՝ եղակի կամ յոգնակի. եթէ յարմարուի, կը նշանակի վերցրած բառը բայ է: Օրինակ՝ մոայ, մոար, մոանք, կարելի է ասել ես մտայ, դու մըտար, մենք մտանք, — կը նշանակէ այդ բառերը բայ են:

ՎԵՐԱԽՈՒԹԻՒՆ. — Ուրոշել բայերը, նրանց դէմքն ու թիւը՝ հետերը դնելով համապատասխան դէմքի ու թուի դերանուններ: Օրինակ՝ իշուկը մէկ սոխակ տեսաւ (նա տեսաւ), «մէկ ինձ նայիր» (դու նայիր), նրան ասաց (նա ասաց): «Ասում են (նրանք ասում են). դու լաւ ես երգում (դու ես երգում). բայց չպիտիմ (ես չպիտիմ) ճիշտ են ասում (նրանք են ասում):

## 15.

## ԲԱՅԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

Ամեն բայ մենակ միշտ մի խօսք է կազմում, բայց մի բայը մենակ սովորաբար բաւականութիւն չի տալիս մեզ. ուստի խօսքը կազմում է սովորաբար մի բայից և լրացումներից:

Բայի լրացում ասում են այն բառերը (գոյական, ածական և մակրայ), որոնք դրուելով բայի հետ՝ կողմից պարզում, ամբողջացնում են խօսքը: Օրինակ՝ Տիգրանն այսօր զնաց դպրոց խօսքի մէջ Տիգրանն, այսօր, դպրոց բառերը պարզում են, թէ նվ գնաց, նրբ գնաց, նլը գնաց: Դրանք զնաց բայի լրացումներն են:

Բայի լրացումները լինում են՝ ենթակայ, ստորոգեալ, խնդիր և պարագայ:

## 16.

## 1. ԵՆԹԱԿԱՅ

Ենթակայ ասում են այն գոյական լրացումները, որոնք բացայայտում են բայի դէմքը: Օրինակ՝ զնաց բայը

որ լսում ենք, իմանում ենք, որ մի երրորդ դէմքի առարկայ կայ, որին վերագրուում է գնալու գործողութիւնը. բայց այդ առարկան շատ անորոշ է մնում. չի իմացուում, թէ նվ է կամ ինչ է: Իսկ երբ ասում ենք՝ Տիգրանը զնաց, Տիգրանը բառը լրացնում է բայի դէմքը, և մենք իմանում ենք, թէ ուշ է զնացողը: Տիգրան լրացումը զնաց բայի ենթական է:

Ենթական ուրեմն որոշ կերպով ցոյց է տալիս անող կամ եղող առարկան, որին վերագրուում է բայիմաստը կամ մի յատկանիշ:

Ենթական պատասխանում է ո՞վ, ի՞նչ (է անողը, եղողը) հարցերին: Տիգրանը տեսաւ Արտաշէսին, — տեսնողն ով է, — Տիգրանը: — Զիւնը ծածկեց գետինը, — ծաղկողն ինչն է, — գետինը:

Եթէ առանձին բառով արտայայտուած ենթակայ չկայ խօսքի մէջ, բայի դէմքը մենակ կատարում է ենթակայի պաշտօն. օրինակ՝ զնացիր ասելով հասկացում է ուռ գնացիր:

Կան խօսքեր, որոնց բայի դէմքը ոչ մի բառով չի լրացւում և չի կարող լրացուել: Այսպիսի խօսքերը կոչում են անենթակայ խօսիեր: Օրինակ՝ լուսացաւ: Որոտում է: Այսուղ լաւ նատում է: Ուղար գղալով չին չըիլ:

## 17.

## 2. ՍՏՈՐՈԳԵԱԼ

Ստորոգեալ ասում է ընդհանրապէս այն յատկանիշը, որ վերագրուում է բայի դէմքին կամ ենթակային: Ստորոգեալն արտայայտում է երեք կերպ:

1. Ամեն բայի բայիմաստ կատարում է և ստորոգեալի պաշտօն, քանի որ ցոյց է տալիս բայի դէմքին կամ ենթակային վերագրուած մի յատկանիշ. ինչպէս՝ Տիգրանը զնաց խօսքի մէջ Տիգրանը ենթակային վերագրուում է գնալու գոր-

ծողութիւնը: Դնաց բայն ուրեմն միանգամայն բայ և ստորոգեալ է կամ բայ յստորոգեալ այսինքն ցոյց է տալիս թէ ստորոգեալը (բայիմաստ, յատկանիշ) և թէ ստորոգեալի վերագրուելը (ստորոգուելն) ենթակային:

2. Եմ, լինիմ բայերը սովորաբար որոշ բայիմաստ չունին և ընդհանուր անորոշ նշանակութեամբ ցոյց են տալիս միայն մի յատկանիշի վերագրուելը մի առարկայի: Օրինակ՝ Աստուած բարի է խօսքի մէջ է բայը միայն վերագրուելն է ցոյց տալիս. իսկ յատկանիշը, որ վերագրուում է Աստուծուն, իմացւում է բարի բառից, որ կոչւում է ստորոգեալ:

Ստորոգեալ ասւում են ուրեմն եմ, լինիմ բայերի այն գոյական կամ ածական լրացումները, որոնք պարզում են այդ բայերի ընդհանուր անորոշ բայիմաստը և ցոյց են տալիս, թէ ինչ յատկանիշ է վերագրուում ենթակային. կամ թէ ենթական ինչ է, ինչպիսի է, քանիսն է: Օրինակ՝ Զայլամը թոշուն է խօսքի մէջ թոչուն բառը դրուելով է բայի հետ՝ որոշում է, թէ Զայլամն ինչ է: Թրչուն ստորոգեալ է:

Ստորոգեալն ու եմ (լինիմ) բայը միասին կազմում են մի բաղադրեալ բայ-ստորոգեալ:

3. Կան բայեր ևս, ինչպէս՝ դառնալ, կոչուել, համարուել և այլն, որոնք մենակյաճախ բաւարար չափով որոշ նշանակութեամբ բայիմաստ չեն ցոյց տալիս. դրանց հետ ևս սովորաբար դրում է իրեն բայիմաստի լրացում մի գոյական կամ ածական, որ կոչւում է ստորոգելի ական վերադիր: Գոյականը կամ ածականը բայի հետ միասին կազմում են մի բաղադրեալ բայ-ստորոգեալ. օրինակ՝ Զուրը գոլորշի դարձաւ խօսքը միենոյն է թէ ջուրը գոլորշացաւ:

## 3. ԽՆԴԻՐ

18.

Խնդիր ասւում են այն գոյական լրացումները, որոնք ցոյց են տալիս մի առարկայ, որի վերաբերմամբ կամ որով ենթական կատարում է գործողութիւնը: Խընդիրները պատասխանում են ում. ի՞նչ, ումնի՞ց, ինչի՞ց. ումնո՞վ, ինչո՞վ հարցերին. օրինակ՝ Տիգրանն օգնեց Արտաշէսին (ժըմ): Հիւսն ուրագով (ինչով) տաշեց փայտը (ի՞նչը):

## 4. ՊԱՐԱԳԱՅ

19.

Պարագայ ասւում են այն լրացումները (գոյական և մակբայ), որոնք ցոյց են տալիս եղելութեան տեղը, ժամանակը, ձեւը կամ որակը, չափն ու քանակը և հիմունքը:

ա) Տեղի պարագան պատասխանում է՝ ուր, որտեղ, որտեղից, մինչև որտեղ (ուր). հարցերին. օրինակ՝ Նազիւղում է ապրում: Նա տնից գնաց դպրոց:

բ) Ժամանակի պարագան պատասխանում է՝ երբ, որ ժամանակ, որ ժամանակից, մինչև երբ, որքան ժամանակ հարցերին. օրինակ՝ զարնանն անձրև չեկաւ: Նա առաւտից իրիկուն խաղում է:

գ) Ձերի պարագան պատասխանում է՝ ի՞նչպէս, ի՞նչ երպ հարցերին. օրինակ՝ Շնորհըով շարժուիր: Արեգակը փայլում է պայծառ:

դ) Ձափ ու քանակի պարագան պատասխանում է՝ որչափ, որքան, քանի՞ անգամ հարցերին. օրինակ՝ Նա շատ բարկացաւ: Տասը (տասն անգամ) չափիք, մին (մի անգամ) կտրիք:

ե) Հիմունքի պարագան, որ ցոյց է տալիս գործողութեան պատճառը կամ նպատակը, պատասխանում է՝ ի՞նչո՞ւ (համար), ի՞նչ պատճառով, ի՞նչ նպատակով հարցերին. օրինակ՝ Նա իր յանցանքի համար պատժուեց: Մենք գնացինք զբունելու:

20. Բայի եւ ենթակայի կանոնը: 1. Ենթական և բայը թուով իրար համաձայն են դրւում. եղակի ենթակայի հետ եղակի բայ է դրւում, յոգնակի ենթակայի հետ յոգնակի բայ. օրինակ՝ Աքլորը կանչեց: Աքլորները կանչեցին:

2. Եթէ ենթական երկու և աւելի բառ է, բայը դըրւում է յոգնակի: Օրինակ՝ Աննան և Կատարինէն քաղաք էին գնում:

ՎԵՐԼՈՒԹՈՒԹԻՒՆ:—Որոշել ենթակայ և բայ՝ եղակի ենթակաները յոգնակի դարձնելով, իսկ յոգնակի ենթակաները եղակի, համապատասխան ձևով փոխելով և բայերի թիւը: Օրինակ.

1. Ծերունին ցանցով ձուկ բռնից ծովից:—Ծերունիները ցանցով ձուկ բռնեցին ծովից:

2. Որսորդներն ալկորին շատ յանդիմանեցին:—Որսորդն ալկորին շատ յանդիմանեց:

3. Աստղը պայծառ է:—Աստղերը պայծառ են:

4. Վարդենին ու փշենին բուսել էին միատեղ:—Վարդենիներն ու փշենիները բուսել էին միատեղ:

5. Կատուներն ու շունը կռուեցին:—Կատուն ու շները կռուեցին:

ՎԵՐԼՈՒԹՈՒԹԻՒՆ:—Որոշել բայ, ենթակայ, ստորոգեալ, խընդիրներ և պարագաներ բառերի վրայ գրելով բ. (=բայ), ե. (=ենթակայ), ս. (=ստորոգեալ), իս. (=ինդիր), պ. (=պարագայ): Օրինակ.

Ա. Դաշտը ծաղիկներով զարդարուեցաւ: Դաշտը (ե.), ծաղիկներով (իս.), զարդարուեցաւ (պ.):

Բ. Տիգրանը ջանասէր է:—Տիգրանը (ե.), ջանասէր (ս.), է (ը.):

Գ. Մարդ եւ անասուն, զազան եւ թուզուն շտապով գործի զնացին:—Մարդ եւ անասուն, զազան եւ թուզուն (ե.), շտապով (պ.), գործի (իս.), զնացին (ը.):

ՎԵՐԼՈՒԹՈՒԹԻՒՆ:—Որոշել պարագաների տեսակները՝ տ. պ. (=տեղի պարագայ), ժ. պ. (=ժամանակի պար) և յայն՝ Օրինակ՝ Արեգակն երկնքում (տ. պ.) փայլում է պայծառ (ձ. պ.)

## ԿՈՂՄՆԱԿԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՒ ՎԵՐԱԴԻՐ

21.

Բայի լրացումներն ևս իրենց կողմից կարող են լրացումներ ունենալ, որոնք կոչւում են կողմնակի լրացում: Օրինակ՝ Մեր դաշտը գոյնզգոյն ծաղիկներով զարդարուեցաւ խօսքի մէջ դաշտը ենթակայ է, ծաղիկներով խնդիր է զարդարուեցաւ բայի, իսկ մեր որոշում է դաշտը ենթակայի, թէ նամ կամ որ դաշտը. գոյնզգոյն որոշում է ծաղիկներով խնդիր, թէ լնչափի ծաղիկներով: Մեր, գոյնզգոյն բառերը կողմնակի լրացում են:

Գոյականի լրացումները միշտ կողմնակի են և կոչւում են՝ վերադիր (կամ՝ որոշող) ինչպէս՝ վերեկի խօսքի մէջ մեր բառը վերադիր է դաշտ գոյականի, իսկ գոյնզգոյն բառը վերադիր է ծաղիկներով գոյականի:

Կողմնակի լրացումներն ևս կարող են իրենց կողմից լրացումներ ունենալ և այլն: Օրինակ՝ Զարացից եկողի երեսն ալիւրու կը լինի խօսքի մէջ չաղացից կողմնակի լրացում է եկողի բառի. եկողի կողմնակի լրացում է երես բառի. երես ենթակայ է կը լինի բայի. ալիւրու ստորոշեալ է կը լինի բայի:

Կողմնակի լրացումները սովորաբար առաջ են դրւում և անբաժան են մնում իրենց լրացեալից, այսինքն այն բառից, որի լրացումն են լինում: Օրինակ՝ Մեր ծերուկ ծկնորսը բռնեց մի ոսկի ծկնիկ խօսքի մէջ ծկնորսը ենթական և ծկնիկ խնդիրը կարող են բայից յետ ու առաջ ընկնել, բայց նրանց լրացումները՝ մեր ծերուկ, —մի ոսկի միշտ անբաժան են մնում իրենց լրացեալից. ինչպէս՝ Մի ոսկի ծկնիկ բռնեց մեր ծերուկ ծկնորսը: Մեր ծերուկ ծկնորսը մի ոսկի ծկնիկ բռնեց:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ:—1. Արտագրել խօսքեր՝ կողմնակի լրացումների տակ՝ երկու գիծ և այլն: Օրինակ՝ Ոսկի (1 գ.) ձկնիկը մարդկային (1 գ.) լեզուով աղաչեց ծերին: Պառաւը նստած էր հին (2 գ.) խուղի (1 գ.) շեմքում: Բարձր (3 գ.) սարերից (2 գ.) իջնող (1 գ.) վտակը հոսում էր խիտ (1 գ.) անտառով:—Մեր (1 գ.) տղան շատ է սիրում առաւտեան (2 գ.) ծագող (1 գ.) արեգակը, դաշտ ու պարտէզում (2 գ.) ճովող (1 գ.) թռչնակներին և կանաչ (3 գ.) ճիւղերից (2 գ.) կախուած (1 գ.) պտուղները:

2. Արտագրել կամ կարդալ խօսքեր՝ կողմնակի լրացումները գուրս ձգելով, օրինակ՝ վերեկի խօսքերը լինում են. Զկնիկը լեզուով աղաչեց ծերին: Պառաւը նստած էր շեմքում: Վտակը հոսում էր անտառով: Տղան շատ է սիրում արեգակը, թռչնակներին և պըտուղները:

3. ՎԵՐԼՈՒԾԵԼ խօսքեր կողմնակի լրացումներն իրենց լրացեալի հետ միասին իբրև մի ամբողջութիւն վերցնելով, օրինակ՝

Ա. Գիշատիչ բազէն իր սուր ճանկերով բռնեց խեղնուկ աղաւնուն:

Գիշատիչ բազէն ենթակայ:

Իր սուր ճանկերով խնդիր.

Բոնեց բայ.

Խեղնուկ աղաւնուն խնդիր:

Բ. Մեր Տիգրանը շատ ջանամէր է:

Մեր Տիգրանը ենթակայ:

Շատ ջանամէր ստորոգեալ:

Ե բայ:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ:—Որոշել կողմնակի լրացումների տեսակները՝ նկատի ունենալով, որ գոյականի լրացումը կոչւած է վերադիր (վ.), օրինակ՝ Մեր (վ. տղան գոյականի) տղան շատ է սիրում (վ.), օրինակ՝ Յեր. ժ. պ. ծագող բառի) ծագող (վ. արեգակը գոյապատեան (Յեր. ժ. պ. ծագող բառի) ծագող (վ. արեգակը գոյականի) գոյականի) ճովող (վ. թռչնակներին գոյականի) և կանաչ (վ. ճիւղերից ունկող (վ. թռչնակներին գոյականի) կանաչ (վ. ճիւղերից պտուղները գոյականի) պտուղները:

## ԿՈՉԱԿԱՆ ԱՆՈՒՆ

Կոչական ասւում են այն գոյականները, որոնցով առարկաների, գլխաւորապէս մարդկանց անունը տալով կանչում ենք, երբ ուզում ենք նրանց մի բան ասել, հարցնել: Կոչական անունները նոյնապէս կարող են լրացում ունենալ: Օրինակ՝ Կնւժ, քեզ ասեմ, կնվայ, դու լսիր: Միայն, զրագէտ դուք պարոններ, նախանձում եմ ձեր բախտին:

ԿԵՏԱԴՐՈՒԹԻՒՆ:—Կոչական անունների շեշտուած վաճակի վրայ սովորաբար շեշտ է դրւում:

Կոչական անուններն իրենց լրացումների հետ միասին՝ խօսքից բաժանւում են ստորակէտով. ուրեմն եթէ խօսքի սկզբում են ընկնում, ետքից առնում են ստորակէտ. եթէ խօսքի մէջ են մտնում, երկու կողմից ստորակէտերի մէջ են դրւում. իսկ եթէ խօսքի վերջն են գալիս, առաջից դրւում է ստորակէտ, իսկ ետքից որևէ կէտ՝ նայելով իմաստին: Տես վերևի օրինակները:

## ԿԱՊ

23.

(ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՑԵՏԱԴՐՈՒԹԻՒՆ)

Կապ ասւում են այն բառերը, որոնք խօսքի մէջ մի գոյական անուն կամ դերանուն իբրև խնդիր կապելով մի ուրիշ բառի, գլխաւորապէս բայի հետ՝ ցոյց են տալիս ուրեմն յարաբերութիւն: Օրինակ՝ զնացի դէպի նա խօսքի մէջ դէպի բառը կապում է նա դերանունն իբրև խնդիր զնացի բայի հետ և ցոյց է տալիս ուղղութիւն: Դէպի նա կապով (նախադրութեամբ) խնդիր է զնացի բայի:

Կապերը գրւում են անունից և դերանունից առաջ կամ յետոյ, ուստի կոչւում են նախադրութիւն և յետադրութիւն: Օրինակ՝ առանց ինձ, բայց՝ ինձ համար:

Նախադրութիւններն են՝ ըստ, ի, առ, առանց, բացի, դէպի, մինչև:

Յետադրութիւններն են՝ մասին, համար, հանդերձ, ներքոյ, յանդիման. հետ, պէս, վրայ, չափ:

Կապական բառեր: — Կան որոշ թուով բառեր ես, որոնք խօսքի մէջ գործ են ածւում իբրև յետադրութիւն: Դրանք են՝ տեղ, կողմ, շուրջ, առաջ, ետև, դէմ, դիմաց, հանդէպ, վերև, ներքև, տակ, դուրս, ներս, մէջ, —ժամանակ, առաջ, յետոյ, — մօտ, զատ ևայլն:

24.

### ՇԱՂԿԱՊ

Շաղկապ ասւում են այն բառերը, որոնք որևէ յարաբերութեամբ կապում են՝<sup>1)</sup> համադաս (նոյն լրացումը կազմող) բառեր միմեանց հետ. օրինակ՝ Տիգրանն եւ Վարդանը գնացին. 2) Երկու խօսքեր միմեանց հետ, օրինակ՝ Ես գնացի տուն եւ տեսայ նրան:

Շաղկապներ են՝ ու, ու, բայց, այլ, սակայն, իսկ, կամ, թէ, եթէ, որովհետև, որ, որպէսպի, մինչդեռ ևայլն:

25.

### ԶԱՅՆԱՐԿՈՒԹԻՒՆ

Զայնարկութիւն ասւում են այն բառերը, որոնք մի ծայնով կամ բացազանչութեամբ ցոյց են տալիս խօսողի զգացումներն ու կամքը:

Զայնարկութիւնները խօսքից դուրս մնալով՝ կարող են խօսքն ամեն կերպ ընդհատելով ընկնել խօսքի մէջ. ուստի կոչւում են նաև միջարկութիւն: Օրինակ՝ Ան, ի՞նչ-պէս կուգեմ տեսնել մեր հային ուրախ, ապահով, կրթեալ, ինքնազո՞ւ: — Բայց, ախ, միայն մենք կը խօսենք: Երբ յիշատակս ալ թառամի, ահ, այն ատեն ես կը մեռնիմ:

Զայնարկութիւններ են՝ օխայ օխ, աւաղ, վայ, ոհ, էհ, ափսիս, տօ, ղմի, հապա, — հօնօ, քըշ, քշա, փըշտ ևլա:

ԿԵՏԱԴՐՈՒԹԻՒՆ: — Զայնարկութիւնների վրայ դրւում է շեշտ կամ բացագանչական նշան: Զայնարկութիւնները խօսքից բաժանւում են ստորակէտով, ինչպէս կոչականները: Կոչականների հետ գրուած այ, ով ձայնարկութիւնները կոչականից չեն բաժանւում ստորակէտով. օրինակ՝ Այ մարդ, այսօր շատ քնեցար:

### ԱՄՓՈՓՈՒՄ

Բառերն իրենց նշանակութեամբ բաժանւում են հետեւալ գլխաւոր տեսակներին, որոնք կոչւում են մասնբանի՝ բայ, գոյական, ածական, մակրայ, կապ, շաղկապ, ձայնարկութիւն:

1. Բայը ցոյց է տալիս, թէ մի առարկայի (դէմքին) վերագրուում է մի յատկանիշ (բայիմաստ):

2. Գոյականը ցոյց է տալիս առարկայի:

3. Ածականը ցոյց է տալիս առարկայի յատկանիշ:

4. Մակրայը ցոյց է տալիս յատկանիշի յատկանիշ կամ պարագայ:

5. Կապն և 6. շաղկապը ցոյց են տալիս յարաբերութիւն:

7. Զայնարկութիւնը ցոյց է տալիս զգացմունք ու կամք:

ա) Բայը մենակ խօսք է կազմում և խօսքի էական մասն է:

բ) Գոյականը, ածականն և մակրայը դառնում են միայն լրացում (լրացական բառեր):

գ) Կապն և շաղկապը ոչ խօսք են կազմում և ոչ լրացում դառնում, այլ կապում են բառեր կամ խօսքեր միմեանց հետ (կապակցական բառեր):

դ) Զայնարկութիւնը խօսքից դուրս է մնում:

## ԱՍԱՑՈՒԱԾ

Եթէ խօսքն առանձին վերցրած՝ մի ամբողջացած, լրացած միտք է յայտնում, կոչւում է ասացուած։ Օրինակ՝ Մի ծաղկով զարուն չի զալ մի խօսքը և մի ասացուած։ Ասացուած կարող է լինել կամ մի խօսքը, կամ երկու և աւելի խօսքերի բաղադրութիւնը, երբ միասին մի ամբողջացած միտք են յայտնում։ Օրինակ՝ Մինչեւ Շուշանը զարդարովի, ժամը կարձակուի, — երկու խօսք է, բայց մի ասացուած։ Մենք խօսում ենք ասացուածներով, այսինքն ամբողջացած, լրացած մտքեր ենք յայտնում։

Ասացուածը պարզ է, երբ մի խօսքից է կազմուած։ Ասացուածը բարդ կամ բաղադրեալ է, երբ երկու և աւելի խօսքից է կազմուած։

ԿԵՏԱԴՐՈՒԹԻՒՆ. — Ամեն ասացուածից յետոյ դըւում է վերջակէտ, իսկ ասացուածների մաս կազմող խօսքերն իրարուց բաժանւում են սովորաբար ստորակէտով։

ՎԵՐՈՒԾՈՒԹԻՒՆ. — Վերլուծել մի ասացուած՝ նշանակում է որոշել ասացուածի մասերը, այսինքն թէ ասացուածի մէջ քանի խօսք կայ։ Խօսքն իմացւում է բայից. քանի բայ կայ ասացուածի մէջ, այսքան էլ խօսք կայ։ Ասացուածի մասերը որոշելու համար ուրեմն պէտք է որոշել բայերը։ Օրինակ՝

Ա. Ամեն ամպելիս ծիւն չի զալ։ Մի պարզ ասացուած, կազմուած մի խօսքից. բայ՝ չի զալ։

Բ. Մինչեւ աղն եկաւ, մատաղը մէջտեղից վերացաւ։ Մի բարդ ասացուած, կազմուած երկու խօսքից։

1-ին խօսք. Մինչեւ աղն եկաւ. բայ՝ եկաւ։

2-րդ խօսք. Մատաղը մէջտեղից վերացաւ. բայ՝ վերացաւ։

Գ. Ով որ ուսում առնել էր ուզում, պէտք է զնար քաղաք, որ մեր գիւղից հեռու չէր։ Մի բարդ ասացուած, կազմուած երեք խօսքից։

1-ին խօսք. Ով որ ուսում առնել էր ուզում. բայ՝ ուզում էր։

2-րդ խօսք. Պէտք է զնար քաղաք. բայ պէտք է զնար։

3-րդ խօսք. Որ մեր գիւղից հեռու չէր. բայ՝ չէր։

## ԵՐՐՈՐԴ ՀԱՏՈՒԱԾ

### ԼՐԱՑԱԿԱՆ ԲԱՌԵՐ ԵՒ ԲԱՅ

#### 1. ԳՈՅՑԱԿԱՆ

Գոյշականը ցոյց է տալիս ինքնուրոյն գոյութիւն ունեցող կամ իբրև այնպիսին մտածուած առարկայ։ Գոյշականները լինում են՝ անոն և ղեղանոն։

#### Ա. ԱՆՈՒԻՆ

Անուն կամ գոյշական անուն ասուում են այն բառերը, որոնք տրւում են առարկաներին իբրև նրանց կոչումը. օրինակ՝ Արտաշէս, Թագաւոր։ Անունները լինում են՝ յատով և հասարակ անուն։ Անունները եղանակ են յոգնակի։

#### ԱՆՈՒԻՆ ՀՈՂՈՎՈՒՄԸ

Անունները նայելով թէ խօսքի մէջ ինչպիսի պաշտօն ունին՝ զանազան ձևերով փոփոխւում են։ Օրինակ՝ Ես գնացի պարտէզ։

Փարտէզի դուռ բաց էր։

Ես դուրս եկայ պարտէզից։

Ես անցայ պարտէզով։

Փարտէզում շատ ծառեր կային։

Մի անուն հոլովել նշանակում է ասել այն բոլոր միակ կամ առաջնակում է ասանակում անունը, որ կարող է ստանալ անունը՝ խօսքի մէջ զանաձևերը, որ կարող է ստանալ անունը՝ խօսքի մէջ զանացար։ Պահանջարութիւններ ցոյց տալու համար։

Հոլովները կամ անուան ձևերը հինգ են, որ կոչ-  
ում են՝ ուղղական, տրական, բացառական, գործիական,  
ներգոյական:

Բացի այս հինգ հոլովից կան նաև կոչական, հայցա-  
կան և սեռական հոլովները, որոնք հայերէնում չունին  
առանձին ձև: Կոչականը նման է ուղղականին, սեռակա-  
նը՝ տրականին, իսկ հայցականն՝ ուղղականին, որոշ դէպ-  
քերում նաև տրականին:

Ուղական հոլովը անուան ուղիղ, անփոփոխ ձևն  
է և չունի առանձին վերջաւորութիւն: Միւս հոլովները  
կազմում են մեծ մասամբ վերջաւորութիւններով, որոն-  
ցից առաջ ի, ու ձայնաւորները սովորաբար (երբեմն նաև  
է ձայնաւորը, եա, եայ, ոյ երկբարբառները) ձայնափո-  
խութիւն են կրում:

Բացառական հոլովի վերջաւորութիւնն է ից կամ  
ուց, Գործիականինը՝ ով, Ներգոյականինը՝ ում: Օրինակ՝ ջուր, ջրից, ջրով, ջրում: այդի, այդուց, այդով  
կամ այդիով, այգում կամ այդիում:

Տրական հոլով ունի եօթը տեսակ կազմութիւն,  
որով և հայերէնում եօթը հոլովում՝ կայ:

### 1. Ի ՀՈԼՈՎՈՒՄ

#### Եղակի

Ուղ.	քաղաք	ջուր	քաղաքներ	ջրեր
Տր.	քաղաքի	ջրի	քաղաքների	ջրերի
Բաց.	քաղաքից	ջրից	քաղաքներից	ջրերից
Գործ.	քաղաքով	ջրով	քաղաքներով	ջրերով
Ներգ.	քաղաքում	ջրում	քաղաքներում	ջրերում

#### Յոգնակի

Այսպէս հոլովում են անունների մեծ մասը: Միւս  
հոլովումների տակ գնացող անուններն ևս մեծ մասամբ  
կարող են այս հոլովման ձևով ես հոլովուել:

Հոլովել՝ Դաշտ, գիւղ, սար, աչք:—Փողոց, ըռպէտ,  
աշխարհ:—Միս, գիրք, թուղթ, սուրբ:—Ամիս, երկիր:—  
Անասուն, կերակուր:

### 2. ՈՒ ՀՈԼՈՎՈՒՄ

#### Եղակի

Ուղ.	ոսկի	ձի	ոսկիներ	ձիեր կը.
Տր.	ոսկու	ձիու	(ի հոլովման պէս)	
Բաց.	ոսկուց	ձիուց		
Գործ.	ոսկով	ձիով		
Ներգ.	ոսկում	ձիում		

Հոլովել՝ Այգի, եկեղեցի, գինի, գօտի:—Մարդ,  
Աստուած (Աստուծու), սէր (սիրու):

### 3. ԱՆ ՀՈԼՈՎՈՒՄ

#### Եղակի

Ուղ.	դուռ(ն)	սրբութիւն	դոներ,	սրբութիւններ
Տր.	դուռն	սրբութեան	(ի հոլովման պէս)	
Բաց.	դոնից	սրբութիւնից		
Գործ.	դոնով	սրբութիւնով		
Ներգ.	դոնում	սրբութիւնում		

Հոլովել 1. (Դուռ բառի պէս) բուռ, նուռ, կուռ,  
ձուկ, մուկ, գառ, եզ, թոռ, լեռ:

2. Ուսում (ուսման, ուսումից, ուսումով), հարցում,  
ցնցում, բորբոքում, չամբարձում:

#### Յոգնակի

3. (Սըսութիւն բառի պէս) լաւութիւն, մեծութիւն,  
ծովութիւն,—արիւն, անկիւն, սիւն։ Այս բառերի գոր-  
ծիականը լինում է նաև՝ սրբութեամբ, լաւութեամբ, մե-  
ծութեամբ և այլն։

4. Շուն, տուն (շան, տան), 5. Գարուն (գարնան), աշուն։  
6. Աղջիկ (աղջկան կամ աղջկայ), կնիկ։

#### 4. ՈՒԱՆ ՀՈԼՈՎՈՒՄ

##### Եղակի

##### Յոգնակի

Ուդ. օր  
Տը. օրուան կամ օրուայ

օրեր և այլն։  
(ի հոլովման պէս)

Բաց. օրուանից կամ օրից

Գործ. օրով

Ներգ. օրում  
Հոլովել՝ ժամ, ժամանակ, շաբաթ, ամիս, տարի,  
առաւօտ, երեկ, վաղը, ամառ, ձմեռ և այլն, —ժամանակի  
անունների մեծ մասը։

#### 5. ՈՉ ՀՈԼՈՎՈՒՄ

##### Եղակի

##### Յոգնակի

Ուդ. տէր

տէրեր և այլն։  
(ի հոլովման պէս)

Տը. տիրոջ

Բաց. տիրոջից

Գործ. տիրոջով

Ներգ.

Հոլովել՝ Տանուատէր, հողատէր, դրամատէր—կին  
(կնոջ), —յոգնակին լինում է՝ կանայք, կանանց, կանան-  
ցից, կանանցով, կանանցում, —տիկին, քոյր (քոռջ), մօ-  
րաբոյր, հօրաքոյր, —սկեսուր, աներ, տալ, ընկեր։

#### 6. ՕՐ ՀՈԼՈՎՈՒՄ

##### Եղակի

##### Յոգնակի

Ուդ. հայր

հայրեր և այլն։

Տը. հօր

(ի հոլովման պէս)

Բաց. հօրից

Գործ. հօրով

Ներգ. —

Հոլովել՝ կնքահայր, վանահայր, —մայր, տիրամայր,  
սանամայր (սանամէր), —եղբայր, հօրեղբայր։

#### 7. Ց ՀՈԼՈՎՈՒՄ

##### Յոգնակի

Ուդ. խաչոյենք

քեռոնք

Տը. խաչոյենց

քեռոնց

Բաց. խաչոյենցից

քեռոնցից

Գործ. խաչոյենցով

քեռոնցով

Ներգ. —

Հոլովել միայն յոգնակի՝

1. Տիգրանենք, տէրտէրենք, վարժապետենք։
2. Խնամոնք, պապոնք, —իմոնք, մերոնք, ձերոնք։
3. Հէրանք (հայր, հէրքառից), աներանք, Վարդանանք։
4. Ոմն բառի յոգնակին՝ ոմանք, ոմանց և այլն։
5. Մարդ բառի յոգնակին՝ մարդիկ, մարդկանց և այլն։
6. Կին բառի յոգնակին՝ կանայք, կանանց և այլն

## ՈՒՐԻՇ ՀՈԼՈՎԱԿԱՆ ԶԵԽԵՐ

Բացի եօթը հոլովական ձևերից կան և հետևեալ վերջաւորութիւնները, որոնք որոշ դէպքերում և որոշ բառերի համար են միայն գործածում և մեծ մասամբ հնացած են.

1. Եղակի սեռական-տրականի համար՝ այ, ոյ (անձայն յով), եան վերջաւորութիւնները. օրինակ՝ Աստուածածին, Աստուածածնայ. Սևանայ. սէր, սիրոյ. լոյս, լուսոյ: — Ծնունդ, Ծննդեան. Հոգեգալուստ, Հոգեգալստեան. ժողովուրդ, ժողովրդեան: — Կայսր, խաթըր, դուստր բառերն ունին նաև կայսեր, խաթեր, դստեր ձեզ:

2. Եղակի բացառականի համար՝ է, օրինակ՝ դռնէ դուռ, ծայրէ ծայր, գլխէ գլուխ, երկրէ երկիր և այլն:

3. Եղակի գործիականի համար՝ ամբ, օրինակ՝ մասամբ, անձամբ, մեծութեամբ:

4. Յոգնակի ուղղականի համար՝ ք, (ունք, ինք). օրինակ՝ այգիք, որդիք, քաղաքացիք, տղայք, ծաղկունք, դիւցազունք, անձինք:

5. Յոգնակի սեռական-տրականի համար՝ աց, ից, ոց, անց. օրինակ՝ ոռւսաց, տաճկաց, օրիորդաց, — պարսից, — հայոց, տղայոց, երեխայոց, քաղաքացոց, — անձանց, մանկանց, դիւցազանց:

## ԿՈՉԱԿԱՆ ԵՒ ՍԵՌԱԿԱՆ ՀՈԼՈՎՆԵՐ

Կոչական ասւում է ուղղականի հոլովական ձեզ, երբ գործ է ածւում իբրև կոչական անուն. օրինակ՝ Լսիր, որդենակ, հօրդ խրատին խօսքի մէջ որդեակ բառը կոչական է:

Մեռական ասւում է տրականի հոլովական ձեզ,

երբ լինում է խնդիր մի գոյական անուան, այսինքն դըրուելով մի անուան վրայ՝ լրացնում, որոշում է նրա իմաստը: Օրինակ՝ Ես առայ Տիգրանի գիրքը խօսքի մէջ Տիգրանի սեռական է՝ դրուած լինելով գիրք անուան վրայ:

Գրական լեզուի մէջ սեռականը ն յօդը չի առնում: ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ: — Որոշել սեռականներն իրենց խնդրապուլ հետ միասին: Օրինակ՝ Թագաւորը հրամայեց որսորդներին, որ երեխայի հետքը գտնեն: — Երեխայի հետքը:

## ՀԱՅՑԱԿԱՆ ՀՈԼՈՎ

### 1. ԲԱՅԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

33.

Բայի խնդիրները լինում են՝ կըող խնդիր, ներգործող խնդիր, բնութեան խնդիր, պարագայական խնդիր:

1. Կըող խնդիրը կամ կըող առարկան\*) ցոյց է տալիս մի առարկայ, որ իր վրայ կըում է ենթակայի գործողութիւնը, այսինքն՝

ա) Ներգործուում, ազդեցում է, փոփոխութիւն է կըում գործողութիւնից: Օրինակ՝ Երեխան պատուց գիրքը:

բ) Իբրև արդինք առաջ է գալիս գործողութիւնից: Օրինակ՝ Նա փոս փորեց:

2. Ներգործող խնդիրը կամ ներգործող առարկան\*\*) ցոյց է տալիս մի առարկայ, որի գործողութիւնը երթական կըում է իր վրայ: Օրինակ՝ Աբէլը սպանուեց Կայէնից:

3. Բնութեան խնդիրը ցոյց է տալիս մի ա-

\*) Կոչւում է նաև ներգործական սեռի (հայցական) խնդիր կամ ուղիղ խնդիր:

\*\*) Կոչւում է նաև կրաւորական սեռի խնդիր:

ուարկայ, որ ոչ կրող է և ոչ ներգործող: Օրինակ՝ Ես գիրքը  
տուի Տիգրանին: Նա նամակ ստացաւ իր հօրից:

4. Պարագայական խնդիր ասւում են այն  
գոյական խնդիրները, որոնք չեն մտածւում իբրև բան,  
ինչ կամ առարկայական խնդիր, այլ ինչպէս տեղի, ժա-  
մանակի և այլ պարագայ: Օրինակ՝ Նա սիրում է դպրոցը—  
խօսքի մէջ դպրոցը առարկայական խնդիր է (ի՞նչ, ի՞նչ  
բան), իսկ Նա գնաց դպրոցը—խօսքի մէջ դպրոցը պարա-  
գայական խնդիր է (մրտեղ, մւր, —տեղի պարագայ):

Կրող խնդիրը դրւում է՝ 1. Ողղականի ձեռվ,  
երբ առարկան իբրև իր, բան (ի՞նչ) է մտածւում. 2. Տրա-  
կանի ձեռվ, երբ առարկան իբրև անձ (ո՞ւմ) է մտածւում:  
Օրինակ՝ Նա մի մարդ (ի՞նչ) տեսաւ: Ամեն մարդ ունի  
իր սիրելի ընկերը (իր ի՞նչը): Նա ծրագը (ի՞նչը) վառեց:  
—Ես տեսայ ընկերիս (մւմ): Նա վիրաւորեց մի անմեղ  
մարդու (մւմ):

34.

## 2. ՀԱՅՑԱԿԱՆ ՀՈԼՈՎ

Հայցական հոլով ասւում են՝

1. Տրականի հոլովական ձեր, երբ լինում է կրող  
խնդիր. օրինակ՝ Ես տեսայ Տիգրանին:

2. Ուղղականի հոլովական ձեր, երբ լինում է՝

ա) Կրող խնդիր. օրինակ՝ Նա զիջը (ի՞նչը) կարդաց:  
բ) Որևէ պարագայական խնդիր. օրինակ՝ Մենք մը-  
տանք քաղաք (մւր): Նա այս զիշեր (Երբ) գնաց:

գ) Նախադրութեամբ խնդիր, օրինակ՝ Մենք գնացինք  
դէպի Տիգրանը:

դ) Ստորոգելիական վերագիր մի անցողական բայի  
հետ. օրինակ՝ Ես քեզ իմ աշակերտն էի կարծում:

3. ԲԱՅՑԵՐԻ ՍԵՌԸ

35.

Կրող լինդի նկատմամբ բայերը բաժանւում են երկու  
տեսակի կամ սեռի՝ անցողական և անանցողական:

Անցողական ասւում են այն բայերը, որոնք ու-  
նին կամ կարող են ունենալ կրող խնդիր, որի վրայ անց-  
նում է բայի գործողութիւնը, ինչպէս՝ ուտել, ասել, գրել  
ջարդել, մօտեցնել, նստեցնել:

Անցողական բայերը լինում են՝  
չեն կարող ունենալ կրող խնդիր, ինչպէս՝ մօտենալ, նստել,  
ջարդուել, գրուել, ասուել:

Անցողական բայերը լինում են՝  
1. Ներգործական բայերը, որոնց ենթական ինքը  
կատարում է բայի ցոյց առւած գործողութիւնը. օրինակ՝  
Տիգրանը նամակ գրեց:

2. Պատճառական բայերը, որոնց ենթական ինքը  
չէ կատարում գործողութիւնը, այլ պատճառ է լինում  
մի ուրիշին կատարելու. օրինակ՝ Վարժապետն աշակեր-  
տին ուրիշ տեղ նստեցըց (այսինքն՝ վարժապետը պատ-  
ճառ եղաւ, արեց, որ աշակերտն ուրիշ տեղ նստի):

Անանցողական բայերն ես լինում են՝

1. Կրամտորական բայերը, որոնց ենթական իր վրայ  
կրում է մի ուրիշ առարկայի գործողութիւն. օրինակ՝  
Տիգրանը յաղթուեց Արտաշէսից:

2. Զեզոր բայերը, որոնց ենթական չի կրում ուրի-  
շից, այլ ինքը լինում է մի ուրութեան մէջ, կամ կա-  
տարում է մի անանցողական գործողութիւն. օրինակ՝  
Երեխան քնեց: Տիգրանը գնաց:

Անցողական բայերն ունին իրենց համապատասխան  
իմաստով անանցողական բայեր կամ կրաւորական կամ  
չեղոք ձեռվ. օրինակ՝ գրել, կարդալ, մօտեցնել, վերացնել

—գրուել, կարդացուել, մօտեցուել կամ մօտենալ, վերացուել կամ վերանալ:

Անցողական բայերով ասած խօսքը կարելի է շուռտալ և անանցողական բայերով ասել. այդ ժամանակ անցողական բայերի հայցական կրող խնդիրը (ներգործական սեռի խնդիր) դասնում է անանցողական բայի ուղղական ենթակայ: Օրինակ՝ Նրան նամակ (հ. կր. խնդիր) գրեցին: Նրան նամակ (ուղղ. ենթակայ) գրուեցաւ: Տիգրանին (հայց. կր. խնդ.) պատժեցին: Տիգրանը (ուղղ. ենթ.) պատժուեց:

Վերլուիծիթիին:—Որոշել հայցական հոլովկրող խնդիր՝ անցողական բայերը դարձնելով անանցողական և հայցական խնդիրն՝ ուղղական ենթակայ: Օրինակներ՝

1. Քարը տեղից շարժեցին,—Քարը տեղից շարժուեց: Գերեզմանը փորեցին,—Գերեզմանը փորուեց: Պարտէզում ծառեր են տնկում,—Պարտէզում ծառեր են տնկում: Տունը քանդեցին,—Տունը քանդուեց: Ամեն ծառ իր պաղից կը ճանաչեն,—Ամեն ծառ իր պաղից կը ճանաչուի:

2. Կայէնը սպանեց Աքէլին,—Աքէլը սպանուեցաւ: Պողոսը ծեծեց Պետրոսին,—Պետրոսը ծեծուեց: Դու ինձ վնասեցիր, —Ես վնասուեցի: Նա գտաւ իւր որդուն,—իւր որդին գտնուեց: Նրան իւր յանցանքի համար են պատժում,—Նա իւր յանցանքի համար է պատժում: Խեղճ մարդուն զուր տեղը տանջեցին,—Խեղճ մարդը զուր տեղը տանջուեց:

3. Ծերունուն հացի նստեցրին,—Ծերունին հացի նստեց: Երեխային կրթում, մեծացնում են,—Երեխան կրթում, մեծանում է: Դու ինձ վախեցրիր,—Ես վախեցայ: Թոշուններին տեղից թոցրին, —Թոշունները տեղից թուան: Նրան տուն վերադարձրին,—Նա տուն վերադառաւ:

Վերլուիծիթիին:—Որոշել հայցական հոլով կրող խնդիր և բնութեան խնդիր՝ խառատի ունենալով, որ անանցողական սեռով ասելիս բնութեան խնդիրն անփոփխ նոյն է մնում: Օրինակ՝

1. Ես գիրը (հ. կր. խ.) տուի Տիգրանին (տր. բն. խ.): Գիրը (ուղղ. ենթ.) տրուեցաւ Տիգրանին (տր. բն. խ.):

2. Տիգրանին (հ. կր. խ.) հեռացրին իր բարեկամներից) բաց. բն. խ.): Տիգրանը (ուղղ. ե.) հեռացաւ իր բարեկամներից (բ. բն. խ.): Վերլուիծիթիին:—Որոշել հայցական կրող խնդիր և ներգործող խնդիր՝ կրաւորական բայերը գարձնելով ներգործական, ներգործող խնդիրն՝ ուղղական ենթակայ, իսկ ենթական՝ հայցական կրող խնդիր: Օրինակ՝

1. Թշնամին (ենթ.) յաղթուեց (կր. բայ) մեղնից (ներգ. խ.): Մենք (ենթ.) յաղթեցինք (ներգ. բայ) թշնամուն (հայց. կր. խ.): Աքէլը սպանուեց Կայէնից, —Կայէնը սպանեց Աքէլին:

2. Գետինը ծածկուեց ծիւնով, —Զիւնը ծածկեց գետինը: Նա իր զաւակներով է մխիթարւում, —Նրան իր զաւակներն են մխիթարւում:

3. Քաղաքն առնուեցաւ թշնամինների ծեռով, —Թշնամինիրն առան քաղաքը:

Վերլուիծիթիին:—Որոշել հայցական հոլով՝ որոշելով ուղղականի ձեռվ գրուած պարագայական խնդիրները: Օրինակ՝

1. Ես գնացի տուն (մւր, —տեղի պ. հայց. հ.):

2. Նա եկաւ այս առաւօտ (Երբ, —ժ. պ. հայց. հ.):

3. Այս պատը մի կանգուն (մրչափ, —չափ ու քանակի պ. ) բարձրացրին:

## Բ. ԴԵՐԱՆՈՒԻՆ

36.

Դերան ուն կամ գոյական դերանուն ասւում են այն բառերը, որոնք դրւում են անունների տեղ մի անգամ արդէն ասած, կամ յայտնի, ծանօթ անունները չը կը կնելու համար:

Դերանունները հաստատուն նշանակութիւն չունին. այլ նայելով թէ ինչ անուան տեղ են դրւում, նրա նշանակութիւնն էլ ստանում են: Օրինակ՝ Տիգրանը պարապում է. Նա դեռ չի պատրաստել իր դասերը—խօսքի մէջ նա, իր բառերը դերանուն են և գրուել են Տիգրան անուան տեղ: Բայց եթէ ասենք՝ Արտաշէսը պարապում է. Նա դեռ չի պատրաստել իր դասերը, —նա, իր դերանուններն այժմ դրւում են Արտաշէս անուան տեղ:

4

Դերանունները լինում են՝ անձնական, ցուցական,  
փոխադարձ և յարաբերական:

Անձնական գերանուններն են՝ 1-ին դէմքի ես.  
ինքս. 2-րդ դէմքի՝ դու, ինքդ. 3-րդ դէմքի՝ ինքը (ինքն):

Երրորդ դէմքի առարկայի անուան՝ տեղ դրւում են  
նոյնպէս և

Յուցական գերանունները՝ սա, դա, այս,  
այդ, այն, որոնք գործ են ածւում, երբ խօսողն առար-  
կան ցոյց է տալիս և առարկայի անունը տալու տեղ ա-  
սում է՝ սա, դա, նա և այն: Երբ առարկան առաջին դէմ-  
քին մօտ է, կամ մօտ է մտածւում, դրւում է սա, այս.  
Երբ երկրորդ դէմքին մօտ է, կամ մօտ է մտածւում,  
դրւում է դա, այդ. իսկ երբ առարկան առաջին և երկ-  
րորդ դէմքից էլ հեռու է, կամ հեռու է մտածւում, դր-  
ւում է նա, այն:

Փոխագարձ գերանուններն են՝ միմեանց, իրար,  
մէկմէկու, որոնք դրւում են խօսքի մէջ եղած երկու  
կամ աւելի անունների տեղ և խօսքի իմաստն այնպէս են  
արտայայտում, որ թէ մէկ և թէ միւս առարկայի համար  
է հասկացւում: Օրինակ՝ Կաղն ու կոյրն իրար օգնեցին  
խօսքը հասկացւում է՝ թէ կաղը կոյրին օգնեց և թէ կոյրը  
կաղին օգնեց:

Յարաբերական կամ շաղկապական գե-  
րանուններն են՝ որ, ով, ինչ, ուր, երբ, որոնք դրուելով  
մի խօսքի սկզբում՝ այդ խօսքը կապում են մի ուրիշ խօս-  
քի հետ: Օրինակ՝ Ուսում առնելու համար պէտք էր գնալ  
քաղաք, որ (=քաղաքը) մեր գիւղիցը հեռու չէր: Մենք  
մտանք եկեղեցին, ուր (=եկեղեցում) մեծ քազմութիւն կար:

Ո՞վ, ինչ, ուր, երբ հարցաց ական գերանուն են կոչ-  
ւում և հարցական նշանով են դրւում, երբ գործ են ած-

ւում ոչ թէ մի ծանօթ անուն չկրկնելու համար, այլ  
խօսողի համար մի անծանօթ անուն հարցնելու համար,  
որ որոշում է պատասխանի մէջ: Օրինակ՝ Ո՞վ եկաւ ձեզ  
մօտ:—Տիգրանը եկաւ մեզ մօտ:

Ուր, երբ մակրայական գերանուն կամ գերանունական մակ-  
րայ են, որովհետև ցոյց են տալիս տեղի և ժամանակի պայագայ  
և դրւում են այնպիսի անունների տեղ, որ տեղի և ժամանակի  
պարագայի նշանակութեամբ են գործածւում:

### ԴԵՐԱՆՈՒԻԾՆ ԹԻՒՐ

37.

Դերանուան թիւր կախուած է այն անունից,  
որի տեղ դրւում է: Եզակի անուան տեղ դրւում է եզակի  
գերանուն, իսկ յոգնակի անուան, ինչպէս և երկու և ա-  
ւելի անունների տեղ՝ դրւում է յոգնակի գերանուն:  
Օրինակ՝ Աշակերտը պարապում է. նա գեռ չի պատրաս-  
տել իր գասերը:—Աշակերտները պարապում են. Նրանք  
գեռ չեն պատրաստել իրենց գասերը: Տիգրանն ու Վար-  
դանը պարապում են. Նրանք գեռ չեն պատրաստել իրենց  
գասերը: Բայց՝ Աշակերտները, որ (կամ որոնք) պատրաս-  
տել էին իրենց գասերը, գնացին զբօննելու: Տիգրանն ու  
Վարդանը, որ (կամ որոնք) արգէն պատրաստել էին...  
Ուր են այն զըքերը, որ (և ոչ՝ որոնք, որոնց) դու կար-  
դացել ես: Տուր ինձ այն թուղթն ու մատիտը, որ (և ոչ՝  
որոնք, որոնց) դու գնեցիր ինձ համար:

### ԴԵՐԱՆՈՒԻԾՆ ՀՈԼՈՎՈՒԻՄԸ

38.

Դերանունները հոլովւում են մասամբ անունների պէս,  
մասամբ առանձին կերպով:

Անունների պէս հոլովւում են՝ միմեանց, միմեան-

ցից, միմեանցով։ Իրար կամ իրարու, իրարուց, իրարով, — մէկմէկու, մէկմէկուց։ Ի՞նչ, ինչից, ինչնվ, ինչնւմ, ինչեր և լու։ Երբուամյ, երբուանից։ Որ, որի, որից, որով, — որոնք կամ որ, որոնց, որոնցից, որոնցով։

Ի՞նքս, ինքո, գըական լեզուի մէջ նաև այս, այդ, այն չեն հոլովում։ Յոգնակի ունին՝ ինքներս, ինքներդ։

Առանձին կերպով հոլովում են՝ ես, դու, ինքը, սա, դա, նա, ով։

### Եղակի

Ո.	ես	դու	նա	ինքը	ով
Տ.	ինձ	քեզ	նրան	իրան	ում
Բ.	ինձնից	քեզնից	նրանից	իրանից	ումնից
Գ.	ինձնով	քեզնով	նրանով	իրանով	ումնով
Ն.	ինձնում	քեզնում	նրանում	իրանում	ումնում

### Յոգնակի

Ո.	մենք	դուք	նրանք	իրանք	ովքեր
Տ.	մեզ	ձեզ	նրանց	իրանց	—
Բ.	մեզնից	ձեզնից	նրանցից	իրանցից	—
Գ.	մեզնով	ձեզնով	նրանցով	իրանցով	—
Ն.	մեզնում	ձեզնում	նրանցում	իրանցում	—

Դերանունների հոլովման համար պիտի իմանալ.

1. Ես, որու բացառ. գործ. և ներգ. հոլովերի համար ունին նաև ինձանից, քեզանից, մեզանից, ձեզանից, — ինձանով, քեզանով, մեզանով, ձեզանով, — ինձանում, քեզանում, մեզանում, ձեզանում ձերը։

2. Ի՞նքն հոլովում է և ե ձայնաւորով՝ իրեն, իրենից և լու. իրենք, իրենց և լու. Յոգնակին կայ նաև՝ իւրեանք, որ հնացած է։

3. Նա ունի նաև նորան, նորանից և լու. նոքա, նոցա, նոցանից և լու ձերը, որ հնացած են։

Նա գերանուան պէս հոլովում են՝ սա, սրան, սրանից, սրանով, սրանում, սրանց և լու. դա, դրան, դրանից, դրանով և լու։

4. Անձնական և ցուցական գերանուններն ունին նաև իմ, քո, մեր, ձեր, իր (իւր, իրա), սրա, դրա, նրա առանձին ձերը, որոնք դրւում են սովորաբար անունների վրայ իւրեւ սեռական և ցոյց են տալիս, թէ մի առարկայ ումն է, ում է պատկանում. օրինակ՝ իմ գիրքը, քո գիրքը, մեր գիրքը և այլն։ Այս գէպքում գըանք կոչւում են նաև ստացական գերանուն։

### ԳՈՅԱԿԱՆԻ ՊԱՇՏՈՆԸ ԽՕՍՔԻ ՄԵՋ

39.

Գոյականը (անուն, գերանուն) խօսքի մէջ լինում է միշտ լրացում մի ուրիշ բառի.

1. Բայի լրացում՝ ենթակայ, ստորոգեալ և խնդիրներ։  
2. Ածականի լրացում՝ կամ ածականի խնդիր, օրինակ՝ Նա գովեստի արժանի աշակերտ է։ Դործի ընդունակ մարդ։ Խելքից զուրկ, մտքով կոյր մարդ։

3. Գոյականի լրացում՝ կամ վերադիր։ Այսպէս՝

ա) Մի գոյական ուղղական, սեռական, բացառական կամ գործիական հոլովերով, որ ինչպէս մի ածական դըրւում է անուան վրայ առաջից. օրինակ՝ Տառելս ձուկը վանայ լճում է լինում։ Նա երկու քաժակ ջուր խմեց։ Նա հագել էր կամիր մահուղից չուխայ։ Կաթնով ոչ խարը հօտից չի գուրս գալ։ Վարդան զօրավարն էր հայոց զօրքերի սպարապետն Աւարայրի ճակատամարտում։

բ) Մի գոյական, որ գրւում է մի անուան կամ գերանուան վրայ ետևից՝ այն հոլովով, որով գրուած է ու

բոշելի անունը կամ դերսնունը: Այս վերադիրն առւում է բացայայտիչ: օրինակ՝ Անուց, Բագրատունեաց Մայրաքաղաքից, շատ հեռու չէ Երազգաւորսը: Խոսրովը՝ Տրդատ թագաւորի որդին՝ մի անտառ տնկել տուաւ Մամիկոնեանց նահապետի Վաշէի ձեռքով: Մենք, աշակերտներս, պէտք է ջանանք ամեն օր յառաջադիմել:

Բացայայտիչը, եթէ անուան վրայ է դրուած, կարելի է շուռ տալ և գնել բացայայտեալից առաջ ինչպէս մի ածական: Այսպէս՝ վերեկ օրինակները լինում են՝ Բագրատունեաց Մայրաքաղաք Անուց շատ հեռու չէ Երազգաւորսը: — Տրդատ թագաւորի որդի Խոսրովը մի անտառ տնկել տուաւ Մամիկոնեանց Վաշէ նահապետի ձեռքով:

Կետադրութիւն: — Բացայայտիչը բացայայտեալից բաժանւում է բութով, կամ թէ ստորակէտերի կամ բութերի մէջ է առնւում: Տես վերեկ օրինակները:

## 2. Ա Ծ Յ Կ Ա Ն

Ածականը ցոյց է տալիս առարկայի յատկանից: Ածականները խօսքի մէջ լինում են՝

1. Վերադիր մի անուան կամ մականուն, օրինակ՝ կղոր սեղան, սեւ սեղան: Պայծառ արեգակը ծագեց օհւնապատ լեռների գլխին:

2. Ստորոգեալ, օրինակ՝ սեղանը կղորէ: Սեղանը սեւէ:

Բացի սրանից՝ ածականները դրուելով բայի և ածականի վրայ՝ գործ են ածում իբրև մակրայ (պարագայ):

Ածականները՝ խօսքի մէջ միշտ անփոփոխ են մնում: Մականունները սակայն, երբ գոյական անունը գեղչւում է, կարող են գոյականաբար գործածուել և յօդ առնելով հոլովուել ինչպէս մի գոյական անուն: Օրինակ՝ Թաց փայտն էլ չոլի (==չոր փայտի) հետ կայրուի:

ՎԵՐԱԿԱՆՆԵՐԻՆ: — 1. Որոշել ածականները և նրանց գործածութիւնն իբրև մականուն և ստորոգեալ:

2. Որոշել գոյականաբար գործածուած ածականները՝ հետը փակագծի մէջ դնելով այն անունը, որ գորութեամբ հասկացում է: Օրինակ՝ Ունէր նա երկու մատաղնաս աղջիկ: մինք (==մի աղջիկը) խիստ տգեղ, միւսը (==միւս աղջիկը) գեղեցիկ:

## ԱԾԱԿԱՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Ածականները նայելով իրենց իմաստին լինում են՝ որակական, թուական, ցուցական, անորոշ և հաբցական:

Որակական ածականները կամ ածական անունները ցոյց են տալիս յատկութիւն կամ ինչպիսի լինել: Օրինակ՝ ըարի (հայր), մեծ (զիբք), կատու (ներկ):

Թուական ածականները կամ թուական անունները ցոյց են տալիս թիւ ու համարք և լինում են՝

1. Քանակական թուականներ, որ ցոյց են տալիս ըանի կամ ողքան լինելը: Օրինակ՝ մի (զրիչ), երկու (սեղան), երեք (տարի) և այն. կէս (տարի), քառորդ (դար):

2. Դասական թուականներ, որ ցոյց են տալիս, թէ որոշ շարքի մէջ սանիերորդ կամ որ տեղն է բռնւում առարկան: Օրինակ՝ առաջին (տարի), երկրորդ (սեղան), երրորդ (դասարան), չորրորդ (աշակերտ) և այն:

Ցուցական ածականները կամ ածական դերանունները՝ այս, այդ, այն, սոյն, դոյն, նոյն, միեւնոյն դրուելով մի անուան վրայ որոշում են անունը՝ վրան աւելացնելով մատով ցոյց տալու կամ մտքով ակնարկելու գաղափարը: Օրինակ՝ երբ ասում ենք այս սեղանը, այդ սեղանը՝ ձեռով ցոյց ենք տալի մի սեղան:

Ցուցական ածականները՝ այս, այդ, այն, չպիտի շփոթել այս, այդ, այն գոյական գերանունների հետ: Վերջիններս միշտ մենակ են բանում գրուելով մի անուան (երբեմն և խօսքի) տեղ, որից և

ստանում են իրենց իմաստը. իսկ ածականները մենակ չեն բանում, այլ միշտ մի անուան վրայ են դրում:

Յուցական ածականների մէջ դրում են նաև հետեւալները այսպէս, այդպէս, այնպէս, սոյնպէս, դոյնպէս, նոյնպէս. այսպիսի, այդպիսի, այնպիսի, նոյնպիսի. այսքան, այդքան, այնքան, նոյնքան, այսչափ, այնչափ, նոյնչափ:

**ԱՆՈՐՈՉ ածականներն են՝ շատ, բաւական (ին), քիչ, սակաւ, աւելի, պակաս, նուազ, մի քանի, ամեն, ամենայն, քոլոր, իրաքանչիր, ամեն մի, այլ, ուրիշ, միւս, մէկէլ, այս ինչ, այն ինչ, ինչինչ, ինչոր, որեւէ:**

Հարցական ածականներն իմաստով անորոշ ածական են, միայն գործ են ածւում խօսքի մէջ մի ածականի հարցման համար: Պատասխանը լինում է մի ածական: Հարցական ածականներն են՝ ինչ, ո՞ր, քանի, ո՞րքան, ինչքան, ո՞րչափ, ինչչափ, ո՞րպէս, ինչպէս, ո՞րպիսի, ինչպիսի, քանի՞նըը:

Ածականների մէջ մանում են նաև ըս, ըդ, ըն, (ը) յօդերը:

### 3. ՄԱԿԲԱՅ

**Մակբայը ցոյց է տալիս յատկանիշի յատկանիշ կամ պարագայ:**

Յատկանիշ ցոյց տուող բառերն են բայն իր բայի-մաստով և ածականը. ուստի մակբայները խօսքի մէջ դրում են բայի և ածականի վրայ իբրև պարագայական բացում. օրինակ՝ Սենեակը քոլորովին մթնեց: Սենեակը քոլորովին մուլժն է: Առաջին խօսքի մէջ քոլորովին բառը ցոյց է տալիս մթնեց բայի պարագան (մակբայ, բուն իմաստով). իսկ երկրորդ խօսքի մէջ քոլորովին ցոյց է տալիս մուլժ ածականի պարագան (մակածական մակբայ):

Մակբայը կարող է գրուել և իբրև մակբայ գործածուած ածականների վրայ. օրինակ՝ նա քոլորովին մուլժն է խօսում խօսքի մէջ քոլորովին մակբայը գրուած է մուլժ ածականի վրայ, որ մակբայօրէն է գործածուած:

Մակբայները խօսքի մէջ միշտ անփոփոխ են մնում:

Բուն մակբայները հայերէնում սակաւաթիւ են. ածականները և որոշ թուով գոյականներ գործածուելով իբրև պարագայ՝ առնւում են իբրև մակբայ:

### ՄԱԿԲԱՅՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Մակբայները նայելով թէ ինչ պարագայ են ցոյց տախա՞լինում են.

**1. ՏԵՂԱԿԱՆ՝ ուր, — աստ, անդ, ուրեք, ամենուրեք:**

Տեղի անունները, երբ անփոփոխ և առանց յօդի դրում են բայի վրայ, առնւում են սովորաբար իբրև մակբայ. օրինակ՝ Ես վեր բարձրացայ: Նա ներս մտաւ: Այսպէս և առաջ, յետ, մէջ, դուրս, վերև, ներքև և այլն:

**2. ԺԱՄԱՆԱԿԱԿԱՆ՝ երբ, — երբեմն, երբեք,** այսուհետեւ, այնուհետեւ, նախ, ապա, դեռ, արդէն:

Ժամանակի անունները՝ անփոփոխ և առանց յօդի դրուելով բայի վրայ՝ առնւում են իբրև մակբայ. օրինակ՝ Նա հիմա կը գայ: Նա էզուց կը գնայ: Այսպէս և այսօր, վաղը, երէկ և այլն:

**3. ՈՐԱԿԱԿԱՆ՝ ինչպէս, ոնց, — մեծապէս, ազատորէն, քաջաբար:** Այսպէս բոլոր պէս, բար, օրէն բառերով բարդուածները, որոնք գործ են ածւում երբեմն և իբրև ածական:

Որակական ածականները դրուելով բայի վրայ՝ առնելում են իբրև մակբայ. օրինակ՝ նա լաւ խօսեց:

**4. ՔԱՆԱԿԱԿԱՆ՝ քանից, — երկից, երից, բազմից:**

Քանակական ածականները դրուելով բայի վրայ՝ առնը-  
ւում են իբրև մակբայ. օրինակ՝ տասը չափիր, մին կտրիր:

5. Աստիճանական մակբայները, որոնք դրուելով  
որակական ածականների և մակբայների վրայ, ցոյց են  
տալիս յատկութեան աւելի կամ պակաս, շատ կամ քիչ  
լինելը: Աստիճանական մակբայները մակբայօրէն գործա-  
ծուած ածականներ են:

ա) Սաստկական նշանակութիւն ունին՝ սաստիկ,  
խիստ, շատ, բաւականին, չափազանց, և այլն. օրինակ՝ Այս  
վարդը խիստ հոտաւէտ է:

ա) Բաղդատական նշանակութիւն ունին՝ աւելի, պա-  
կաս, նուազ, նոյնչափ, նոյնքան ելն, օրինակ՝ Վարդը  
մանուշակից աւելի հոտաւէտ է: Մանուշակը պակաս հոտա-  
ւէտ է քան քան վարդը: Արծաթը նոյնչափ օդտաւէտ  
է, որչափ ոսկին:

6. Եղանակական մակբայները, որոնք ցոյց են  
տալիս խօսողի վերաբերմունքը խօսքի բովանդակութեան  
նկատմամբ: Լինում են՝

ա) Հաստատական՝ այն, անշուշտ, հարկաւ, իհարկէ:

բ) Բացասական՝ ոչ, մի, չը:

գ) Երկարայական՝ թերեւս, գուցէ, միթէ, արդեօք:

ԿԵՏԱՐՈՒԹԻՒՆ:— 1. Եղանակական մակբայները յաճախ  
ստորակէտերի մէջ են առնուում և կոչւում են միջան-  
կեալ բառեր. օրինակ՝ Ռուբէնի սիրար, այն, ցաւում էր  
նրա համար: Դու, իհարկէ, այդ ժամանակ դեռ չէիր ձա-  
նաչում նրանց:

2. Այն, ոչ մակբայները երբ պատասխանական խօս-  
քի սկզբում են դրւում, ետեից առնում են ստորակէտ.  
օրինակ՝ Դու այսօր պարապել ես:— Այն, պարապել եմ.

ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ:— Ռուբէլ ածականներն ենրանց գործածու-  
թիւնն՝ 1. իբրև մականուն, 2. իբրև բայի պարագայ կամ մակ-

բայ բուն իմաստով, և 3. իբրև ածականի պարագայ կամ մակա-  
ծական. օրինակ՝ Շատ հին ժամանակ մի թագաւոր կար: Շատ  
մակածական հին ածականի, շատ հին:— Հին մականուն ժամանակ  
անուան, հին ժամանակ:— Մի մականուն թագաւոր անուան, մի թա-  
գաւոր:— Պառաւը ծերին սաստիկ նախատեց:— Սաստիկ մակբայ բուն  
իմաստով նախատեց բայի, սաստիկ նախատեց.

#### ՅԱՏԿՈՒԹԵԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐ

44.

Աստիճանական մակբայները դրուելով որակական  
ածականների վրայ՝ ցոյց են տալիս յատկութեան աստի-  
ճանները.

ա) Սաստկական աստիճան, երբ յատկութեան աս-  
տիճանը բարձրացւում կամ իջեցւում է առանց բաղդա-  
տութեան. օրինակ՝ նա խիստ լաւ մարդ է:

բ) Բաղդատական աստիճան, երբ մի առարկայ իր  
յատկութեան կողմից համեմատում է ուրիշ նոյն յատ-  
կութիւնն ունեցող մի կամ մի քանի առարկաների հետ.  
օրինակ՝ Վարդը մանուշակից աւելի հոտաւէտ է: Մանուշա-  
կը պակաս հոտաւէտ է քան վարդը:

գ) Գերադրական աստիճան, երբ բաղդատութիւնը լի-  
նում է բոլոր նոյն յատկութիւնն ունեցող առարկաների  
հետ. օրինակ՝ Վարդն աւելի գեղեցիկ է քան ըոյը ծաղիկ-  
ները. կամ՝ վարդն ամենից գեղեցիկ (կամ՝ ամենագեղե-  
ցիկ) ծաղիկն է:

Ածականը ղրական աստիճանի է կոչւում, երբ  
առանց բաղդատութեան կամ սաստկականութեան, պարզա-  
պէս առարկայի յատկութիւնն է ցոյց տալիս. օրինակ՝  
վարդը գեղեցիկ է:

Նոյն աստիճաններն ունին նաև մակբայօրէն գործա-  
ծուած ածականները և առաջ, յետոյ, յետ, վեր բառերը:

45.

## Բ Ա Յ

Բայ կոչւում են այն բառերը, որոնք մենակ առանց ուրիշ բառի, խօսք են կազմում:

Ամեն բայ ունի՝ բայիմաստ, դէմք, թիւ, ժամանակ և եղանակ:

Բայիմ աստը ցոյց է տալիս եղելութիւն, այսինքն անել, լինել, մի բան անել, մի բան լինել:

Դէմքը երեք է՝ 1-ին, 2-րդ և 2-րդ դէմք:

Թիւը երկու է՝ եղակի և յոգնակի:

46.

## ԲԱՅԻ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ

Ամեն բայ ցոյց է տալիս և ժամանակ, այսինքն թէ երբ է կատարւում եղելութիւնը: Ժամանակը երեք է.

1. Ներկայ, որ ցոյց է տալիս խօսելու վայրկեանին կատարուող եղելութիւն, օրինակ՝ զնում՝ եմ:

2. Անցեալ, որ ցոյց է տալիս խօսելու վայրկեանից առաջ կատարուած եղելութիւն, օրինակ՝ զնացել եմ:

3. Ապանի, որ ցոյց է տալիս խօսելու վայրկեանից յետոյ կատարուելիք գործողութիւն, օրինակ՝ զնալու եմ:

47.

## ԲԱՅԻ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Բայի եղանակները հինգ են՝ սահմանական, ենթադրական, հարկադրական, ըղձական և հրամայական:

1. Սահմանական եղանակը ցոյց է տալիս իրական եղելութիւն:

2. Ենթադրական եղանակը ցոյց է տալիս մի հնարաւոր եղելութիւն, որ խօսողը մտածում, ենթադրում է, թէ լինում է, եղել է, կամ կը լինի:

3. Հարկադրական եղանակը ցոյց է տալիս մի եղելութիւն, որ խօսողը մտածում է, բայց ոչ իբրև լոկ ենթադրութիւն, այլ իբրև անհրաժեշտութիւն, անհրաժեշտ հարկ ու պէտք, պարտք: Օրինակ՝ Նա այժմ տանն է: Նա այժմ գնում է՝ խօսքերի մէջ է, զնում է բայերը սահմանական եղանակի են. նրանց ցոյց տուած եղելութիւններն իրական են, իսկապէս տեղի ունին. իսկ եթէ նոյն խօսքերը շուռ տանք և ասենք՝ Նա այժմ տանը կը լինի. Նա այժմ գնալիս կը լինի, —կը լինի, զնալիս կը լինի բայերը ենթադրական եղանակի են. մենք այդպէս կարծում, ենթադրում ենք միայն: Իսկ երբ ասում ենք՝ Նա այժմ տանը պիտի լինի. Նա այժմ զնալիս պինի:

4. Ըղձական եղանակը ցոյց է տալիս մի եղելութիւն, որ ցանկացւում է. օրինակ՝ զնամ, տեսնեմ նրան: Աստուած հոգին լուաւորէ:

Ըղձական եղանակը կոչւում է նաև ստորադասական եղանակ:

5. Հրամայական եղանակը ցոյց է տալիս մի եղելութիւն, որ խօսողն իր խօսակցին հրամայում է. ունի միայն եղակի և յոգնակի 2-րդ դէմք: Օրինակ՝ կարդա, գրիր, —կարդացէք, գրեցէք:

## ԲԱՅԻ ԽՈՆԱՐՀՈՒՄԸԸ

48.

Մի բայ խոնարհել նշանակում է ասել այն բոլոր ձևերը կամ փոփուութիւնները, որ ստանում է բայը՝ դէմք, թիւ, ժամանակ և եղանակ ցոյց տալու համար:

(Բայի ձևերը կամ ժամանակները նայելով իրենց

կազմութեան՝ չորս խմբի են բաժանւում՝ 1. Գլխաւոր բաղադրեալ ժամանակներ, 2. Հղական, ենթադրական և հարկադրական եղանակներ 3. Անցեալ կատարեալ և հրամայական. 4. Երկրորդական բաղադրեալ ժամանակներ: Կան և անկանոն խոնարհուող բայեր:)

#### 49. 1. ԳԼԽԱՒՈՐ ԲԱՂԱԴՐԵԱԼ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ/

Գլխաւոր բաղադրեալ ժամանակները կազմուում են մի գերբայից և եմ բայից, որ առում է օժանդակ բայ: Դերբայ առում են բայի այնպիսի ձեերը, որոնք ցոյց են տալիս բայիմաստ (անել, լինել) առանց դէմքի, ուստի կոչում են նաև բայի անդէմ ծեւեր:

Բուն բայերն են բայի դիմաւոր ձեերը:

Դերբայները հինգ են՝ անորոշ, անկատար, ապառնի, անցեալ և ենթակայական:

#### 50. ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ

Անորոշ դերբայը ցոյց է տալիս լոկ բայիմաստ (եղելութիւն) առանց դէմք, թիւ, եղանակ և ժամանակ որոշելու:

Վերջանում է միշտ լ բաղաձայնով, որից առաջ ընկնում է ա, ե, ի ձայնաւորներից մէկը, որոնք կոչումն է լծորդ: Օրինակ՝ խաղալ, գրել, ծաղկիլ: Իլ վերջի տեղ սովորաբար գործ է ածւում ել՝ աշխատիլ, խօսիլ, մեռնիլ, յաջողիլ=աշխատել, խօսել մեռնել, յաջողել:

Ալ, ել, իլ վերջերը դրւում են կամ անմիջապէս բայի հիմքի վրայ, ինչպէս՝ խաղալ, բերել, յաջողել. կամ

հիմքի և լծորդի մէջ մտնում են ածանցներ, ինչպէս՝ գոհ-ան-ալ, մօտ-են-ալ, տես-ն-ել, փախ-չ-իլ:

(Բայի հիմքը լինում է կամ մի արմատ, կամ մի բառ՝ լինի պարզ, բարդ թէ ածանցական: Օրինակ՝ կարդալ, խաղալ, կառավարել, թագաւորել բայերի հիմքերն են՝ կարդ (բայարմատ), խաղ (պարզ բառ), կառավար (բարդ բառ), թագաւոր (ածանցական բառ):)

Անորոշ գերբայը բայանուն է և հոլովւում է (գնալ, գնալու, գնալուց, գնալով, գնալում). ուստի և բայերի մասին խօսելիս սովորաբար վերցւում է անորոշ գերբայը: Միւս գերբայները կամ բայածական են, կամ բայական մակրայ:

#### ԱՆԿԱՏԱՐ ԴԵՐԲԱՅ

51.

Անկատար դերբայը բայիմաստի հետ ցոյց է տալիս և եղելութեան մէջ լինելը կամ մի կատարուող եղելութիւն, որ գեռ չի վերջացել, տեսում է յարածիդ: Վերջաւորութիւնն է ում և իս (սովորաբար ասւում է լիս): Օրինակ՝ խաղալ, գրել, խօսիլ լինում են խաղում, գրում, խօսում,—խաղալիս, գրելիս, խօսելիս:

Ում վերջաւորութեամբ անկատար գերբայը դրուելով եմ բայի Սահմանական ներկայ և անցեալ ժամանակների հետ՝ կազմում է բայերի Սահմանական 1, անկատար կամ բուն ներկայ և 2, անկատար անցեալ ժամանակներ: Առաջինը ցոյց է տալիս ներկայում (խօսելու վայրկեանին) կատարուող տեական եղելութիւն, իսկ երկրորդը՝ անցեալում կատարուող տեական եղելութիւն: Օրինակ՝

## Սահմանական

Ներկայ

Անկատար անցեալ

գնում եմ	գնում էի
գնում ես	գնում էիր
գնում է	գնում էր
գնում ենք	գնում էինք
գնում էք	գնում էք
գնում են	գնում էին

Այսպէս խոնարհում են բոլոր բայերը, բացի զալ, տալ, լալ, որոնց համար վերցում է լիս վերջաւորութեամբ անկատ. դերբայը՝ գալիս եմ, գալիս ես ելն. տալիս եմ, տալիս ես և այլն. լալիս եմ, լալիս ես, լալիս է ելն:

52.

## ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ

Ապառնի դերբայը բայիմաստի հետ ցոյց է տալիս և եղելութեան դեռ նոր կատարելի լինելը: Վերջաւորութիւնն է ու և իլք (սովորաբար ասում է լու, լիք): Օրինակ՝ գնալ, գրել, խօսիլ լինում են՝ գնալու, գըրելու, խօսելու,— գնալիք, գրելիք, խօսելիք:

Լու վերջաւորութեամբ ապառնի գերբայը եմ բայի հետ կազմում է Սահմանական եղանակի՝ 1, ապառնի ներկայ կամ բուն ապառնի և 2, ապառնի անցեալ ժամանակները: Առաջինը ցոյց է տալիս ներկայի (խօսելու վայրկեանի) նկատմամբ ապառնի գործողութիւն, իսկ երկրորդը՝ անցեալի նկատմամբ կատարուած եղելութիւն: Օրինակ՝ Օրինակ՝

## Սահմանական

Ապառնի

Ապառնի անցեալ

գնալու եմ	գնալու էի
գնալու ես	գնալու էիր
գնալու է	գնալու էր
գնալու ենք	գնալու էինք
գնալու էք	գնալու էք
գնալու են	գնալու էին

## ԱՆՑԵԱԼ ԴԵՐԲԱՅ

53.

Անցեալ դերբայը բայիմաստի հետ ցոյց է տալիս և եղելութեան կատարուած, վերջացած լինելը: Ունի երկու վերջաւորութիւն, վաղակատար՝ ել և յարակատար՝ ած: Օրինակ՝ գնացել, գնացած, նստել, նստած:

Երկու ձեռ ևս եմ բայի հետ կազմում են Սահմանական եղանակի՝ 1. վաղակատար ներկայ կամ լոկ վաղակատար և 2. վաղակատար անցեալ ապա 1. յարակատար ներկայ կամ լոկ յարակատար և 2. յարակատար անցեալ ժամանակները: Առաջինները ցոյց են տալիս ներկայի նըկատմամբ կատարուած եղելութիւն, իսկ երկրորդները՝ անցեալի նկատմամբ կատարուած եղելութիւն: Օրինակ.

## Սահմանական

Վաղակատար

Վաղակատար անցեալ

նստել եմ	նստել էի
նստել ես	նստել էիր
նստել է	նստել էր
նստել ենք	նստել էինք
նստել էք	նստել էք
նստել են	նստել էին

5

Յարակատար

Յարակատար անցեալ

նստած եմ	նստած էի
նստած ես	նստած էիր
նստած է	նստած էր
նստած ենք	նստած էինք
նստած էք	նստած էիք
նստած են	նստած էին

Վաղակատար և յարակատար ժամանակների իմաստի տարբերութիւնը հետևեալն է. յարակատար ժամանակները ցոյց են տալիս մի անցեալ եղելութիւն, որի հետևանքը իբրև զըռութիւն յարատեռում է մինչև խօսողի ներկան կամ մինչև մի անցեալ ժամանակակէտ, մինչդեռ վաղակատար ժամանակները պարզապէս յայտնում են ներկայի կամ մի անցեալ ժամանակակէտի նկատմամբ կատարուած եղելութիւն՝ առանց ուշ դարձնելու, թէ գործողութեան հետևանքն իբրև դրութիւն յարատեռում է թէ չէ: Օրինակ՝ Երեխան այսօր քննէլ է: — Այն, քննել է և այժմ էլ դեռ քնած է: Կան բայեր սակայն, որոնց այս երկու ժամանակներն անխտիր իրար տեղ բանում են:

## 54. ԵՆԹԱԿԱՑԱԿԱՆ ԴԵՐԲԱՅՑ

Ենթակայական դերբայը բայիմաստի հետ ցոյց է տալիս և անող կամ եղող լինելու գաղափար: Վերջաւորութիւնն է ող: Օրինակ՝ գնացող, կարդացող, խօսող=Ռվ որ գնում է, գնացել է կամ գնալու է: Նա որ կարդում է, կարդացել է կամ կարդալու է:

## 2. ԸՂՉԱԿԱՆ, ԵՆԹԱԴՐԱԿԱՆ, ՀԱՐԿԱԴՐԱԿԱՆ. 55.

Հղձական, Ենթադրական և Հարկադրական եղանակներն ունին միայն երկ'երկու ժամանակ՝ ապառնի և անցեալ: Ապառնին կարող է գործածուել և իբրև ներկայ:

Ըղձական եղանակի երկու ժամանակներն ևս կազմւում են առանձին վերջաւորութիւններով, որոնք աւելանում են լծորդ ձայնաւորների վրայ:

Ապառնու մէջ ելծորդը փոխւում է եզ. Յ-րդ դէմքի մէջ՝ է կամ ի, և յոզն. Յ-րդ դէմքի մէջ՝ է. իսկ անցեալի մէջ ե և ի լծորդներն երկուսն ևս դառնում են է:

Հետևեալ օրինակների մէջ կարելի է տեսնել վերջաւորութիւնները լծորդների հետ միասին, որոնք շղատառով և անջատ են տպուած:

## Ապառնի

Ա լծորդ	Ե լծորդ	Ի լծորդ
կարդ ամ	գը եմ	ծաղկ իմ
կարդ աս	գը ես	ծաղկ իս
կարդ այ	գը է, գը ի	ծաղկ ի
կարդ անք	գը ենք	ծաղկ ինք
կարդ աք	գը էք	ծաղկ իք
կարդ ան	գը են	ծաղկ ին

## Անցեալ

կարդ այի	գը էի	ծաղկ էի
կարդ այիր	գը էիր	ծաղկ էիր
կարդ ար	գը էր	ծաղկ էր
կարդ այինք	գը էինք	ծաղկ էինք
կարդ այիք	գը էիք	ծաղկ էիք
կարդ ային	գը էին	ծաղկ էին

Ապառնի ժամանակի մէջ ի լծորդը սովորաբար փոխւում է և լծորդի, բացի եզ. Յ-րդ դէմքից, ինչպէս՝ ծաղկիմ, ծաղկիս, ծաղկինք ելն. ձերի տեղ գործ են ածւում աւելի՝ ծաղկեմ, ծաղկես, ծաղկենք, ծաղկէք, ծաղկեն:

Ըղձական եղանակի պէս խոնարհուում են մի քանի բայի Սահմ. ներկայ և անկատ. անցեալ ժամանակները.

Կամ, կաս, կայ, կանք, կաք, կան,—կայի, կայիր, կար, կայինք, կայիք, կային:

Եմ, ես, է. ենք, էք, են,—էի, էիր, էր. էինք, էիք, էին: Այսպէս և Գիտեմ, գիտես, գիտէ և այլն: Արժեմ, արժես, արժէ են:

Ոնիմ, ունիս, ունի. ունինք, ունին,—ունէի, ունէիր, ունէր են: Այսպէս և խնդրեմ, կարծեմ, կարծես:

Ենթադրական և հարկադրական եղանակները կազմուում են ըղձականի վրայ աւելանալով՝ ենթադրականի համար կը եղանակիչը, իսկ հարկադրականի համար պիտի եղանակիչը, որի տեղ կարող է դրուել և պիտի է: Օրինակ՝ ենթադրական ապառնի՝ կը կարդամ, կը կարդաս, կը կարդայ և այլն: Անցեալ՝ կը կարդայի, կը կարդայիր, կը կարդար և այլն: Զարկադրա ապառնի՝ պիտի կարդամ, պիտի կարդաս, պիտի կարդայ և այլն: Անցեալ՝ պիտի կարդայի, պիտի կարդար և այլն:

Վերլուծութիւն:—Որոշել գերբայները և Սահմանական եղանակի գլխաւոր բաղադրեալ ժամանակներն ի նկատի ունենալով, որ եմ օժանդակը յաճախ 1. գերբայից առաջ է ընկնում, օրինակ՝ Նա հիմա մեզ մօտ է դարձ. 2. ուրիշ բառերով բաժանում է գերբայից, օրինակ՝ Ես էլ եմ ձեզ պէս զողում. 3. գեղչւում է, այսինքն դուրս է ընկնում. օրինակ՝ Զիւնն եկել (էր), զիզուել (էր), սար ու ձոր բանել էր:

Վերլուծութիւն:—Որոշել լծորդի ձերը՝ ի նկատի ունենալով, որ պիտի (պիտի է) եղանակիչը երբեմն ուրիշ բառերով բաժանում է խոնարհուող բայից, օրինակ՝ Նա պիտի այստեղ մեղ մօտ դայ:

### 3. ԱՆՑԵԱԼ ԿԱՏԱՐԵԱԼ ԵՒ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ 56.

Անցեալ կատարեալը սահմանական եղանակի մի անցեալ ժամանակ է, որ ցոյց է տալիս գլխաւորաբար վայրկենապէս անցած կատարուած եղելութիւն, կամ մի գործողութիւն, որ խօսողի ներկայութեամբ է կատարուել: Օրինակ՝ Եկայ, տեսայ, յաղթեցի: Նա այս բոպէիս գնաց:

Անցեալ կատարեալն ունի երեք տեսակ վարձաւորութիւն՝ 1. ի, 2. ա և 3. խառն ի, և ձայնաւորներով. ուստի և կազմուում են երեք խոնարհում: Համապատասխան ձեռվ կազմուում է և Հրամայական եղանակը:

Վերջաւորութիւններն աւելանում են մեծ մասամբ բայերի հիմքից ածանցուած մի ձեփ վրայ, որ կոչւում է բուն: Նել (Նիլ) և շել (շիլ) վերջացած բայերը միայն բնի ձեւ չունին, դրանց հիմքը ծառայում է և իբրև բուն, այսինքն վերջաւորութիւններն աւելանում են հիմքի վրայ:

Հետեւեալ օրինակների մէջ կարելի է տեսնել անցեալ կատարեալի և հրամայականի վերջաւորութիւնները բնի ածանցների հետ, որոնց մէջ գծիկներ են դրուած վերջաւորութիւններն ու ածանցները հիմքից անջատելու համար: Սկզբում դրուած է անորոշ գերբայը:

#### 1. Ի ԽՈՆԱՐՀՈՒՄ

Անորոշ ղերբայ

Անց. կատ.

Հրամ.

1. գն-ալ

գն-աց-ի

գն-ա

2. գն-աց-իր

գն-աց-իր

գն-ա

3. գն-աց

գն-աց-ինք

գն-աց-էր

4. գն-աց-իք

գն-աց-իք

գն-աց-ինք

2. գր-ել գր-եց-ի  
 գր-եց-իր գր-է, գր-իր, (գր-ի)  
 գր-եց  
 գր-եց-ինք  
 գր-եց-իք գր-եց-էք, գր-էք  
 գր-եց-ին
3. մորթ-ոտել մորթոտ-եց-ի  
 մորթոտ-եց-իր մորթոտ-է, մորթոտ-իր  
 մորթոտ-եց  
 մորթոտ-եց-ինք  
 մորթոտ-եց-իք մորթոտ-եց-էք, մորթոտ-էք  
 մորթոտ-եց-ին
4. գրու-եց-ի  
 գրու-եց-իր գրու-իր  
 գրու-եց  
 գրու-եց-ինք  
 գրու-եց-իք գրու-եց-էք, գրու-էք  
 գրու-եց-ին

Այսպէս խօնարհուում են

1. Գնալ բայի պէս՝ մնալ, խաղալ, կարգալ, որսալ,  
 կաղալ ևն,—այն բոլոր բայերը, որոնց հիմքի վրայ ան-  
 միջապէս աւելանում է ալ վերջը:

2. Գրել բայի պէս՝ կանչել, գործել, շարժել, պատ-  
 րաստել ևն,—այն բոլոր բայերը, որոնց հիմքի վրայ  
 աւելանում է անմիջապէս ել (իլ):

3. Մորթոտել բայի պէս՝ ջարդոտել, նստոտել,  
 կոտրատել. կտրատել, կտրտել, պատոտել ևն,—բոլոր  
 բազմապատկան բայերը, որոնք կազմւում են ուրիշ  
 բայերից՝ ել (իլ) վերջաւորութիւնից առաջ ստանալով  
 ոտ, ատ, ու ածանցները և ցոյց են տալիս եղելութեան  
 կրկնութիւն. ինչպէս՝ կոտրել՝ մի անգամ. կոտրտել՝ շատ  
 տեղից, շատ անգամ, շատ բան կոտրել:

4. Գրու-ել բայի պէս՝ ծեծուել, սպանուել, կոտը-  
 րուել, տեսնուել, կարդացուել ևն,—բոլոր կրատրական  
 բայերը, որոնք կազմւում են ուրիշ բայերից՝ ել (իլ) վեր-  
 ջից առաջ ստանալով ու ածանցը և ցոյց են տալիս վեր-  
 խաւորապէս այնպիսի գործողութիւն, որ բայի ենթական  
 ուրիշ առարկայից կրում, ստանում է իր վրայ: Օրինակ՝  
 սպանել սպանուել. բռնել, բռնուել:

Ալ, անալ, ենալ, վերջացած բայերից կրատրական  
 կազմելու ժամանակ ու ածանցից առաջ մտնում են աց,  
 եց. ինչպէս՝ կարդալ կարդացուել. գող-անալ, գող-  
 ացուել:

## 2. Ա ԽՈՆԱՐՀՈՒՄ

Անորոշ դերբայ	Անց. կատ.	Հրամ.
1. Չով-ան-ալ	գով-աց-այ	գով-աց-իր
	գով-աց-ար	
	գով-աց-աւ	
	գով-աց-անք	
	գով-աց-աք	գով-աց-էք
	գով-աց ան	
2. Մօտ-եց-ալ	մօտ-եց-այ	մօտ-եց-իր
	մօտ-եց-ար	
	մօտ-եց-աւ	
	մօտ-եց-անք	
	մօտ-եց-աք	մօտ-եց-էք
	մօտ-եց-ան	
3. Ծաղկ-իլ	ծաղկ-եց-այ	ծաղկ իր
	ծաղկ-եց-ար	
	ծաղկ-եց-աւ	
	ծաղկ-եց-անք	
	ծաղկ-եց-աք	ծաղկ-եց-էք
	ծաղկ-եց-ան	

<b>4.</b>	<b>Գրու-եց-այ</b>	
	<b>գրու-եց-ար</b>	<b>գրու-իր</b>
	<b>գրու-եց-աւ</b>	
	<b>գրու-եց-անք</b>	
	<b>գրու-եց-աք</b>	<b>գրու-եց-էք, գրու-էք</b>
	<b>գրու-եց-ան</b>	
<b>5.</b>	<b>հաս-ն-ել</b>	
	<b>հաս-այ</b>	
	<b>հաս-ար</b>	<b>հաս-իր</b>
	<b>հաս-աւ</b>	
	<b>հաս-անք</b>	
	<b>հաս-աք</b>	<b>հաս-էք</b>
	<b>հաս-ան</b>	
<b>6.</b>	<b>փախ-չ-ել</b>	
	<b>փախ-այ</b>	
	<b>փախ-ար</b>	<b>փախ-իր</b>
	<b>փախ-աւ</b>	
	<b>փախ-անք</b>	
	<b>փախ-աք</b>	<b>փախ-էք</b>
	<b>փախ-ան</b>	

Այսպէս խոնարհում են՝

**1.** Զովանալ բայի պէս՝ զոհանալ, զարմանալ, գողանալ, շատանալ, սեանալ և լն, — այն բոլոր բայերը, որոնց հիմքի և ալ վերջի մէջ մտնում է ան ածանցը:

**2.** Մօտենալ բայի պէս՝ վախենալ, ունենալ, ուզենալ և մի քանի ուրիշ բայեր, որոնց հիմքի և ալ վերջի մէջ մտնում է են ածանցը:

**3.** Ծաղկիլ բայի պէս՝ խօսիլ, դադարիլ, ծագիլ, աշխատիլ և լն, — այն բոլոր բայերը, որոնց հիմքի վրայ աւելանում է անմիջապէս իլ վերջը: — Այս բայերը սովորաբար գործ են ածւում ել լծորդով և գնում են ի խոնարհման տակ ըստ զրել բայի:

**4.** Գրու-իլ բայի պէս՝ բոլոր կրաւորական բայերը, որոնք սովորաբար գնում են ի խոնարհման տակ՝ ըստ զրումը ձևի:

**6.** Հասնել բայի պէս՝ գտնել, մտնել, իջնել, մեռնել (մեռնիլ) և լն, — այն բայերը, որոնց հիմքի և ել (իլ) վերջի մէջ մտնում է ն ածանցը: Այս ն ածանցի տեղ սակաւթիւ գրաբարից առած բայեր ան ունին՝ ուսանել, շիջանել, բեկանել, որոնցից մի քանին ունին և առանց ածանցի ձեռք՝ բեկել, շիջել, զիջել:

**6.** Փախչել (փախչիլ) բայի պէս՝ թռչել, կպչել, սառչել, դիպչել և լն, — այն բայերը, որոնց հիմքի և ել (իլ) վերջի մէջ մտնում է չ ածանցը:

**3.** Ի, Ե ԽՈՆԱՐՀՈՒՄ

Անորոշ զերբայ Անց. կատ. Հրամ.՝

**1.** Զարմ-ացն-ել զարմ-ացր-ի զարմ-ացր-իր զարմ-ացր-եց  
զարմ-ացր-ինք զարմ-ացր-իք զարմ-ացր-ին

**2.** Մօտ-եցն-ել մօտ-եցր-ի մօտ-եցր-իր մօտ-եցր-եց  
մօտ-եցր-ինք մօտ-եցր-ին մօտ-եցր-ինք

**3.** Թռ-ցն-ել թռ-ցր-ի թռ-ցր-իր թռ-ցր-եց  
թռ-ցր-ինք թռ-ցր-ին թռ-ցր-ինք

4.	<u>Մատ-ուցան-ել</u>	<u>մատ-ուց-ի</u>
	<u>մատ-ուց-իր</u>	(չունի)
	<u>մատ-ուց-եց</u>	
	<u>մատ-ուց-ինք</u>	
	<u>մատ ուց-իք</u>	<u>մատ-ուց-էք</u>
	<u>մատ-ուց-ին</u>	

Այսպէս խոնարհում են պատճառական բայերը, որոնց հիմքի և ել վերջաւորութեան մէջ մտնում են՝ ացն, եցն, ցն, ուցան ածանցները:

1. Զ ա ր մ ա ց ն ե լ բ ա յ ի պ է ս՝ կ ա ր դ ա ց ն ե լ, խաղացնել, շատացնել, շատացնել ելն, — որոնք կազմւում են ալ, անալ վերջացած բայերի հիմքից՝ կարդալ, խաղալ, շատանալ:

2. Մ օ տ ե ց ն ե լ բ ա յ ի պ է ս՝ ծ ա ղ կ ե ց ն ե լ, խմեցնել, վախեցնել ելն, — որոնք կազմւում են ել (իլ), ենալ վերջացած բայերի հիմքից՝ ծաղկել, խմել, վախենալ:

3. Թ ո ց ն ե լ բ ա յ ի պ է ս՝ փ ա խ ց ն ե լ, կպցնել, մ տ ց ն ե լ, հասցնել, հագցնել ելն, — որոնք կազմւում են չել (չիլ) և նել (նիլ) վերջացած բայերի հիմքից՝ փախչել (փախնել), կպչել (կպնել), մտնել, հասնել, հազնել:

4. Մ ա տ ու ց ա ն ե լ բ ա յ ի պ է ս գ ր ա բ ա ր ի ց ա ռ ա ծ ս ա կ ա ւ ա թ ի ւ բ ա յ ե ր՝ յ ա ր ու ց ա ն ե լ, ու ս ու ց ա ն ե լ, հ ա տ ու ց ա ն ե լ, կ ա ռ ու ց ա ն ե լ, զ ե կ ու ց ա ն ե լ:

Այս խոնարհման տակ գնում են նոյնպէս՝ դարձնել, (վեր) կացնել, անցնել (=անց կացնել), հարցնել, լցնել, որոնք ունին Անց. Կատ. դարձրի, դարձրիր, դարձրեց ելն. (վեր) կացրի ելն. հարցրի, լցրի ելն. Հրամ. դարձրնւ (վեր) կացրնւ, հարցրնւ, լցրնւ ելն.

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐ ԽՈՆԱՐՀՄԱՆ

### Սահմանական

#### Ներկայ

#### Անկատար անցեալ

գնում եմ

գնում էի

գնում ես

գնում էիր

գնում է

գնում էր

գնում ենք

գնում էինք

գնում էք

գնում էիք

գնում են

գնում էին

#### Ապանի

#### Ապանի անցեալ

գնալու եմ

գնալու էի

գնալու ես

գնալու էիր

գնալու է

գնալու էր

գնալու ենք

գնալու էինք

գնալու էք

գնալու էիք

գնալու են

գնալու էին

#### Վաղակատար

#### Վաղակատար անցեալ

գնացել եմ

գնացել էի

գնացել ես

գնացել էիր

գնացել է

գնացել էր

գնացել ենք

գնացել էինք

գնացել էք

գնացել էիք

գնացել են

գնացել էին

#### Ցարակատար

#### Ցարակատար անցեալ

գնացած եմ

գնացած էի

գնացած ես

գնացած էիր

գնացած է

գնացած էր

գնացած ենք

գնացած էինք

գնացած էք

գնացած էիք

գնացած են

գնացած էին

Անցեալ կատարեալ Հրամայական

գնացի  
գնացիր  
գնաց  
գնացինք  
գնացիք  
գնացին

գնացէք

Բղձական

Ապառնի  
գնամ  
գնաս  
գնայ  
գնանք  
գնաք  
գնան

Անցեալ  
գնայի  
գնայիր  
գնար  
գնայինք  
գնայիք  
գնային

Ենթադրական

Ապառնի  
կը գնամ  
կը գնաս  
կը գնայ  
կը գնանք  
կը գնաք  
կը գնան

կը գնայի  
կը գնայիր  
կը գնար  
կը գնայինք  
կը գնայիք  
կը գնային

Հարկադրական

Ապառնի  
պիտի գնամ  
պիտի գնաս  
պիտի գնայ  
պիտի գնանք  
պիտի գնաք  
պիտի գնան

պիտի գնայի  
պիտի գնայիր  
պիտի գնար  
պիտի գնայինք  
պիտի գնայիք  
պիտի գնային

Դերբայներ

Անորոշ՝ գնալ  
Անկատար՝ գնում, գնալիս  
Ապառնի՝ գնալու  
Վաղակատար՝ գնացել  
Յարակատար՝ գնացած

Անկանոն ԲԱՅԵՐ

Անկանոն բայերի անկանոնութիւնը միայն անցեալ կատարեալի, հրամայականի, անցեալ դերբայի, երբեմն և ենթակայական դերբայի մէջ է: Կրաւորականը սովորաբար բնից է կազմւում:

1. Գալ, Անց. կատ. եկայ, եկար, եկաւ, եկանք, եկաք, եկան: Հրամ. եկ, եկէք այլ և՝ արի, արիք: Անցեալ դեղք, եկած, եկել: Ենթ. դեղք, եկող:

2. Լալ, Անց. կատ. լացի, լացիր, լացաւ կամ լացեց. լացինք, լացիք, լացին: Հրամ. լաց կամ լացիր, լացէք: Անց. դեղք, լացած, լացել: Ենթ. դեղք, լացող:

4. Տալ, կրաւորական՝ տը ու ել: Անց. կատ. տուի, տուիր, տուաւ. տուինք, տուիք, տուին. կամ տուեցի, տուեցիր, տուեց. տուեցինք, տուեցիք, տուեցին. Հրամ. տուը, տուէք: Անց. դեղք. տուած, տուել: Ենթ. դեղք, տուող:

4. Ասել, Անց. կատ. ասացի, ասացիր, ասաց, ասացինք, ասացիք, ասացին: Փողովրդական ձեռվ՝ ասի, ասիր, ասաւ. ասինք, ասիք, ասին, այլ և կանոնաւոր՝ ասեցի, ասեցիր, ասեց. ասեցինք, ասեցիք, ասեցին: Հրամ. ասա, ասացէք, այլ և ասէք:

5. Բերել, Անց. կատ. բերի, բերիր, բերաւ. բերինք, բերիք, բերին: Այլ և կանոնաւոր՝ բերեցի, բերեցիր, բերեց. բերեցինք, բերեցիք, բերեցին: Հրամ. բերերէք:

6. Նստել (Նստիլ), 7. Ակսել, 8. Ծնել, կանոնաւոր ձեռի հետ ունին նաև Անց. կատ. նստայ, նստար, նստաւ. նստանք, նստաք, նստան: Սկսայ, սկսար, սկսաւ, և այն: Ծնայ, ծնար, ծնաւ և այն:

8. Ուտել Անց. կատ. կերայ, կերար, կերաւ, կը. Հրամ. կեր, կերէք: Անց. դեղք. կերած, կերել:

10. Բանալ, կրաւոր. բացուել: Անց կատ. բացի, բացիր, բացաւ կամ բացեց, բացինք, բացիք, բացին: Հրամ. բաց, բացէք. Անց. դերը. բացած, բացել: Ենթ. դերը. բացող:

11. Կենալ, կանոնաւոր ձևերի հետ ունի Անց. կատ. կացայ, կացար, կացաւ. կացանք, կացաք, կացան (կանոնաւոր՝ կեցայ, կեցար ևայլն): Հրամ. կաց, կացէք (կանոնաւոր՝ կեցիր, կեցէք): Անց. դերը. կացած, կացել: Ենթ. դերը. կացող:

12. Բառնալ, կրաւոր. բարձուել: Անց. կատ. բարձայ, բարձար, բարձաւ. բարձանք, բարձաք, բարձան: Հրամ. բարձիր, բարձէք: Անց. դերը. բարձած, բարձել: Ենթ. դերը. բարձող:

Այսպէս խոնարհում է և համբառնալ բայը:

13. Դառնալ, Անց. կատ. դարձայ, դարձար, դարձաւ. դարձանք, դարձաք, դարձան: Հրամ. դարձիր, դարձէք: Անց. դերը. դարձած, դարձել: Ենթ. դերը. դարձող:

14. Գարնել, Անց. կատ. գարկի, գարկիր, գարկաւ. գարկինք, գարկիք, գարկին: Հրամ. գարկ, գարկէք: Անց. դերը. գարկած, գարկել Ենթ. դերը. գարկող կամ գարնող: Կայ և գարկել բայը:

15. Անել, կրաւոր. անուել կամ արուել: Անց. կատ. արի, արիր, արաւ, արինք, արիք, արին. կամ արեցի, արեցիր, արեց, արեցինք, արեցիք, արեցին: Հրամ. արա, արէք: Անց. դերը. արած, արել:

16. Դնել, կրաւորական՝ դրուել: Անց կատ. դրի, դրիր, դրաւ, դրինք, դրիք, դրին. կամ դրեցի դրեցիր, դրեց են: Հրամ. դիր, դրէք: Անց. դերը. դրած, դրել:

17. Տանել, կրաւոր. տարուել: Անց. կատ. տարայ, տարար, տարաւ. տարանք, տարաք, տարան: Հրամ. տար, տարէք: Անց. դերը. տարած, տարել:

18. Ելնել, 19. Տեսնել, 20. (վեր) Կալնել,  
21. Առնել. Հրամ. ել, տես, (վեր) կալ, առ:

22. Թողնել, Անց. կատ. թողի, թողիր, թողաւ, թողինք, թողինք, թողին կամ թողեցի, թողեցիր, թողեց, թողեցինք, թողեցին: Հրամ. թող, թողէք:

23. Լինել, (լինիլ), Անց. կատ. եղայ, եղար, եղաւ, եղանք, եղան: Հրամ. եղիր, եղէք: Հղձական ապանի՝ լինիմ, լինիս, լինի, լինինք, լինիք, լինին: Անկ. դերը. լինում, լինելիս: Ապ. դերը. լինելու: Անց. դերը. եղած, եղել: Ենթ. դերը. եղող:

4. ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԵԱԼ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ 59.

Երկրորդական բաղադրեալ ժամանակները կազմւում են խոնարհուող լինել օժանդակ բայի ժամանակներից և անկատար, ապանի ու անցեալ դերբայներից. ուստի և նայելով բաղադրիչ գերբային՝ երեք կերպ են՝ կատարուող (անկատար), կատարուած (անցեալ) և կատարելի (ապանի):

Ներքեսում գրուած են երեք կերպի խոնարհման օրինակներ, որոնց մէջ առնուած են միայն եղակի 1-ին դէմքերը. Մի քանի ժամանակներ գործածական չեն կամ հազուադէպ են պատահում, ուստի գուրս են ձգուած:

1. Կատարուող կերպ. Սահմ. ներկայ՝ գնալիս եմ լինում: Անկ. անց. գնալիս էի լինում: Վաղ. գնալիս եմ եղել կամ գնում եմ եղել: Անց. կատ. գնալիս եղայ: Հղձ. ապանի և անց. գնալիս լինիմ կամ գնում լինիմ, գնալիս լինէի կամ գնում լինէի: Ենթ. ապանի և անց. գնալիս կը լինիմ կամ գնում կը լինիմ, գնալիս կը լինէի կամ գնում կը լինէի: Հարկ. ապ. և անց. գնալիս պիտի լինիմ, գնալիս պիտի լինէի: Անորոշ դերը. գնալիս լինել:

2. Կատարուած կերպ. Սահմ. ներկ. գնացած եմ լինում: Անկատ. անց. գնացած էի լինում: Վաղ. գնացած եմ եղել: Անց. կատ. գնացած եղայ: Հրամ. գնացած եղիր: Ըղձ. ապանի և անց. գնացած լինիմ, գնացած լինէի: Ենթ. ապ. և անց. գնացած կը լինիմ, գնացած կը լինէի: Հարկ. ապ. և անց. գնացած պիտի լինիմ, գնացած պիտի լինէի: Անորոշ դերք. գնացած լինել:

3. Կատարելի կերպ. Սահմ. ներկ. գնալու եմ լինում: Անկ. անց. գնալու էի լինում: Վաղ. գնալու եմ եղել: Վաղ. անց. գնալու էի եղել: Անց. կատ. գնալու եղայ: Ըղձ. ապ. և անց. գնալու լինիմ, գնալու լինէի: Ենթադր. ապ. և անց. գնալու կը լինիմ, գնալու կը լինէի: Հարկ. ապ. և անց. գնալու պիտի լինիմ, գնալու պիտի լինէի: Անորոշ դերք. գնալու լինել:

## 60. ԲԱՑԱՍԱԿԱՆ ԶԵՒԵՐԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Ոչ, չը, մի բառերը դրուելով բայի բայի ցոյց տուած դրական եղելութիւնը բացասում են, այսինքն հերքում, մերժում են: Օրինակ՝ դրական առայ. ասում, խօսում է. գնացէք. բացասական՝ շառայ. ոչ ասում է, ոչ խօսում. մի գնաք:

Ոչ առանձին գործածութեամբ կարող է դրուել բոլոր ձեւերի վրայ. Մի դրուում է միայն հրամայականի վրայ: Իսկ չը՝ մնացած բոլոր ձեւերի վրայ:

Բացասականի համար առանձին կազմութիւն ունին միայն Հրամայական և Ենթադրական եղանակները:

Հրամայական եղանակի բացասականը, որ կոչում է արգելական, կազմուում է մի մակրայով: Վերջառութիւններն են՝ եղ. Հ-րդ դէմքի համար ը, իսկ յոդն. Հ-րդ դէմքի համար ը: Երկու վերջառութիւնն ես դըր-

ւում են լծորդի վրայ: Ե լծորդը եզակիում սովորաբար դառնում է ի իսկ ի լծորդը կարող է ե-ի փոխուել: Օրինակ՝ մի կարդար մի գրիր (գրեր) մի կարդաք մի գրէք մի խօսիր (խօսեր) մի խօսէք

Եզակի և վերջառութիւնը սովորաբար փոխում է լտառի, որ և խօսակցական լեզուի մէջ յաճախ դուրս է ընկնում: Ե լծորդն այս դէպքում միշտ ի լծորդի է փոխում. ինչպէս՝ մի կարդալ, մի կարդա(յ). մի զրիլ, մի զրի: Ենթադրական եղանակի բացասականը կազմուում է եմ օժանդակով և անորոշ դերբայով: Բացասականը մակրայը դրուում է եմ բայի վրայ, որ սովորաբար դերբայից առաջ է ընկնում: Եզակի Յ-րդ դէմքը միշտ չի ձեռնի, Ֆերբայի ե լծորդը միշտ փոխում է ի ձայնաւորի: Օրինակ՝

## Ապանի

չեմ գնալ	չեմ գրիլ	չէի գնալ	չէի գրիլ
չես գնալ	չես գրիլ	չէիր գնալ	չէիր գրիլ
չի գնալ	չի գրիլ	չէր գնալ	չէր գրիլ
չենք գնալ	չենք գրիլ	չէինք գնալ	չէինք գրիլ
չէր գնալ	չէր գրիլ	չէիք գնալ	չէիք գրիլ
չեն գնալ	չեն գրիլ	չէին գնալ	չէին գրիլ

Անորոշ դերբայի և վերջառութիւնը խօսակցական, երբեմն և գրական լեզուի մէջ յաճախ դուրս է ընկնում: Օրինակ՝ չեմ զրի, չեմ զնա(յ).

Բաղադրեալ ժամանակների մէջ չը բացասականը դրուում է եմ օժանդակի վրայ, որ սովորաբար դերբայից առաջ է ընկնում. օրինակ՝ չեմ ասում, չես ասում, չէի ասում, չեմ ասել, չեմ ասելու ևն (Ասած չեմ լինում, ասած չեն լինում ևն):

Եթէ օժանդակը միայն լինիմ՝ է, բացասականը սովորաբար դրւում է լինիմ՝ օժանդակի վրայ. բայց կարող է և դերբայի վրայ դրուել, բացի անկատար գերբայից. Օրինակ՝ ասած չլինիմ, չասած լինիմ, զնալու չլինի, չզնալու լինի են:

Գալ, լալ, տալ բայերի Սահմ. անկատար ներկայի և անցեալի վերջի ստառը կարող է դրւու ընկնել, երբ օժանդակ բայն առաջ է դրւում. օրինակ՝ տալիս եմ, զալիս եմ, լալիս եմ, բայց չեմ տալի(ս), չեմ զալի(ս), չեմ լալի(ս). չեմ զալի(ս), չեր զալի(ս) են:

ԲԱՅԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ: 1. Բայերի վերջում, բացի հրամայականից, առ ձայնաւորից յետոյ դրւում է անձայն յ, օրինակ՝ գնայ, կը գնայ, թող գնայ: Զեմ գնալ=չեմ գնայ:

2. Հրամայական եղանակի վերջում անձայն յ չի գըրւում, և վերջին ձայնաւորի վրայ սովորաբար շեշտ է դրւում. օրինակ՝ (դու) կարդա, ասա, կարդացէք, ասացէք:

3. Մի՛ արգելականի վրայ միշտ շեշտ է դրւում, և երբ վերջի լ (ր) բազաձայնը դուրս է ընկնում, վերջից դրւում է անձայն յ. օրինակ՝ մի՛ կարդար, մի՛ կարդայ:

4. Է տառով գրւու մ են՝ էք վերջաւորութիւնը և ըղձական (ենթադր. և հարկադր.) եղանակի մէջ՝ ասէք, ասացէք. տեսնէք, տեսնէք, — տեսնէի, տեսնէիր, տեսնէր, տեսնէիք, տեսնէիք, տեսնէին:

5. Ենթադրականի կը եղանակիչը սովորաբար անջատ է դրւում կը կարդամ, կը կարդաս. բայց կան և միացած գրողներ՝ կը կարդամ, կը կարդաս. են: Ձայնաւորից առաջ գրւում է առանց ը-ի և միացած՝ կասեմ, կերեայ, կուտէ, կընկնի, կօղորմի, կոլորէ (արտասանւում է կօղորմի, կօլորէ):

6. Չը բացասականը սովորաբար գրւում է առանց ը-ի և միացած՝ ինչպէս չասաց, չեկաւ, չխօսեց, չգրեց:

## ԶՈՐՐՈՐԴ ՀԱՏՈՒԱԾ

### ՇԱՐԱՀԻՒՍՈՒԹԻՒՆ

61.

Շարահիւսութիւնը խօսքի կամ նախադասութեան ուսումնական ուսումնական ուսումնական է:

Խօսքի մասերը կամ նախադասութեան անդամներն են՝ ենթակայ, բայց-ստորոգեալ, խնդիր, պարագայ և վերադիր: Կրկնել §§ 14—23. 32—35. 37. 39. 40. 42

### ԲԱՌԵՐԻ ՍՏՈՐԱԴԱՍՈՒԹԻՒՆ

62.

Խօսքի մէջ մի բառ (գոյական, ածական, մակբայ) դառնալով լրացում մի ուրիշ բառի՝ իր կատարած պաշտօնով ստորադասուում է այն բառին, որի լրացումն է լինում:

Քերականօրէն գլխաւոր կամ գերադաս նշանակութիւն ունի միշտ լրացեալը և ոչ թէ լրացումը: Օրինակ՝ Մեր Տիգրանի գիրքը կորաւ խօսքի մէջ ամենից գերադասն է կորաւ բայց-ստորոգեալը, ապա զիրքը ենթական. սրա նկատմամբ ստորադաս է Տիգրանի վերադիրը, իսկ վերջինիս նկատմամբ մեր վերադիրը: Ուստի և եթէ խօսքի միջից բառեր դուրս ձգելու լինինք, առաջ մեր բառը դուրս կը ձգուի, յետոյ Տիգրանի, վերջը՝ զիրքը բառը: (Տես § 21):

Բայց միշտ ամենից գերադասն է խօսքի մէջ, ուստի և բայց կարելի չէ խօսքից դուրս ձգել, այլ կարելի է միայն զեղչներ և զօրութեամբ հասկանալ. օրինակ՝ Գայլը

ամալ օր կուզէ, գողը՝ մութ գիշեր, որ հասկացւում է գողը  
մութ գիշեր կուզէ:

Ամեն քերականօրէն ստորադաս բառ խօսողի տեսա-  
կեալից կարող է աւելի կարեոր արժէք ունենալ, քան իր  
գերադաս բառը: Այս դէպքում այսպիսի բառն առանձնա-  
պէս զօրեղ է շեշտում: Մ՛Նը Տիգրանի գիրքը կորաւ (և  
ոչ ուրիշ Տիգրանի): Մեր Տիգրանի գիրքը կորաւ (և ոչ  
ուրիշ): — Մեր Տիգրանի զիրքը կորաւ (և ոչ ուրիշ բանը):

### ԳՈՅԱԿԱՆ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹԻՒՆԸ

63.

#### 1. ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԵԱՄԲ կապակցութիւնն

Գոյական լրացումներն իրենց լրացեալի հետ կապակ-  
ցում են՝ համաձայնութեամբ, հոլովերով, հոլովելի հետ  
և կապերով:

1. Համաձայնութեամբ կապակցում են՝ ա)  
ենթական և բայը, բ) ենթական և գոյական ստորոգեալն  
ու ստորոգելիական վերադիրը, գ) բացայայտիչն ու բա-  
ցայայտեալը:

ա) Ենթական և բայը համաձայնում են թուով և դէմ-  
քով: Օրինակ՝ ես գնացի. Մենք գնացինք: Աշակերտը գնաց:  
Աշակերտները գնացին. Տիգրանն ու Արտաշէսը գնացին:  
ես և դու գնացինք: Դու և նա գնացիք: (ՏԵՌ § 20):

բ) Ենթական և ստորոգեալը կամ ստորոգելիական  
վերադիրը կարող են թուով համաձայնել: Օրինակ՝ Նրանք  
մեր լաւ աշակերտներն են: Նրանք մեր բարեկամներն են  
համարւում: Մասիսն ու Արագածը Այլարատեան դաշտի  
ամենաբարձր լեռներն են:

բ) Բացայայտիչը համաձայնում է բացայայտեալին

թուով և հոլովով: Օրինակ՝ Անուց, Բագրատունեաց մայ-  
րաքաղաքից, շատ հեռու չէ երազգաւորսը: (ՏԵՌ § 39, 3. ա.):

2. Հոլովներով, ինչպէս և հոլովերի հետ նաև  
կապերով, կապակցում է գոյականը իր լրացեալի հետ:  
Օրինակ՝ Մարդու հացով կապը: — Մարդու առանց հացի չի  
ապրիլ:

2. ՀՈԼՈՎՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՊԱՇՏՈՆԸ 64.

Հոլովերը ցոյց են տալիս այն զանազան յարաբե-  
րութիւնները, որոնցով գոյականը խօսքի մէջ իբրև լրա-  
ցում կապակցում է իր լրացեալի հետ:

1. Ուղղականը ցոյց է տալիս՝

ա) Ենթակայ, օրինակ՝ ձառերը ծաղկեցին:

բ) Մտորոգեալ և ստորոգելիական վերադիր, օրինակ՝  
Տիգրանն աշակերտ է: — Զուրը գոլորշի դարձաւ:

2. Կոչտկանը ցոյց է տալիս այն առարկան, ո-  
րին խօսողը դիմում է մի բան ասելու կամ հարցնելու հա-  
մար, օրինակ՝ ծիգրան, այսօր կը գաս մեզ մօտ:

3. Հայցականը (ուղղականի ձևով) ցոյց է տալիս՝

ա) Յանզման պարագան, այսինքն այն տեղը, ժա-  
մանակը, չափն ու քանակը և նպատակը, դէպի ուր կամ  
մինչև որը դիմում, ուղղում է գործողութիւնը: Օրինակ՝  
Նա տնից գնաց դպրոց: — Նա առաւօտից իրիկոն աշ-  
խատում է, ամբողջ օրը չի հանգստանում: — Նա հինգ քայլ  
հեռացաւ ինձնից: — Նա գնաց պատերազմ:

բ) Յանզման եւ կը ըստ իրը կամ իբրև իր (ինչ, բան)՝  
մտածուած ամեն առարկայ, լինի մարդ, կերպանի, թէ  
ուրիշ բան, որի վրայ, ինչպէս մի նպատակի, անցնում է  
անցողական բայի գործողութիւնը. օրինակ՝ Նա այրեց

թուղթը: Ամեն մարդ ունի իր ընկերը (իր ի՞նչը): (Իրի կրող խնդիր):

գ) Տեղը կամ ժամանակը, ուր կայ կամ լինում է մի բան. օրինակ՝ նա այժմ Թիֆլիս է (փոխանակ՝ Թիֆլիսում):— Նա շաբաթ օրը կը գայ: (Ներգոյականի նշանակութեամբ):

4. Աեռականը լինում է վերադիր (որոշող) մի անուան և ցոյց է տալիս զլխաւորապէս:

ա) Առարկան, անձն կամ իր, որ ունի մի բան, տէր է մի բանի, կամ որին պատկանում է մի բան. օրինակ Տիգրանի գիրքը: Թոշոնի փետուրները: Աստուծու բարութիւնը:

բ) Առարկան, որից առաջ է գալիս մի գործողութիւն, կամ մի բան իբրև արդիւնք մի գործողութեան. օրինակ՝ Տիգրանի նամակը (=Տիգրանի գրած, ուղարկած նամակը): Տիգրանի մուտքը, (մանելը):

գ) Առարկան, որին ինչպէս մի խնդրի վերաբերում է գործողութիւրը: Օրինակ՝ Տիեզերքի սաեղծողը: Հայրենիքի կարօտ:

դ) Ամբողջը, որից առնւում է մի մաս. օրինակ՝ ի՞նչ արժէ այս զինու շիշը: Մեր հինգը նրանց տասին արժեն:

ե) Ներթը, որից կազմուում, շինուում է մի բան. օրինակ՝ ծաղիկների փունջը:

զ) Այս տեղն ու ժամանակը, որ ուր կայ կամ կատարում է մի բան, և ընդհակառակն՝ ինչ որ մի տեղում ու ժամանակում կայ կամ կատարում է, օրինակ՝ Այս կարասի գինին,— այս զինու կարասը: Այս օրուայ հունձը,— Այս հնձի օրը:

է) Առարկայի յատկութիւնը, ինչպէս մի որակական

ածական. օրինակ՝ որսի շուն. հացի սեղան. ընթերցանութեան (կարդալու), գիրք. տանջանքի գործիք:

5) Տրականը ցոյց է տալիս:

ա) Յանզման առարկան, այսինքն այն անձը կամ իրը, որին իբրև մի նպատակի ուղղուում, դիմում, մօտենում, մատուցուում է մի բան, կամ որի համար, օգտին կամ վսասին կայ կամ լինում է մի բան: Օրինակ՝ Ես մօտեցայ սեղանին:— Երեխային հագուստ ենք կարում:— Նա գնաց ջրի:

բ) Յանզման եւ կըող անձը, կամ իբրև անձ (ում) մտածուած ամեն առարկայ, որի վրայ ինչպէս մի նպատակի՝ անցնում է անցողական բայերի գործողութիւնը. օրինակ՝ Դու ինձ վախեցրիք: Նա վիրաւորեց մի մարդու: Ես տեսայ Տիգրանին: Ճանապարհորդը նզովում էր քամուն: (Անձի կրող խնդիր,— հայցական տրականի ձեռվ):

4) Տեղը կամ ժամանակը, ուր կայ կամ լինում է մի բան. օրինակ՝ նա յունուար ամսին էր մեր տանը: (Ներգոյականի նշանակութեամբ):

6. Բացառականը ցոյց է տալիս զլխաւորապէս այն առարկան կամ տեղն ու ժամանակը, որից առնւում, հեռանում է կամ սկսում, ծագում, առաջ է գալիս մի բան կամ մի գործողութիւն, հակառակ հայցականի և տրականի, որոնք ցոյց են տալիս յանզման առարկան ու պարագան, դէպի որն ուղղուում, մօտենում, հասնում է մի բան: Օրինակ՝ Հեռացել եմ իմ մայրենի աշխարհից, սերա բարեկամք անջատած են ինձանից: Թշնամին յաղթուեց մեզնից (Ներգործող խնդիր): Նա ամօթից գլուխը կախ ձգեց:

7. Գործիականը ցոյց է տալիս զլխաւորապէս այն առարկան, որով կամ որի միջոցով, օգնութեամբ կամ միասնութեամբ կատարուում է մի բան. օրինակ՝ նա փայտը

սղոցով կտրեց: — Արիւնը արիմով չեն լուանալ, այլ ջրով կը լուանան: — Աստուծու ողորմովթեալը մեզ վնաս չհասաւ: — Մենք մեր ընկերներով գնացինք զբօնելու:

8. Ներգոյականը ցոյց է տալիս այն տեղն ու ժամանակը, կամ իբրև տեղ ու ժամանակ մտածուտծ առարկան, որի մէջը, ներսը կայ կամ լինում է մի բան. օրինակ՝ Զուկը ծովոամը կը մեծանայ: — Վարդանանց պատերազմը հինգերորդ դարում է տեղի ունեցել: — Մի օրում (որքան ժամանակում) կը գայ, կը հասնի նա:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ: — Որոշել, թէ որ զրյականը որ բառի լրացում է դարձել, որ հոլովով է դրուած և ինչ յարաբերութիւն է ցոյց տալիս հոլովը:

#### ԿԱՊԵՐԻ ՊԱՇՏՈՆԸ

65. (ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՑԵՏԱԴՐՈՒԹԻՒՆ)

Կապերը խօսքի մէջ մի գոյական իբրև ինդիր կապելով մի ուրիշ բառի հետ՝ ցոյց են տալիս որևէ յարաբերութիւն: (Տես § 23):

Կապերը նոյն պաշտօնն են կատարում, ինչ որ հոլովերը, ուստի յաճախ կապերն ու հոլովերը փոխանակում են իրար. օրինակ՝ Անէծքը դէպի անիծողը կը դառնայ — նոյն է թէ՝ Անէծքն անիծողին կը դառնայ:

Առանձնապէս պէտք է նկատել հետեւալների նշանակութիւնը:

1. Հստ նշանակում է համեմատ, համաձայն, օրինակ՝ դատել ըստ օրէնքի. վարուել ըստ սովորութեան:

2. Ի ցոյց է տալիս նպատակ՝ համար բառի իմաստով. օրինակ՝ յայտարարել ի գիտութիւն հասարակութեան:

3. Առ, դէպի նշանակում են ուղղութիւն, դիմում

դէպի մի անձ, իր կամ տեղ. օրինակ՝ սէր առ Աստուած: Գնաց դէպի Տիգրանը: Գնաց դէպի արևելք:

4. Հանդերձ ցոյց է տալիս միասնութիւն. օրինակ. Զօրավարն եկաւ իր զօրքերով հանդերձ (=իր զօրքերի հետ միասին):

ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ: — 1. Որոշել, թէ որ կապը որ հոլովի հետ է գործածում և ինչ յարաբերութիւն է ցոյց տալիս:

2. Որոշել կապով խնդիրները՝ նկատի ունենալով, որ կապերը, ինչպէս և կապական բառերը, իրենց գոյականի հետ առնելում են իբրև մի լրացում. օրինակ՝ 1. Նա մինչեւ իրիկուն աշխատում է, — մինչեւ իրիկուն (մինչև երր) ժամանակի պարագայ: — 3. Գիրքը սեղանի վրայ է, — սեղանի վրայ (ժրտեղ, մէր) տեղի պարագայ: 3. Նա առանց պատասխանելու հեռացաւ, — առանց պատասխանելու (բնչպէս) ձևի պարագայ:

#### Շ Ա Ղ Կ Ա Պ

66.

Շաղկապ ասւում են այն բառերը, որոնք կապում են կամ խօսքի հետ, կամ իրարուց անկախ բառեր միմեանց հետ: Շաղկապները լինում են՝ ստորադասական և համագասական:

#### ԽՕՍՔԵՐԻ ՍՏՈՐԱԴԱՍՈՒԹԻՒՆ

67.

Ստորադասական կոչւում են այն շաղկապները, որոնք բարդ ասացուածի մէջ զրուելով մի խօսքի սկըզբում՝ այդ խօսքն իբրև լրացում կապում են մի ուրիշ խօսքի հետ: Երկու խօսքից իբրև լրացում առնուած խօսքը կոչւում է երկրորդական խօսք. իսկ միւսը՝ զինաւոր խօսք: Օրինակ՝ Մի մոռանար երեք, որ դու մարդ ես — ասացուածի մէջ որ շաղկապով լու մարդ ես երկրորդական

խօսքն իբրև խնդիր կապւում է Մի՛ մոռանար եղթեք խօսքի  
հետ, որ գլխաւոր խօսքն է:

Ստորագասական շաղկապներն են՝ որ, թէ, եթէ, ո-  
րովհետեւ, մինչեւ, քան, զի:

Այս շաղկապները յաճախ միանում են միմեանց կամ  
ուրիշ բառերի հետ. ինչպէս՝ հենց որ, այնպէս որ, թէ որ,  
որպէս զի, մինչդեռ:

Իբրև ստորագասական շաղկապն կամ շաղկապական  
բառ գործ են ածւում նաև

1. Որ յարաբերական դերանունը, որ դրւում է զըլ-  
խաւոր խօսքի մէջ եղած մի անուան կամ դերանուան  
տեղ, որ կոչւում է յարաբերեալ:

2. Բոլոր հարցական բառերը, երբ առանց հարց-  
ման են: Այս դէպքում հարցական բառերից յետոյ կարե-  
լի է դնել որ բառը, որ կոչւում է թարմատար շաղկապն:  
Օրինակ՝ Ով (որ) տեսաւ՝ դարմացաւ: Ինչ (որ) ցանես,  
այն կը հնձես:

## 68. ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԽՕՍՔԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ.

Երկրորդական խօսքերը նոյն պաշտօններն են կա-  
տարում, ինչ որ լրացումները. այսինքն լինում են ենթա-  
կայ, ստորոգեալ, խնդիր, պարագայ և վերադիր: Այս  
պատճառով երկրորդական խօսքերի տեղ մեծ մասամբ կա-  
րելի է դնել լրացական բառերով (գոյական, ածական,  
մակրայ) արտայայտուած լրացումներ. այդ ժամանակ  
բարդ խօսքը վերածւում է պարզ խօսքի:

1. Ենթակայ խօսք. օրինակ՝ Ով որ խաղայ,  
նա կը կաղայ=խաղացողը կը կաղայ: Ամպերից երկում  
է, որ անձրեւ է զալիս=Ամպերից երկում է անձրեւ զալը:

2. Ստորոգեալ խօսք. օրինակ՝ ինչոք ես եղել եմ  
դարձեալ կը լինիմ:

3. Խնդիր խօսք. օրինակ՝ Ես իմացայ, որ նա  
տանը չէ=Ես իմացայ նրա տանը չլինելը:—Ինչ որ ցա-  
նես, այս կը հնձես=Յանածդդ կը հնձես:—Տուր նրան, որ  
կը խնդրէ=Տուր խնդրողն:

4. Պարագայական խօսք եր.

ա) Տեղի, օրինակ՝ Որտեղ մեղք լինի, ճանձն այն  
տեղ կը ժողովուի=Ճանձը մեղք եղած տեղը կը ժողովուի:

բ) Փամանակի, օրինակ՝ Հենց որ արեգակը ծաղի,  
ճանապարհ կընկնենք=Սրեգակը ծագելուն ալէս ճա-  
նապարհ կընկնենք:

գ) Զելի, բաղդատութեան, չափի եւ աստիճանի, —օրի-  
նակ՝ Դու, հայ զօրավար, գթա հայերուն, ինչպէս զթաց  
քո նախատիպ Վարդան (=զո նախատիպ Վարդանի պէս):  
—Քանի կարող էք մի խնայէք:—Որքան որ կուզէ՝ թող  
փչէ հիւսիս=Ուզածի շափ թող փչէ հիւսիս: Նա  
ւելի խօսում է, քան քան անում:

դ) Հետեւանքի, —օրինակ՝ Նա այնքան աշխատեց, որ  
ուժասպառ եղաւ:

ե) Պատճառի, —օրինակ՝ Նա դասի չի եկել, որովհե-  
տեւ հիւսնդ է (=հիւսնդ լինելու պատճառվ, համար):—

զ) Նպատակի, —օրինակ՝ Ես գնացի տուն, որ տեսնեմ  
նրան (=նրան տեսնելու):

է) Պայմանական, —օրինակ՝ Եթէ եղանակը լաւ լինի,  
կերթանք զրօննելու:

ը) Զիջական (հակառակ պատճառի), —օրինակ՝ Թէ-  
պէտ եւ շատ աշխատեց, բայց նպատակին չհասաւ:

5. Վերադիր խօսք երը որոշում են գլխաւոր  
խօսքի մէջ եղած մի գոյական, որի տեղ երկրորդական  
խօսքի սկզբում դրւում է մի յարաբերական դերանուն.

օրինակ՝ Այն մարդը, որ երջանիկ է, ժամերը չի համարում=երջանիկ մարդը ժամերը չի համարում։ Մենք, որ ունիք հոգի ու սիրտ քաջ, եկ անվախ ելնենք թշնամուառաջ=Մենք, հոգի ու քաջ սիրտ ունեցողներս, եկ անվախ ելնենք...

Երկրորդական և գլխաւոր խօսքերի կազմութեան համար ընդհանրապէս պէտք է նկատի ունենալ.

1. **Գոյական** (Ենթակայ, ստորոգեալ և խնդիր) խօսքերը կապակցում են որ, թէ, ով որ, ինչ որ բառերով. գլխաւոր խօսքի մէջ սովորաբար լինում է մի ցուցական դերանուն. Օրինակ՝ ինչ որ ցանես, այն կը ճնձես:

2. **Մակրայական** (պարագայական) խօսքերը կապակցում են որ, թէ, որտեղ, երը որ, քանի, մինչդեռ ինչպէս, որքան ելն բառերով. գլխաւոր խօսքի մէջ սովորաբար լինում է մի ցուցական մակրայ կամ մի պարագայական բառ ցուցականով՝ այստեղ, այն ժամանակ, այնպէս, այնքան են: Օր. ինչպէս կուզես, այնպէս արա:

3. **Ածական** (վերադիր) խօսքերը կապակցում են որ, ով որ, ինչ որ, ուր, երը յարաբերական դերանուններով, որոնք դրւում են գլխաւոր խօսքի մէջ եղած մի անուան կամ դերանուան փոխանակ, որ կոչւում է յարաբերեալ: Յարաբերեալը սովորաբար ունենում է մի ցուցական ածական: Օրինակ՝ Երանի այն մարդուն, որ սուրբ է սրտով:

ԿԵՏԱՐՈՒԹԻՒՆ—Երկրորդական խօսքերը գլխաւորից բաժնւում են ստորակէտով կամ բութով:

1. Երբ երկրորդական խօսքն առաջաղաս է, այսինքն գլխաւոր խօսքից առաջ է դրւում, գլխաւորի և երկրորդականի մէջ դրւում է ստորակէտ: Օրինակ՝ Ով որ փըքանայ, նա շուտ չքանայ:

2. Երբ երկրորդական խօսքը միջաղաս է, այսինքն ընկնում է գլխաւոր խօսքի մէջ, երկու կողմից ստորակէտերի մէջ է առնւում: Օրինակ՝ Մեր գիւղերում, երբ որ ամառը գալիս է, ոչ ոք պարապ չի մնում:

3. Երբ երկրորդական խօսքը վերջաղաս է, այսինքն գլխաւոր խօսքից յետոյ է գալիս, և սկսում է որևէ ստորագասական շաղկապով կամ յարաբերական բառով, գըլխաւորից բաժաննում է ստորակէտով: Օրինակ՝ Թող այդ քեզ համար լինի խրատ, որ էլ չցանես մանր կտաւնատ:

4. Երբ շաղկապը զեղչում է, և երկրորդական խօսքը գլխաւորի հետ կապւում է առանց շաղկապի, գլխաւորից սովորաբար բաժաննում է ըստմով: Օրինակ՝ Սաղնինչ իմանայ՝ (թէ) կաղն ինչ է: Մարդ կայ՝ (որ) հազար արժէ, մարդ կայ՝ (որ) մէկ չարժէ:

5. Յաճախ հարցական բառերով սկսուած երկրորդական խօսքերը գլխաւորից բաժաննում են բութով, մանաւանդ երբ գլխաւոր խօսքի մէջ չկայ մի ցուցական, որ ակնարկում է երկրորդական խօսքի իմաստին. ինչպէս՝ Ով տեսաւ՝ զարմացաւ: Ինչ կուզես՝ արա: Ինչ որ ասացի՞՝ Աստուած կատարի: Որտեղ օրէնքն է՝ գանգատ կանեմ: Ընտրի՞՝ ովը որ կուզես: Բայց՝ Ով տեսաւ, նա զարմացաւ: Ինչ կուզես, այն արա: Որը որ կուզես, այն ընտրի՞:

ՎԵՐԼՈՒԺՈՒԹԻՒՆ: — Որոշել գլխաւոր և երկրորդական խօսքերը, երկրորդական խօսքերի տեսակները իբրև ենթակայ, ինդիր և այն: և ստորագասական շաղկապները կամ շաղկապական բառերը: Օրինակ՝

1. Ով որ արմաւենի բուացնի, նրա պտղիցը չի ուժիլ: Մի բարդ ասացուած՝ կազմուած երկու խօսքից:

1-ին խօսք. Ով որ արմաւենի բուացնի: Երկրորդական խօսք, ինթակայ: Շաղկ. բ. ով որ:

2-րդ խօսք. Նրա պտղիցը չի ուժիլ: Գլխաւոր: խօսք:

2. Իմ կողմանէ կասես ձկնիվին, որ էլ չեմ ուզում տիկնութիւն առնել: Մի բարդ ասացուած՝ կազմուած երկու խօսքից:

1-ին խօսք. Իմ կողմանէ կասես ձկնիվին: Գլխաւոր խօսք:

2-րդ խօսք. Որ էլ չեմ ուզում տիկնութիւն առնել: Երկրորդական խօսք, խնդիր: Շաղկ. որ:

3. Փորբիկ վտակը, որ խոխոջելով իշնում էր սարի գլխից, անցնում էր խիտ անտառի միջով: Մի բարդ ասացուած՝ կազմուած երկու խօսքից:

1-ին խօսք. Փորբիկ վտակը անցնում էր խիտ անտառի միջով: Գլխաւոր խօսք:

2-րդ խօսք. Որ խոխոջելով իշնում էր սարի գլխից: Երկրորդ. խօսք, վերադիմ, միջադաս: Շաղկ. բ. որ, յաբարերական. յարաբերեալ՝ վտակը:

## 69. ՈՒՂՂԱԿԻ ԵՒ ԱՆՈՒՂՂԱԿԻ ԽՈՍՔԵՐ

Ուղղակի խօսք ասւում է ուրիշի խօսքը, երբ բառացի, ինչպէս ասել է ուրիշը, մէջ է բերւում իբրև խնդիր ասել, գըհլ, պատմել և այլ բայերի:

Ուղղակի խօսքից առաջ դրւում է միջակէտ, իսկ ամբողջ խօսքն առնուում է չակերաների մէջ. օրինակ՝ Նա ասաց եղբօրը. «Մի բարի խորհուրդ տուր քո բարեկամին»: Ես ասացի. «Տիգրան, գնա տուն»:

Որիշի խօսքն անուղղակի է դառնում, երբ բառացի մէջ չի բերւում, այլ միայն շուր տուած, բովանդակութիւնն է ասւում: Ուղղակի խօսքն անուղղակի խօսքի դարձնելիս առաջին և երկրորդ գէմքերը փոխւում են երրորդ գէմքի, և հրամայական եղանակը՝ ըղձականի, իսկ կոչականը դառնում է ենթակայ: Անուղղակի խօսքի սկըզբում դրւում է որ, թէ շաղկապներից մէկը: Օրինակ՝ վերեի ուղղակի խօսքերը հետևեալ ձեռվ անուղղակի խօսք են դառնում: Նա ասաց եղբօրը, որ մի բարի խորհուրդ տայ իր բարեկամին: Ես ասացի, որ Տիգրանը գնայ տուն:

ՎԵՐԼՈՒԹՈՒԹԻՒՆ: — 1. Որոշել ուղղակի և անուղղակի խօսքերը:

2. Ուղղակի խօսքերը դարձնել անուղղակի և ընդհակառակի:

## ՄԻՋԱՆԿԵԱԼ ԽՈՍՔԵՐ

Միջանկեալ ասւում է այն խօսքը, որ մտնում է ուրիշ խօսքերի մէջ՝ առանց քերականօրէն կապակցուելու նրանց հետ:

Միջանկեալ խօսք են դառնում:

1. Գլխաւոր խօսքը, (ասել, պատմել մտածել և լուսայերով), երբ մտնում է ուղղակի կամ անուղղակի խօսքի մէջ. օրինակ՝ Զգուշացէք, ասում եմ, զգուշացէք այդ մարդուց: — Տիգրանը, ասում են, դեռ չի վերադարձել իր ճանապարհորդութիւնից:

2. Գլխաւոր խօսքը, երբ մտնում է երկրորդական խօսքի մէջ. օրինակ՝ Նա վաղը, միւս օրը, կարելի է, կը գայ:

3. Այնպիսի խօսքեր, որ առանձին և ուրոյն իմաստունին և շատ երկրորդաբար միայն պարզում են ասացուածի միտքը. օրինակ՝ Ուրացող Վասակը (այսպէս է անուանում նրան Եղիշէն) միայն իւր անձի և օգտի համար էր մտածում: — Մի երկու ամիս ևս, և մենք կը բաժանուենք իրարից — ով գիտէ — գուցէ յաւիտեան:

ԿԵՏԱԴՐՈՒԹԻՒՆ: — Միջանկեալ խօսքերն առնեում են սառակէտերի կամ փակագծերի, երբեմն և գծերի մէջ: Տես վերևի օրինակները:

## 71. ԲԱՐԵՐԻ ԵՒ ԽՕՍՔԵՐԻ ՀԱՄԱԴԱՍՈՒԹԻՒՆ

Համադասական ասւում են այն շաղկապները, որոնք կապում են իրարուց անկախ, համազօր բառներ, կամ խօսքներ։ Օրինակ՝ Հայրն ու մայրը զնացին։ Ես գնացի, իսկ դու եկար։

Իրարուց անկախ, համազօր բառերը նոյն պաշտօնն են կատարում խօսքի մէջ և կոչում են համադաս բառներ կամ խօսքի բազմակի մասներ (բազմակի ենթակայ, բազմակի ստորոգեալ և այլն). Օրինակ՝ Առիւծը, վազը եւ աղջը կատաղի զազան են խօսքի մէջ սպիւծը, վազը եւ աղջը բազմակի ենթակայ են։

Իրարուց անկախ, համազօր խօսքերը կոչւում են համադաս խօսքներ կամ նախադասութիւններ. ինչպէս՝ Ես գնացի, իսկ դու եկար ասացուածի մէջ ես գնացի և դու եկար խօսքերը համադաս են։

Համադասական շաղկապներն են՝ ու, էլ, ես, այլ, բայց, սակայն, իսկ, կամ, բա, ապա, անգամ (իսկ), թէ... թէ, թէ, զո՞ւէ, զէ՞թ, մանաւանդ, այսինքն, արդ, ովեմն, ուստի, հետեւաբար և այն։

Այս շաղկապները յաճախ միանում են իրար հետ, կամ ուրիշ բառերի հետ. ինչպէս՝ Նակ, այլ և, ևս և, նոյնպէս և, նմանապէս և, ինչպէս և, ուրեմն և, հետեւաբար և, ուստի և, և այն, այն էլ, այլ ևս, մինչև իսկ, նոյն իսկ, մինչև անգամ, նամանաւանդ, և մանաւանդ, և կամ, կամ թէ, այսինքն թէ։

Համադասական շաղկապներն երկու տեսակ են՝ բաղնիւսական և ներհակական։

## 72. ԲԱՂՀԻԽՍԱԿԱՆ ԿՈՊԱԿՑՈՒԹԻՒՆ

Բաղնիւսական շաղկապներով կապւում են այն-

պիսի խօսքեր կամ բառեր, որոնք իմաստով իրարու համեմատ, համաձայն են, կամ միատեսակ բովանդակութիւն ունին։ Այս շաղկապները լինում են՝

1. Յաւելական՝ ա) եւ, ու, էլ, ես, նոյնպէս եւ, բացի այդ, նաեւ, թէ—թէ,—որոնցով կապուած երկրորդ խօսքը բովանդակութեամբ համարժէք է առաջինին և պարզաբար աւելանում է առաջինի վրայ. Օրինակ՝ Յորդ անձրէ եկաւ, եւ արտելը գուարթացան. բ) Մինչեւ անգամ, նոյն իսկ, իսկ, անգամ, մանաւանդ, եւ մանաւանդ աւելի եւ, յատկապէս, ոչ միայն—այլ եւ,—որոնցով կապուած երկրորդ խօսքը բովանդակութեամբ համեմատ է առաջինին, բայց աւելի արժէք ունի. ուստի և շեշտուելով է աւելանում։ Օրինակ՝ Դու ոչ միայն տուն ես գնացել, այլև և տեսել ես նրան։

2. Մամնական՝ մերթ—մերթ, երբեմն—երբեմն, մէկ, մէկ, մասամբ—մասամբ, նախ—ապա—յետոյ—վերջապէս, առաջին—երկրորդ—երրորդ և այլն,—որոնցով կապուած խօսքերը արտայատում են միենոյն ընդհանուր մտքի մասերը. Օրինակ՝ Ծովի ալիքները բամու բռնութեամբ մերթ բարձրանում, լեռնանում էին, մերթ իջնում, ահազին անդունդներ էին բանում։

3. Մեկնական՝ այսինքն, այսինքն թէ, իմն, —որոնցով կապուած երկրորդ խօսքով բացատրուում է առաջին խօսքի միտքը. օրինակ՝ Խօսքը մտածութեան արտայայտութիւնն է բայով, որի մէջ մի ստորոգումն է լինում, այսինքն մի առարկայի վերագրում է մի յատկանիշ։

4. Մակաբերական՝ ուստի, ուրեմն, հետեւաբար, ապա ուրեմն, —որոնցով կապուած երկրորդ խօսքն առաջինի եզրակացութիւնը, հետեւութիւնն է։ Օրինակ՝ Դուքս յանցանքդ խոստովանեցիր. ուստի ես ներում եմ քեզ։

Երկրորդ խօսքը դառնում է զլխաւոր խօսք, իսկ ա-

սաջինը՝ երկրորդական պատճառական խօսք, երբ սկզբից դրւում է որովհետեւ շաղկապը, օրինակ՝ Որովհետև գուքո յանցանքդ խոստովանեցիր, ուստի (կամ այդ պատճառով) ես ներում եմ քեզ:

### 73. 2. ՆԵՐՀԱԿԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹԻՒՆ

Ներհակական շաղկապներով կապակցւում են այնպիսի համազօր և անկախ խօսքեր, երբեմ և բառեր, ուրոնք բովանդակութեամբ իրար հակառակ կամ անհամեմատ են: Լինում են:

1. **Ժխտական՝** ոչ թէ—այլ (հապա),—եւ ոչ թէ,— երկրորդ խօսքով մերժւում, վերացւում է առաջին խօսքի բովանդակութիւնը, կամ ընդհակառակն. օրինակ՝ Դու ոչ թէ պիտի խաղաս, այլ պարապես: Դու պիտի պարապես, և ոչ թէ խաղաս:

2. **Տըռհական (բաժանական՝)** կնմ—կամ—կամ, որով կապուած խօսքերը փոխադարձ ժխտական են, այսինքն եթէ մէկն ընդունւում է, միւսը կամ միւսները հերքւում են: Օրինակ՝ Դու կամ պիտի պարապես, կամ գնաս զբունելու:

Եթէ տրոհական խօսքերը հարցական են կամ ենթադրութեամբ են ասւում, կապում են թէ շաղկապով. օրինակ՝ Դու դասդ պիտի սովորես, թէ պիտի գնաս զբունելու:

Կամ շաղկապն երկու բառի, երբեմ և երկու խօսքի մէջ նշանակում է՝ ուրիշ բառով, այլապէս, և մեկնական նշանակութիւն ունի. օրինակ՝ Երևանը գտնւում է Զանգուկամ Հրազդան գետի վրայ:

3. **Մահմանափակող՝** բայց, սակայն, բայց եւ այսպէս, բայց դարձեալ, բայց միայն, միայն, այնուամենայ-

նիւ և այն, որոնցով կապուած խօսքն առաջինին հակառակ մակաբերական է, կամ առաջին խօսքին մի հակադրութիւն աւելացնելով՝ սահմանափակում է նրա բովանդակութիւնը և նրանից սպասած հետեւութեան առաջն առնում է: Օրինակ՝ Դուքո յանցանքդ խոստովանեցիր, բայց ես չեմ ներում քեզ: (Սպասած հետեւութիւնն է՝ ուստի ես ներում եմ քեզ):

Առաջին խօսքի մէջ կարող է դրուել մի հաստատական եղանակական մակրայ, կամ նոյն իմաստով մի խօսք՝ արդարեւ, իրաւ, շատ էլ, իսկապէս, իրաւ է և այն: Օրինակ՝ Նա, իրաւ է, մեզ կողոպտում է, բայց դարձեալ չենք կարող մերժել նրա բարեկամութիւնը:

Երկրորդ խօսքը դառնում է գլխաւոր խօսք, իսկ առաջինը՝ երկրորդական զիջական խօսք, երբ սկզբից դըրւում է թէպէտ եւ, թէ եւ շաղկապը: Օրինակ՝ Թէպէտ և դուքո յանցանքդ խոստովանեցիր, բայց ես չեմ ներում քեզ:

4. **Հակադրական՝** իսկ, բա, հապա, ապա թէ ոչ թէ չէ, — որոնցով կապուած երկրորդ խօսքը լոկ հակադրում, կամ հանդիպադրում է առաջինին իր տարբեր կամ հակառակ նշանակութեամբ, առանց սակայն ժըլտելու կամ սահմանափակելու նրա նշանակութիւնը: Օրինակ՝ Ես գնացի, իսկ դու եկար: Այրարատեան դաշտի հարաւային կողմից սպիտակափառ Մասին է բարձրանում, իսկ հիւսիսային կողմից՝ քառագագաթ Արագածը: Մարդ պէտք է միշտ աշխատի յառաջադիմել, ապա թէ ոչ հեշտութեամբ կը յետադիմի:

ԿԵՏԱԴՐՈՒԹԻՒՆ.— **Համագաս բառերի** կամ խօսքի բազմակի մասերի մէջ, կապուած լինին շաղկապով թէ առանց շաղկապի, դրւում է ստորակէտ: Համագաս բառերից վերջինը սովորաբար կապում է եւ, ու շաղկապով, որից ա-

ուայ ստորակէտ չի դըւռւմ: Օրինակ՝ Առիւծը, վագրը և  
արջը կատաղի գազան են:

Համադաս խօսքերի մէջ, եթէ կարճ են, դրւում է ստորակէտ. օրինակ՝ Եկայ, տեսայ, լաղթեցի:

Համագաս խօսքերի մէջ միջակէտ է դրւում.

1. ԵՐԲ բաւական երկար են, կամ միջի դադարն երկար է:

2. Երբ համադաս խօսքերն ունին երկրորդական խօսքեր, որոնք ստորակէտով են բաժանվում: Օրինակ՝ Արելմայր մտաւ, բայց անտառում դեռ լոյս է. օղը ջինջ է և թափանցիկ. Թռչունները շատախօսութեամբ ծլվում են. խոտն ուրախ փայլում է զմրուխտի փայլով:—Ցածը նստիր, որ բարձրանաս. բարձր մի նստիր, որ ցածրանաս:

Եւ ու շաղկապներից առաջ ստորակէտ չի դրւում, եթէ  
երկու համագաս խօսքի ենթական նոյն է։ Բայց երբ  
ենթական փոխւում է, կամ եւ, ու կրկնւում են բոլոր  
համագաս խօսքերի կամ բառերի սկզբում, եւ, ու շաղ-  
կապներից առաջ ևս դրւում է ստորակէտ։ Օրինակ՝ Աշտա-  
րակներից մէկի գլխին նստած է ահագին, սև արծիւը եւ  
լուռ նայում է գէպի խորին անդունդը։ Նա նստած է  
անշարժ, եւ նրա սրատես աչքերը որոնում են ձորի խո-  
րութեան մէջ ցանկալի որսու—

Եւ զուր տեղը ես տանջւում եմ, եւ յուզւում եմ,  
եւ դողում։

Եւ միւսիայն թղթի վրայ անմիտ կերպով խազխազում.

Բնած ծաղրում են, ու ամօթու կարսրում են իմ այտեր։  
Վերևուիծութիւն։—Որոշել համադաս բառերը կամ խօսքի բազ-  
մակի մասերը՝ նկատի ունենալով, որ բազմակի մասեր լինում  
են միայն համանման իմաստով լրացումները։ Օրինակ՝ Գիրքն  
աշակերտին տուի խօսքի մէջ երկու խնդիր կայ՝ զիրքը, աշակերտին.  
բայց գրանք բազմակի մասեր չեն. որովհետեւ զիրքը ցոյց է տա-

լիս, թէ ինչ տուի (կըող խնդիր). Իսկ աշակերտին ցոյց է տալիս, թէ ում տուի (բնութեան խնդիր): Նոյնպէս բազմակի մասեր չեն Մեր այս երկու գեղեցիկ ծառերը չորացան խօսքի մէջ մեր, այս, երկու, գեղեցիկ բառերը, որ ծառերը բառի վերադիրներն են. որովհետև մեր ցոյց է տալիս, թէ ծառերն ումն են. այս ցուցական է. երկու՝ թուական, գեղեցիկ՝ որակական: Բայց եթէ ասենք՝ զիրքը, տետրակն ու մատիտը առւի աշակերտին, զիրքը, տետրակն ու մատիտը բազմակի մասեր են, որովհետև երեք բառն էլ ցոյց են տալիս, թէ ինչ տուի (բազմակի կըող խնդիր): Նոյնպէս՝ Մեր, ձեր և նրանց ծառերը չորացան խօսքի մէջ մեր, ձեր և նրանց բազմակի մասեր են (բազմակի վերադիր):

ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ՝—ՌԱՊԵՏ համադաս ԽօՍՔԵՎՈՐ և ՆՐԱՆց կապակցութիւնը։ ՕՐԻՆակ՝

Արեւը մայր մտաւ, բայց անտառում՝ դեռ լոյս է։ Երկու համազաս  
խօսք։

### **1-ին խօսք. Արեւը մայր մտաւ:**

2-րդ խօսք. Բայց անառում գիտ լոյս է։ Շաղկ. բայց, սահմանափակող։



ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ԲԱՌԱՑՈՒՑԱԿ

Յ-ով գրուող բառեր

Ակօս.	Թօշնել.	Մօլուք.
Աղօթք.	Իրօք.	Յօդ, յօդուած,
Աղօտ.	Լօշ.	Յօժար.
Ամօթ.	Խելօք.	Յօնք.
Անօթ.	Խօսք.	Յօշոտել.
Անօթի.	Մանօթ.	Յօրանջել.
Առաւօտ.	Ծղօտ.	Յօրինել
Առօք-փառօք.	Կարծեօք.	Նախօրօք.
Արդեօք.	Կարճառօտ.	Նարօտ.
Արտօնութիւն.	Կարօտ.	Նօր, անօրսր.
Արտօռ,	Կրօն.	Շօշափել.
Արօտ.	Կօշիկ.	Ոսկեզօծ.
Արօր.	Համառօտ.	Պաշտօն.
Բօթ.	Հետազոտել.	Պոշ.
Գործօն.	Հզօր.	Պողոս.
Գօտի.	Հօտ (ոչխարհների).	Սօս, սօսի,
Դրօշ.	Հօտաղ.	Սօսափիւն.
Եղօր (եղբայր).	Հօրոտ-մօրոտ	Սօսիւն.
Եօթն.	Հօր (հայր),	Վաղօրօք.
Զբուանք.	Զօն.	Վառօդ.
Զգօն.	Հօղանջել.	Տօթ,
Զօդ.	Ճօճ.	Տօն.
Զօր, զօրք.	Մօտ.	Ճօր.
Թնդանօթ.	Մօր (մայր.)	Քօդ.
Թօթափին.	Մօր, Մեծամօր.	Օրօրել:
Թօն.		

Ե-ով գրուող բառեր.

Ախտաժէտ.	Անէծք.	Ապաւէն.
Աղէտ.	Անշէջ.	Առնէտ.
Աղուէս.	Անվրէպ.	Ասպարէզ.
Ամէն (լինի).	Անօրէն.	Արկահէզ.

Բղէդ.	Ծովահէն.
Բուէճ.	Կէս, կէսօր.
Գէթ.	Կէտ.
Գէշ (լէշ).	Կրկէս.
Գէշ, (գէշութիւն,	Հակամէտ.
գէշանալ.	Հանդէպ,
Գէջ.	Հանդէս.
Գէս.	Հէզ.
Գէր, գէրութիւն,	Հըաւէր.
գէրանալ.	Հրէշ.
Գոմէշ.	Զէթ.
Գէզ.	Մէգ.
Գէմ, դէմք,	Մէղ.
Գէպ, գէպի.	Մէջ.
Գէպք.	Մողէս.
Գէս, դէն.	Յաւէտ.
Գէտ.	Նուէր.
Եղէցն.	Շաւէն.
Երէց.	Շէկ, շէկութիւն.
Զէն, գէնը.	Շէն.
Թէկուդ.	Շրէշ.
Թէպէտ.	Պատճէն.
Ժապաւէն.	Պատնէշ.
Լէշ.	Պատուէր.
Խէթ.	Պարէն.
Խէժ.	Պարտէզ.
Խէզ.	Պէս
Ծէս.	Պէտ, պէտք, սակա- դիր:

Յ-ով սկսուող բառեր

Յագենալ, անյադ.	Յաճախ.	Յանդ.
Յախճապակ.	Յամառ.	Յանդիման.
Յականէ, յանուանէ.	Յամրաքայլ.	Յանդիմանել
Յակինթ.	Յայնժամ.	Յանդուգն.
Յաղթել.	Յայտնի.	Յանկարծ.

ւապէտ, պէտքա-  
կան.

Պնակալէզ.

Ջրվէժ.

Մէգ.

Մէր (սիրել).

Մտէպ.

Վէճ.

Վէպ.

Վէր գալ, վէր ընկնել

Վէրք.

Վրէժ, վրէժինղիր.

Տգէտ.

Տէգ.

Տէր, տէրութիւն, տէ-  
րունական.

Տնօրէն, տնօրէնու-

թիւն.

Փէշ.

Փոխարէն.

Թարտէզ.

Քէն.

Օրէն, օրէնք, օրէնս-  
դիր:

Յանձն առնել,	Յաւելուած.	Յոխորտալ.
յանձնել.	Յաւէտ.	Յոյզ, յուզել.
Յանցանք.	Յաւիտեան.	Յոյժ.
Յապաղել.	Յաւերժ.	Յոյն.
Յաջող.	Յափշտակել.	Յոյս, Յուսիկ.
Յաջորդ.	Յեղաշոջել.	Յոպոպ.
Յառաջ.	Յեղափոխուել.	Յովազ.
Յառել.	Յեղյեղուկ.	Յորդ.
Յառնել, յարեաւ.	Յենարան.	Յորդորել.
Յասմիկ.	Յետ.	Յորձանք.
Յատակ.	Յետին.	Յուլիս.
Յատուկ.	Յերիւրել.	Յուղարկաւորոթիւն.
Յարատե.	Յիմար.	Յունիս.
Յարակից.	Յիշատակ, յիշել.	Յունուար.
Յարգել.	Յիսուն.	Յուշիկ, յուշաբար.
Յարդ.	Յիրաւ.	Յստակ.
Յարդարել.	Յղանալ.	Յօդ, յօդուած.
Յարի.	Յղել.	Յօժար.
Յարկ, վերնաւ-	Յղփանալ.	Յօնք.
յարկ.	Յորելեան.	Յօշոտել.
Յարձակուել.	Յոգնակի.	Յօրանջել.
Յարմար.	Յոգնել.	Յօրինել.
Յարութիւն.	Յոգոց (յոգւոց	
Յաւակնութիւն.	հանել.)	

2013 2259

ՀՀ Ազգային գրադարան



NL0061677

